Գյուղի եկեղեցին վիմագրերով աչքի չի ընկնում: Թ. Թորամանյանը նշում է, որ «արձանագրության անընթեռնելի հետքեր կան թափված հարավային պատի վրայի պատուհանին մեջ դրված քարերեն մեկուն վրա, որոնց ձևը 10-րդ դարու տառերու ձևը ունին»²²: Մեր այցի ժամանակ մենք այն չտեսանք, քանի որ վերակառուցման ժամանակ քարը, հավանաբար, կորստյան է մատնվել: Փոխարենը եկեղեցու հյուսիսային պատի արևմտյան մասում նկատեցին մի առանձին քարի վրա պահպանված քառատող արձանագրության հատված:

31*. Ս. ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, արտաքուստ, 4 տող.



ԵՍ ՎԵ / ՍՍ Ս / ԴՐԲԵ / ԲԱՐ:

²² Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, 2013, էջ 209:

ՊԵՄՁԱՇԵՆ

Պենզաշենը հնագույն բնակավայր է. գյուղի շրջակայքում կան բազմաթիվ հեթանոսական դամբարաններ, իսկ հարավ-արևելքում բլրի վրա, ամրոց: Հարուստ է նաև միջնադարյան հուշարձաններով.

Գյուղամիջի եկեղեցի. Ներքուստ և արտաքուստ խաչաձև գմբեթավոր եկեղեցի է, իր ներքին բաժանումներով և ձևավորմամբ՝ եզակի: Ճարտարապետական բոլոր հատկանիշները (ատամնավոր քիվ, բուսական ու երկրաչափական զարդանոտիվներով լուսամուտի պսակներ, շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ և այլն) վկայում են, որ շինված է VII դարից առաջ: Արևմտյան մուտքի ճակատը զարդարված է բարձրաքանդակով, որի վրա պատկերված են Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին և նրանց հովանավորող հրեշտակներ: Եկեղեցու որմերին պահպանվել են վարպետների բազմաթիվ նշաններ: Հետագայում կցել են նաև մի այլ եկեղեցի. այժմ բոլոր կողմերից շրջափակված է բնակելի շենքերով և անհարմար է ուսումնասիրելու համար:

Եկեղեցին հիշվում է Ս. Առաքելոց անունով:


Մակարավանք. Գտնվում է գյուղից հարավ, մոտ երկու կիլոմետր հեռու, եղել է գմբեթավոր եկեղեցի. շինված 1001 թ.: Հետագայում արևմտյան կողմում ավելացվել է գավիթ. այժմ երկուսն էլ կիսավեր են:

Ջորավորաց եկեղեցի. Գտնվում է գյուղից հարավ-արևմուտք, մոտ երկու կիլոմետր հեռու, կենտրոնագմբեթ հորինվածքով շենք է: Տևական ժամանակ եկեղեցու անունը անհայտ է մնացել: Պարզվում է՝ այն կոչվել է Ջորավոր-Ջորավորաց: Գրականության մեջ համարվել է XII-XIII դդ. շենք, որը 1036 թ. արդեն կանգուն էր:

Հնում, ըստ երևույթին, եկեղեցու մոտ եղել է փոքր գյուղ, որից մնացել են տնատեղերի և բակերի մնացորդներ: Եկեղեցու մոտ եղել է նաև մի բարձր աշտարակ՝ ներքին աստիճաններով, իսկ 200 մ դեպի արևմուտք մնում է մի մեծ որմնափակ խաչքարի պատվանդանն ու խաչի բեկորը: Ըստ արձանագրության՝ այն կանգնեցված է 1036 թ., ի բարեխոսություն Ապլղարիք իշխանի, որը բազմաթիվ նվերներով պայծառացրել է եկեղեցին:

Թ. Թորամանյանն իր ճանապարհորդական նոթերում քանիցս անդրադարձել է իր ժամանակ Մահմուդջուղ անունը կրող գյուղի հուշարձաններին ու գերեզմանոցներին՝ նշելով հետևյալը. «Մահմուտ-ճուկ գյուղին արևելյան կողմը հնագույն մի գերեզմանոց կա, ուր այժմ ալ գյուղացիք իրենց մեռելները կթաղեն. այս գերեզմանոցն իր վրա ցույց կուտա շատ խոր հնության նշաններ, բացի այն, որ կան հին խաչքարեր և 13-14-րդ դարերու արձանագրությամբ գերեզմանաքարեր»²³: Տապանագրերից մեկը, որը գտնվում է Թ. Թորամանյանի նշած «անանուն» մատուռի արևելյան կողմում, մենք չենք տեսել, ըստ այդմ էլ օգտվեցինք նրա հրատարակությունից:

32*. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ. հարավային խաչաթևում դրված խաչքարի բեկորին, 1 տող.



...Ս ԽԱԹՈՒՆ:

23 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, էջ 77:

Ա Ք Ա Դ Ք



Ա Դ

Ծանոթ. Եկեղեցու որմերին առկա են վարպետների տարածև նշաններ. որոնցից մի քանիսը հանդիպում են բազմաթիվ այլ հուշարձաններում: Առկա են նաև Ա և Դ գլխատառերը, որոնք, ըստ ամենայնի, կառուցող վարպետների անվան սկզբնատառերն են:

34. ՄԱԿԱՐԱՎԱՆՔ. հարավարևելյան ավանդատան մուտքի վերնամասում, 13 տող.

ՆԾԹՈՒԱԿԱՆՈՒԹԵ
ՈՑԻՆԱՅՐԱԳԵՏՈՒ/
ԱՐԳՍԻՆԱՈՅԿԱ-
ԵԻԻԹԱԳԱԴՈՐՈՒԹԵ
ՆԱՏԱՆՆԱԿԻԵՍՍԱԿԱԿ
ՏՈՆԻՍՔՎԵՐՈՐԴՍԵՒ "Ա Ս Ս Ս"
ՔՎԵՐՈՐԴԻՍՆԻՆԵՑԱՔՉՎԱՆՔՍԻ
ԿՈՐԴՈՅԵԻՉԵԿԵՂԵՑԻՔՍՍԱՄ
ԵՆԱՂԱԳԱԻՔ ՀՆԻԲԱՐԷԽԱԻՍՈՒԹԻԻՆ
ՄԵՉԵԻԱՄԵՆԱՅՆՆԱԻԱՏԱՑԷԼՈՑ
ԵԻԿԻՍԱԻՐԵԱԻՔՍՓՈՒԷՑԱՔԵԻԵՍ
ԱՆԲԱԽՏԴԱԻԻԹՈՐԶԳՐԵՑԻՉՅԻ
ՇԱՏԱԿՍԵԻ

:ՆԾ: (1001) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵՄԱՆ ՀԱՅԻՈՑ,
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍԻ/ԱՐԳՍԻ
ՀԱՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻԻ/ԵԻ Ի
ԹԱԳԱԴՈՐՈՒԹԵՄԱՆ ԳԱԳԿԱԻ/ՇԱՐԱՆՇԱՐԻ,
ԵՍ՝ ՍԱՀԱԿ ... ԴԱՆԻ/ՏՈՆԻՍ ՔՎԵՐՈՐԴԻՍ ԵԻ... /
ՔՎԵՐՈՐԴԻՍ, ՇԻՆԵՑԱՔ ՉՎԱՆՔՍ/ԿՈՐԴՈՅ
ԵԻ ՉԵԿԵՂԵՑԻՔՍ ԱՄԻ/ԵՆ ԱՂԱԳԱԻՔ ՇԵՆ Ի
ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹԻԻՆ/ՄԵՉ ԵԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱԻԱՏԱՑԷԼՈՑ / ԵԻ ԿԻՍԱԻՐԵԱ Ի ՔՍ
ՓՈՒԽԵՑԱՔ ԵԻ ԵՍ / ԱՆԲԱԽՏ ԴԱԻԹ,
ՈՐ ԳՐԵՑԻ ԶՅԻ/ՇԱՏԱԿՍ ԵԻ...



Դրատ. Մխիթարյանց, Տեղագրութիւն, 98 (պակասավոր),
Ալիշան, Շիրակ, 166, Գեորգեանց, 168 (պակասավոր),
Ալ. Մանուչարյան, «Լրաբեր», 1967, ք.2, 80-81,
Ալ. Մանուչարյան, ՔՅԵՎ, 165:

Ծանոթ. Վիճագիրը գետեղված է եղել չորս քարի վրա: Ս. Բարխուդարյանը ընկած-կորած է համարում քարերից միայն մեկը, որի հետևանքով առաջին 5 տողերի վերջնամասերը պակասում են: Ներկայումս տեղում է միայն քարերից մեկը, երկրորդն ընկած է եկեղեցու մեջ, իսկ մյուս երկուսը կորած են: Սկզբնամասը լրացնում ենք ըստ Ս. Բարխուդարյանի ընդօրինակման:

Վիմագրի թվականի հատվածը տեղում չի գտել նաև Թ. Թորամանյանը, քանի որ հուշարձանը նա այսպես է նկարագրում. «գյուղի հարավ-արևմտյան կողմն է բարձր տեղում Մակարավանք անվանված 10-րդ դարում շինված գեղեցիկ եկեղեցին՝ վրան արձանագրություններով և փլած մի գավթով: Շինության արձանագրությունը կա, բայց թվականի մասը կորած է»²⁴:

Արձանագրությանը երկիցս անդրադարձել է նաև վիմագրագետ Ալ. Մանուչարյանը: Նա թվականը կարդում է 1001 թ., բայց մի դեպքում իբրև ԻՆՆԾ, մյուս դեպքում Ի ՆԺ:

Մենք նպատակահարմար գտանք ներկայացնել նաև պահպանված երկու հատվածների գրչագրերը:

35. ՄԱԿԱՐԱՎԱՆՔ. արևմտյան մուտքի բարավորին, 11 տող.

+ ԿԱՄԱԽՆԱՅԵՍ
 ԵՂ ԲԱՅՐԱՆՈՒՆԵՄ ՈՒՋԻՄ
 ՉԱՅՐԷՆԻ ՋԱՅԳԻՆՋԴԱՆ ԻԼԱ
 ՆՅ ՉՈՂՆՈՐՅԱՂԻՆ ԻՄԱ ՆՆԻՄԲ ՍԻՈՆ
 ՄԱԿԱՐԱՎԱ ՆԻՅՅԱՌԱՋՆՈՐԴՈՒ
 ԹԵԱՆԱԱՐԴԱՆԱԷՅՏԵՐՈՒ ԹԵԱՆՏԵՂՈՅՍՅՈ
 ՎԱՆՆԵՄՄԻԱԿԵՑԻԵԻՍ ՊԱԻՈՐԳ ՍԻՈՒԽՏԻՍ ՍԱՂՄԱ
 Ն ԵՑԻՆ ՅԱՄԵՆԱ ՄԻՊԱՄԱՐԱԳԵԼ ՁԲՍ:Դ: Ի ՆՈՐԿԻՐԱԿԵԻՆ
 ՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ :Գ:ԻՆՁԵԻ :Ա:ՉԱՋՐԿԱՆՆ :ԱՊԻԹԵՈՒԲԻՄԵՐՈՑ
 ԿԱՄՅԱԻՐԱՐԱՑԻԱՓԱՆԵ ՊԱՏԺԵՍՑԵ ՅԱՅ ԿԱՄ ԱՐԻՉՔՆ
 ԱԻՐ ՏՆԻՆ Ի ՔԵ

+ ԿԱՄԱԽՆ ԱՅ, ԵՄ / ԵՂԲԱՅՐ ԱՆՈՒՆ, ԵՏՈՒ ՋԻՄ / ՉԱՅՐԷՆԻ
 ՋԱՅԳԻՆ ՋՂԱՆԻԼԱ/ՆՅ ՉՈՂՆ, ՈՐ ՅԱՂԻՆ Ի ՏԱՆՆ Ի ՄԲ ՍԻՈՆ /
 ՄԱԿԱՐԱՎԱՆԻՑ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒ/ԹԵԱՆ ՎԱՐԴԱՆԱ, ԵՒ ԻՐ
 ՏԵՐՈՒԹԵԱՆ ՏԵՂՈՅՍ ՅՈ/ՎԱՆՆԵՄԻ ՄԻԱԿԵՑԻ ԵԻ ՄՊԱԼՍԱՅԻՈՐՔ
 ՄԲ ՈՒԽՏԻՍ ՍԱՂՄԱ/ՆԵՑԻՆ ՅԱՄԵՆ ԱՄԻ ՊԱՏԱՐԱԳԵԼ Ձ ԲՍ
 :Դ: (4) [ԱԻՐ] Ի ՆՈՐ ԿԻՐԱԿԵԻՆ, / ՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ :Գ: (3) ԻՆՁ ԵԻ
 :Ա: (1) ՉԱՋՐԿԱՆՆ: ԱՐԴ, ԵԹԵ ՈՔ Ի ՄԵՐՈՑ / ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՑ
 ԽԱՓԱՆԵ ՊԱՏԺԵՍՑԵ ՅԱՅ, ԿԱՏԱՐԻՉՔՆ / ԱԻՐՏՆԻՆ Ի ՔԵ:/
 2 (1251):

Չրատ. Մխիթարյանց, Տեղագրութիւն, 98, Ալիշան, Շիրակ, 166 Գեորգեանց, 168:

Ծանոթ. Արձանագրության ստորին մասում փորագրված է 2 տառը, որը կարող է լինել թվականը: Վիմագիրը փաստում է, որ եկեղեցին կոչվել է նաև Ս. Սիոն:

36. ՄԱԿԱՐԱՎԱՆՔ. արևելյան պատին, արտաքուստ.


Կամաւն Աստուծոյ, ես՝ հայր Վարդան, եղէ...
 հին շինութեան սուրբ ուխտիս եւ բազում աշխատու
 թեամբ շինեցի զվանքս, աղաչեմ զբնակիչդ զիս
 եւ զծնողս յիշեցէք ի Տէր:

Չրատ. Մխիթարյանց, Տեղագրութիւն, 98, Ալիշան, Շիրակ, 166, Գեորգեանց, 168:

Ծանոթ. Այս արձանագրությունը տեղում չենք տեսել, կամ քանդված է, կամ վրիպել է մեր աչքից: Ցավոք, այս կարևոր, վանքի առաջնորդ հայր Վարդանի կողմից եկեղեցու կառուցման կամ նորոգման փաստը վկայող արձանագրությունը չի պահպանվել:


24 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, էջ 169-170:

37*. ՄԱԿԱՐԱՎԱՆՔ. արևի ժամացույց՝ եկեղեցու հարավային որմին.



Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ


38. ԶՈՐԱՎՈՐԱՑ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, արտաքուստ, պատուհանի երկու կողմում, մասամբ եղծված, 6 տող.



Ի :ՈԿԵ: (1216) / ԹՈՒԻԻՍ]
 Ի ժՆՄԱՆԱԿՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԴՇԱՐՆՇՆԱՐԻՆ ... ՀԱԻՐ ՍԱՐԳՍԻ, /
 ԵՄ ՅՈՎԱՆԵՍ, ՈՐԴԻ ՀԱՍՁԵԻ ... ԵՐՔ ԶԱԻՐԱԲԱՐԻՍ ԵՒ ԷՏՈՒ ԻՆՍ /
 ՀԱՅՐԵՆԻ ՏՆԵՐՆ, ՈՐ ... ԱՅ ... ԳԱ ... ՄՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ / ԾՆՈՐԱՑ
 ԻՄՈՑ ԵՒ ԲԱՐԵԻՍԱՆԻՍՄԱՆ ...

Ծանոթ. Վերջին տողը՝ չհարուցակված:

39. ԽԱԶՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. Զորավորաց եկեղեցուց արևմուտք, 8 տող.



† :ՆՁԵ: (1036) ԹՈՒՎԱՆԻԴ, ԵՄ ՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ՄԲ ԽԱԶՍ ՅԻՇԱՏ/ԱԿ
 ԻՆՁ ԵՒ ԲԱՐԵԻՍԱՆ ՏՆ ԻՄՈՑ ԱՊԼԽԱՐԻՊԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԻԱՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ,
 ՈՐ / ԶԱՄԵՆԱՅՆ ԲԱՐԻ ՅԱԻՐԻՆՈՒԹՍ ՇՆՈՐՀԵԱՑ ՍՈՒՐԲ ԶԱԻՐԱԲԱՐԱՑՍ ՅԻԻՐՈՅ
 ՀԱՅՐԵՆԵԱՑ ԶԳԻՐՆ / ԲՆԱԹՔ ԵՒ ԶԱՅԳԻՆ ԲԱՊՈԸԾԻ ԵՒ ԶԱՅԳԻՆ ԱՂՅՂ
 ԽԱՐԻՊԱՇԻՆ Ի ՍԱՐԻՆ ԶՍԱՐԳՆ ԶԱՐԱՂԱՀԱՐՆ ԵՒ / ԶՂՋՈՒՐՆ ԶԱԲԱՋԱՆԱՑ, ՈՐ ԱՐԱՐ
 ԶԽԱՂԱՂՈՒԹԻՆ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԿՐԻ ԽԱԶԻՆ ԻԻՐՈՎ ԱՐԱՑԵ Զ/ԻՍԱՂԱՂՈՒԹԻՆ
 ՏՆ ԻՄՈՑ ԱՍՏ ԵՒ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԵՒ ԻՄՈՑ ՀՈԳՈՅՍ ԱՊԱԻՆԵԼ/ՈՅՍ
 Յ ԱԾ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԽԱԶ ՆՈՐԱ: ԱՐԴ, ԷԹԵ ՈՔ ՅԱՊՇՏԱԿԵԼ ԶԱՆԱ Ի ՎԵՐԱԳՐՎՈՑՍ /
 Ի ՄԻՇԾԱՑ ԿԱՍ Ի ՓՈՔՈՒՆՑ :ՅԺԸ:-ԻՑՆ (318) ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:

Հրատ. Գեորգեանց (պակասավոր), 169-170, Ալ. Մանուչարյան, Տեղեկագիր, 1965, 5, 87:

Ծանոթ. Եղել է որմնափակ խաչքար, որից այժմ մնացել են միայն պատվանդանը և խաչքարի մի փոքր մասը: Պատվանդանի չափերն են 2,15 x 1,40 մ, իսկ խաչքարի լայնությունը՝ 1,58 մ:

Հուշարձանի արձանագրված երեսի աջ անկյունը ջարդված է, որի հետևանքով վնասվել են երեք տողերի մասեր. դրանցից առաջին և երկրորդ տողերում ընդունելի լրացումները կատարել է Ալ. Մանուչարյանը, երրորդ տողի, ինչպես և մյուս լրացումները մերն են:

Դժվար է հատկապես անծանոթ տեղանունների հարցը. չորրորդ տողի առաջին բառն ըստ բովանդակության պետք է լինի գյուղի անուն՝ բաղկացած չորս տառից, պահպանվել է միայն երեք տառ՝ ԱԹՔ և սկզբից կոտրված է մեկ տառ: Որոնելով Շիրակում համապատասխան տեղանուն՝ Ղ. Ալիշանի «Շիրակ» աշխատության 146 էջում գտանք Քաթ անունով գյուղատեղ: Այն թեև բավական հեռու է մեր հուշարձանի վայրից, բայց էական է, որ նման տեղանուն գոյություն ունեցել է, չենք պնդում, որ հենց վերը հիշվածն է նվիրել Ապղարիպը: Նման անունով այլ գյուղ կարող էր նաև ավելի մոտակայքում լինել: Ասենք նաև, որ ինչպիսի լրացումներ էլ, որ անելու լինեն, դրանք որոշ չափով միշտ ենթադրական կմնան, բայց ներկա դեպքում արվածները թվում են միակ հնարավորը:

40. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գյուղի «անանուն» մատուռի արևելյան կողմում՝ արտի մեջ.

Այս է հանգիստը Սոչանի, ի թ. ՈԾԱ (1202):

Ֆրատ. Թորամանյան, Բ, 210:

ՀԱՌԻՃԱՎԱՆՔ

Արագածի հյուսիսային լանջին, գեղատեսիլ բնության գրկում է գտնվում Հառիճ գյուղն իր համնուն վանքով: Միջնադարյան Հայաստանի նշանավոր այս հոգևոր կենտրոնի մասին վաղագույն հիշատակությունը պատկանում է XIII դ. մատենագիր Մխիթար Անեցուն, որն իր Պատմությունը շարադրել է Հառիճավանքի վանահայր Գրիգորի († 1189 թ.) պատվերով, ինչի մասին է վկայում երկի խորագիրը. «Հանդեսք բանից աշխարհագունար գրուցաց, տիեզերապատում անցից՝ վիպասանեալ ի քաջ գիտնականէն Մխիթարայ, աւագերիցու մեծ կաթուղիկէին Անույ հոյակապ քաղաքի, ի խնդրոյ հայր Հառիճայի Գրիգորոյ վարդապետի»²⁵:

Հայտնի է, որ վանքը մեծապես տուժել է սելջուկների արշավանքից, որը վերականգնել է Գրիգոր առաջնորդը. վերջինս թաղված է հարակից գերեզմանոցում: Հառիճում վանական կյանքը ծաղկում է ապրել XIII դարում, երբ Ջաքարե ամիրսպասալարը, գնելով Հառիճ գյուղն ու շրջակա հողերը, նախաձեռնել է գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը, որն ըստ շինարարական արձանագրության՝ ավարտել է 1201 թ. (արձ. 50): Նույն վիճագիրը տեղեկություններ է հաղորդում նաև վանքի պարսպապատման մասին, որից ներկայումս մի փոքր հատված է պահպանվել: Շինությունների որմերին առկա են XIII դ. բազմաթիվ նվիրագրեր ու հիշատակագրություններ, ինչը չի կարելի ասել հետագա դարերի մասին: Աղա Մահմեդ խանի՝ 1795 թ. Հայաստան կատարած ներխուժումից վանքն ավերածությունների է ենթարկվել և միայն 1830 թ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո զարթոնք ապրել՝ վանահայր, Կարսի երբեմնի առաջնորդ Ստեփանոս արք. Խաժակյանի հոգածությամբ: Այս շրջանում վանքը նորոգվել է, կառուցվել են նոր սենյակներ ու տնտեսատուն:

Հուշարձանախումբը բաղկացած է հետևյալ կառույցներից.

Ս. Գրիգոր եկեղեցի. Համալիրի հնագույն կառույցն է, որը թվագրվում է VII դարով: Ճարտարապետական հորինվածքով նման է Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցուն: Հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից եկեղեցուն կից են քառանկյուն ավանդատները: Շինության վրա XIII դ. Սարգիս ճոնը մատուռ է կառուցել: Գմբեթը սկզբնապես եղել է կղմինդրածածկ, իսկ 1863 թ. վերակառուցվել է քարով ու կիսագնդածև, իսկ այժմ վեղարածև է: XII-XIII դդ. եկեղեցուն արևմուտքից կցվել է նաև գավիթ, որը մեզ է հասել ավերակ վիճակում:

Ս. Աստվածածին եկեղեցի. Վանքի գլխավոր շինությունն է: Կրկնում է XI-XII դդ. Հայաստանում ավանդական դարձած «գմբեթավոր դահլիճ» ճարտարապետական հորինվածքը: Ինքնատիպ են արևմտյան կողմի ավանդատների երկրորդ հարկի եռակամար բացվածքներով սյունազարդ օթյակները, որոնք ըստ ճարտարապետ Ալ. Ջալալյանի՝ շինությանը պալատային տեսք են հաղորդում²⁶: Այստեղ բարձրանում են ստորին հարկի խորաններին կից 12 աստիճան ունեցող քարե սանդուղքներով: Շինության արևելյան, հարավային ու հյուսիսային պատերն արտաքուստ հարդարված են զույգ եռանկյունաձև «հայկական խորշեր»-ով: Ուշագրավ է հատկապես արևելյան պատի արտաքին հարդարանքը՝ պսակված Ջաքարե և Իվանե Ջաքարյան իշխանների կտիտորական քանդակով: Եկեղեցին նորոգվել է 1850-ական թթ. գյումրեցի նշանավոր վարպետների կողմից (Գյումրիի երիտասարդաց «Հառիճի վանական ընկերություն» կազմակերպության նախաձեռնությամբ, նախագահ Հովսեփ Կոստանյանի ղեկավարությամբ):

25 Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատ.՝ Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 56:

26 Ալ. Ջալալյան, Հառիճավանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 567:

Գավիթ. Քառասյուն տիպի այս կառույցը կից է Ս. Աստվածածին եկեղեցուն արևմուտքից: Կառուցել է իշխան Վահրամ Յեճուպը՝ XIII դ. առաջին կեսին, Յովհաննես վարդապետի առաջնորդության ժամանակ:

Դպրատուն. Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցուց հարավ-արևելք: Կառուցվել է XIII դ., որից ներկայումս միայն հյուսիսարևմտյան մի փոքր հատվածն է պահպանվել:

«Ճգնավորի մատուռ». Վանքի հարավարևմտյան կողմում, անմատչելի ժայռի վրա է գտնվում այս փոքր շինությունը՝ հարազատ XII-XIII դդ.: Կառուցված լինելով ծորի քարափի եզրին՝ ժամանակի ընթացքում մի մեծ ժայռաբեկոր անջատվելով քարափից, աստիճանաբար հեռացել ու իր հետ տարել է նաև հիշյալ մատուռը, ուր մտնելն այժմ անանցանելի է դարձել:

Ս. Յարություն եկեղեցի. 1201-1216 թթ. կառուցված միանավ բազիլիկ եկեղեցու ավերակները պահպանվել են վանքից դուրս գտնվող գերեզմանոցում: Աղա Մահմեդ խանի ավերածությունների ժամանակ է խոնարհվել այս եկեղեցին: Ելնելով շինության ճարտարապետական ու կառուցողական ձևերից՝ հնագետ Յ. Եղիազարյանն այն թվագրում է V դարով ու կարծում, որ հիշյալ ժամանաշրջանում գյուղն արդեն գտնվում էր իր տեղում²⁷:

XIX դ. երկրորդ կեսին, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866-1882) կաթողիկոսի օրոք ևս վանքում բարենորոգչական ու կառուցողական աշխատանքներ են տարվել. 1872 թ. կառուցվել է վանքի սեղանատունը, ապա տնտեսական, միաբանական ու օժանդակ այլ շինություններ, հյուրատուն, կաթողիկոսական ամառանոց, դպրոց և այլն:

Ջանգակատուն. Կից է Ս. Գրիգոր եկեղեցուն: Կառուցվել է 1892 թ.՝ ի հիշատակ «Յառիճավանքի ընկերության» նախագահ Յովսեփ Կոստանյանի:

Յամալիրում հիշյալ ընկերության աշխատանքները դադարեցվել են 1915 թ., սակայն այսօր ևս վանքում բարեկարգման ու ամրակայման աշխատանքներ են տարվում:

Պարիսպ. Նշված բոլոր շինությունները շրջափակված են պարսպով, որի արևելյան մասը կառուցվել է XIII դ., Ջաքարե ամիրսպասալարի կողմից, իսկ հյուսիսային մասը՝ XIX դ. երկրորդ կեսին, վերոնշյալ շինարարական աշխատանքների հետ միասին:

Գերեզմանոց. Գտնվում է համալիրից դուրս՝ գյուղի մեջ: Առկա են XII-XIX դդ. բազմաթիվ ու տարածն տապանաքարեր՝ երբեմն կենցաղային բնույթի պատկերաքանդակներով: Գերեզմանոցում կան նաև XII-XIV դդ. խաչքարեր:

Պրակում ընդգրկված արձանագրությունների գերակշիռ մասն այս վանքից է. դրանց ընդհանուր թիվը 54-ն է, որոնցից 33-ը նախկինում հրատարակվել են Սարգիս Ջալալյանցի, Աբել Մխիթարյանցի, Ղևոնդ Ալիշանի, Մելքիսեդեկ Գևորգյանցի, Յովսեփ Եղիազարյանի և այլոց աշխատություններում: Յառիճավանքից մեզ հայտնի թվով 23 արձանագրություն (1-ը՝ չպահպանված)²⁸ տեղ է գտել ՄՍ ՅՊ 6517 ձեռագրում՝ ընդօրինակված 1842 թ.: Այդ վիճագրերը վերջերս հրատարակվեցին Մատենադարանի ավագ գիտաշխատող Արմեն Տեր-Ստեփանյանի աշխատասիրությամբ²⁹: Յեղիմակն այս ձեռագրից հրատարակել է 27 արձանագրություն, բայց պետք է լինի 29, քանի որ է և ի՞նչ միավորները բովանդակում են երկուական վիճագրեր: Յիմք ընդունելով ձեռագրում տվյալ միավորի խորագիրը, որ է. «Տետրակ արձանագրութեանց սրբոյ վանիցն Յառիճոյ ի 1842 ամի եւ նոյեմբեր 13», Ա. Տեր-Ստեփանյանը բոլոր վիճագրերը վերագրել է Յառիճավանքին, մինչդեռ դրանցից 6-ը Լմբատավանքից են:

27 Յ. Եղիազարյան, Յառիճա վանքը և նրա վիճագրությունը, «Էջմիածին», 1956, Ը-Թ., էջ 79:

28 ՄՍ ՅՊ 6517 ձեռագրի Յառիճավանքի վիճագրերը սույն հատորում կրում են հետևյալ կարգային համարները. 41 (ԺԸ), 42 (ԺԹ), 43 (Ի), 44 (ԻԱ), 45 (ԺԶ), 46 (ԺԵ), 48 (ԺԷ), 50 (Ա), 51 (Բ), 54 (Գ), 55 (ԺԴ), 60 (ԷԲ), 62 (Զ), 63 (Դ), 64 (ԺԱ), 65 (ԺԲ), 66 (ԺԳ), 67 (Ը), 68 (Թ), 69 (Ժ), 70 (Ե), 71 (Էա):

29 Ա. Տեր-Ստեփանյան, Վիճագրերը Մատենադարանի ձեռագրերում, «Վարձք», 2016, ՅՊ 11, էջ 39-42:

41. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավային խաչաթևի պատին, արտաքուստ, 14 տող.

† ԵՍԳՐԻԳՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԲ ՈՒԽՏԻՍ ԶԱՌԻՃԱՅԻ	ՆԻՆԵՑԻ ԶՏԵՂԻ ՍՆԸՆԴԵԱՆ ԻՄՈՅ ԶԱՐՑ Ի :Ճ: (100) / ԱՄԵԱ
ԱՄԵԱՆՈՐՃԱՆՄ ԱՆԵՆԻԿԱՐԳԵՑԻՄԱՍՄԱՐԸՍ	ԿՈՐԾԱՆՄԱՆԵՆ ԵՒ ԿԱՐԳԵՑԻ Ի ՍՄԱ ԱՐԸՍ / ԸՆՏՐԵԱԼՍ ԵՒ
ԸՆՏՐԵԱՊԵՒ ԸՍՏԵԱՍԱԻՐ ԻՆԱԻ ԶԱՅ ԵՒ	ԽՐԱՏԵԱԼՍ ԱԻՐԻՆԱԻՔՆ ԱՅ, ԵՒ / ԶԱՍՏԱՏԵՑԻ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲ /
ՀԱՄՍ ԱՍԵՅ Ի ԿԱՄԱԿՑ ՈՒ ՈՇԱՄԲ	ԵՂԲԱՐՑ՝ ԵԹԵ ՈՔ / ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ Ի ՅԸՆՉ/ԱԻՑ ԵԿԵՂԵՑՈՅԱ
ԵԼ Ք	ԽՈՐԴԵ / [ԵՒ] ԵՒ ԶՎԱՍՏԱԿՍ ԲԱԶՄԱՑ ԵՒ / ԶՏՈՒՐՍ ԶՈԳՈՅ
ԱՐՑՅՈՒ Ե ՈՇՈՒՔ	ԻՐՆ ԶԱՄԱՐԻ, ՈՐ ԶԱ/Փ ԱՃ ԱԻՐՅԱԾ Ե, ԱՅՆԶԱՓ
ՅԱՌԱ ԶՆՈՐԴԱՑ Ի Յ ԸՆ Զ	ՆԶՈՎԱԾ Ե, ՈՐ ԿԱՇԱՌԱԻՔ ԶԱՅ/Ր ՄՏԵ / ԿՐԿԻՆ / ՆԶՈՎԻ:
ԱԻՑԵ ԿԵ ԶԵՑՈՅՍԻ ՈՐ Ն	
ԵԵԻՉ ԿԱՄՍ ՍԿՍՐԱՉՄԱՑ ԵՒ	
ԶՏՈՒՐՍ ԿՈՑԻՐ ԶԱՄԱՐԻՈՐԶԿ	
ՓԱԾԱՐԿՆ ԱՇԵԱՅ ԶԱԻ ԶՈՎԱԾԵՈՐԿԱՇԱՊԱԻ ՀԱՅ	

ԸՄՏԵ
ԿՐԿԻՆ
ՆԶՈՎԻ

† ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ԱՌԱՋՆՈՐԴ ՄԲ ՈՒԽՏԻՍ ԶԱՌԻՃԱՅԻ,
ՇԻՆԵՑԻ ԶՏԵՂԻ ՍՆԸՆԴԵԱՆ ԻՄՈՅ ԶԱՐՑ Ի :Ճ: (100) / ԱՄԵԱ
ԿՈՐԾԱՆՄԱՆԵՆ ԵՒ ԿԱՐԳԵՑԻ Ի ՍՄԱ ԱՐԸՍ / ԸՆՏՐԵԱԼՍ ԵՒ
ԽՐԱՏԵԱԼՍ ԱԻՐԻՆԱԻՔՆ ԱՅ, ԵՒ / ԶԱՍՏԱՏԵՑԻ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲ /
ԵՂԲԱՐՑ՝ ԵԹԵ ՈՔ / ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ Ի ՅԸՆՉ/ԱԻՑ ԵԿԵՂԵՑՈՅԱ
ԽՈՐԴԵ / [ԵՒ] ԵՒ ԶՎԱՍՏԱԿՍ ԲԱԶՄԱՑ ԵՒ / ԶՏՈՒՐՍ ԶՈԳՈՅ
ԻՐՆ ԶԱՄԱՐԻ, ՈՐ ԶԱ/Փ ԱՃ ԱԻՐՅԱԾ Ե, ԱՅՆԶԱՓ
ՆԶՈՎԱԾ Ե, ՈՐ ԿԱՇԱՌԱԻՔ ԶԱՅ/Ր ՄՏԵ / ԿՐԿԻՆ / ՆԶՈՎԻ:

Չրատ. Ջալալյանց, Ա, 216, Մխիթարյանց, Զառիճ, 80, Ալիշան, Շիրակ, 159,
Գեորգեանց, 157, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 56,
Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 267-268, Գազիկ Զառիճեցի, 29:

Ծանոթ. Գրված է 1185 թվից առաջ. վանքի առաջնորդ Գրիգորը մահացել է այդ թվին: Երկրորդ տողում
ԶԱՐՑ բառը մոռացված և լրացված է հետո, տողից վերև մանրատառ, այդ պատճառով էլ հրատարակիչները
չեն նկատել: Բոլոր դեպքերում է տառի փոխարեն գրված է Ե, չենք ուղղում: 9-րդ տողում ԽՈՐԴԵ
անծանոթ բառը այս դեպքում խորթացնել, օտարել իմաստն ունի և հրատարակիչները վերծանել են
ԽՈՐԵ: 11-րդ տողում ՄՏԵ բառը գրված է ՄՏԵ:

Գրիգոր առաջնորդի տապանագրի թվականի ուշադիր զննումը թույլ տվեց այն վերծանել ՈԼԸ՝ 1189թ.:

42. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավային խաչաթևի պատին, արտաքուստ, նախորդից անմիջապես
ներքև, 8 տող.


ԿԱՄԱԻ Ա ՅՄԵԲՅԱՌ ԻՃԱԵՑԻՔՍԱ	ՅՊԵՏՐՈՍ ԵՒ ԱՅԼԵՂԲԱՐ Ի ՍՍԱՀՍ
Ա ՆԵՑԱԻՄԱԻՆԻՄԱ ԴԱՆԱԿԻ Ի	ՄԻ Մ ԱՍ ՈՒՌՆ Դ ԱՍԱՐԱ ԴԵԼԶԲՍՅ
ԱՆ ՈՒՆԴՐԻԴՈՐՈՅՓ ՈՒԱՆ ԱԿԱՐԴԵ	ԱՆ ՆՅԻՐՈՅՈ ՐԲԿԱՐԱՐԵՆ ԱԻՐՅՆԵԱ
ԼԵ ԶԻՅԻՆԵՒՈՐԲՈՉՆ ԶՈՎՍ ԺԱՌԱՆԳ	

ԵՍՅ ԵՆԻՆ Բ ՈՒԱ

ԿԱՄԱԻ ԱՅ, ՄԵՔ ՀԱՌԻՃԱԵՑԻՔՍ, ՀԱՅՐ ՊԵՏՐՈՍ
 ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՔՍ, ՍԱՀՄ/ԱՆԵՑԱՔ Ի ՏԱԻՆԻ
 ՏԱՊԱՆԱԿԻ Ի / ՄԻ ՄԱՏՈՒՌՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ
 Ջ ՔՍ Յ/ԱՆՈՒՆ ԳՐԻԳՈՐՈՅ ՓՈԽԱՆԱԿ ԱՐԴԵ/ԱՆ[Ն]Ց
 ԻԻՐՈՅ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՆ ԱԻՐՀՆԵԱ/Լ ԵՂԻՑԻՆ,
 ԵՒ ՈՐՔ ՈՉ ՆՁՈՎԱ ժԱՌԱՆԳ/ԵՍՑԵՆ ՔԵ, Թ[ՎԻՆ] :ՈՒՆԱ: (1192):

Հրատ. Շահխաթունյանց, 388, Ջալալյանց, Ա, 216,
 Մխիթարյանց, Հառիճ, 81, Ալիշան, Շիրակ, 159,
 Գեորգեանց, 157-158, 168, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 57,
 Բյուրոյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 268, Գագիկ Հառիճեցի, 30:

43. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արտաքուստ, նախորդից անմիջապես ներքև, 9 տող.



Ի ԹՎԻՆ] :ՈՒՆԵ: (1196) ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՀԱԻՐ ՊԵՏՐՈՍԻ[Ի] /
 ԿԱՄԱԻ ԱՅ, ԵՄ Ա[ՍՏՈՒԱ]ՅԱՏՈՒՐ, ԵՏՈՒ ԶԻՄ ՀԱՅՐԵՆ[Ի] ԱՅԳ/ԻՆԱ,
 ՈՐ ՅԱՐՈՒՃ, Ի ՎԵՐԻՆ ԶԽԱԶԿԱՆՑ ԱՅԳԻՆ ԵՒ ԶԸ/ՆՁԱՆՆ ԵՏՈՒ Ի
 ՄՔ ՈՒՆՏՍ ՀԱՌԻՃԱՅՈՒ ՄՔ ԳՐԻԳՈՐՍ / ԵՒ ՄՔ ՅԱԾԱԾԻՆԱ ԵՒ ՈՐ
 ԱՌԱՋՆՈՐԴՔ ՄՔ ՈՒՆՏԻՍ ԽՈՍՏ/ԱՑԱՆ ԻՆՁ Ի ՏԱՐՈՋՆ :Բ: ԱԻՐ ԺԱՍ,
 Զ:Ա: ԱԻՐՆ ԻՄ Հ/ԱԻՐՆ ՇԻԿԻՆ ԵՒ :Ա: ԻՄ ՄԱԻՐՆ ՎԱՐԴԵՆԵ, ԵԹԵ ՈՔ /
 ԶԼԱՆԱ ԵՒ ԶԱՌՆԵՆ Ի ՏԱԻՆԻ Ս[Ր]ԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ / ՆՁՈՎԵՍՑԻ ՅԱՅ,
 ԵՒ ՈՐՔ ԿԱՏԱՐԵՆ ԱԻՐՀՆԻ ՅԱՅ:

Հրատ. Շահխաթունյանց, 388, Ջալալյանց, Ա, 216-217,
 Մխիթարյանց, Հառիճ, 82, Ալիշան, Շիրակ, 159,
 Գեորգեանց, 158, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 58,
 Բյուրոյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 268, Գագիկ Հառիճեցի, 30:

Ծանոթ. Հրատարակիչները 3-րդ տողում ՎԵՐԻՆ բառից հետո ավելացրել են նաև ԹԱՂ բառը, որը չկա բնագրում, իսկ 7-րդ տողում՝ ՎԱՐԴԵՆԵ անձնանունը դարձրել են ՆՎԱՐԴ կամ ՆՎԱՐԹ (Գևորգյանցը կարդում է՝ ՎԱՐԴԻՆԵ):

Արձանագրության վերջում սկսվել և կիսատ է թողնվել մի ուրիշը, որը կարելի է վերծանել՝ Ի ԹՎԻՆ] :Ո:
 (1151) ՏՈՍԵԳԶԻ ՎԱՐԴԱՊԵՏ, կամ՝ ՏՈՍԵ ԳՐԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ, այս դեպքում պիտի համարել արձանա-
 գրության փորագրիչ:

ՎԱՐԴԱՊԵՏ քառը գրված է ՎԱՐԴ (առաջին երեք տառը՝ փակագիր), ըստ այդմ ՎԱՐԴԱՊԵՏ-ի փոխարեն կարելի է կարդալ ՎԱՐԴ:

44. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արտաքուստ, 19 տող.

ԻՈՒՍԵՐՁԱԿԱՆԻՍ ԵՍԳՐ
 ԻԳՐՈՐՎԱՐԴԱՊԵՏՈՐԻ Ի
 ՏՈՒՏԱԵՏՈՒՉ ՄԲՆՇ ԱՆՍԼՈ
 ԻՍՈԿԿԻՆՊԱՆԱՆՈՎԵՐԻՍ
 ՄԱՍՆԶԳՅԱԿԱԿԱՆՅՈԳՈՒՄՈ
 ԻՄԲԱՏԱՑԻՆԱՆԱԻ ԻՃԱԻՊԱՐՏ
 ԱԿԱՆԵՆԻՆԶԶՄԻԱԲԱՆՈՒԹԵ
 :Գ: ՔԱՌԱՍՈՒՆՍ ԵՒ ԶԶ ԱՅԻՆՃՐ
 ԱԳԱՎՈՒՕՑԻՆԱԵՋԱՄԱՐԱՐՈՐՉ
 ԱՓՈՒԿՍԻ ՀԱՄԱՏՈՒԹԵԷԷԻՈ
 ԲՅԱՆԷԶՍԱԻՄԲՈՒԽՅԵՍ ԶԻՆՉԵԻ
 ԻՑԷՊԱՆՃԱՌԱՆԱԻՔՆԶՈՎԱԾ
 ԷՅՍՅԵԻՅԱՄԵՆԱՅՆՄԲՈՑԱՄԵՍ
 ՏՈՒԱԻՉԵՈՆ ՀԱԻՐՊԵՏՐՈՍԻ
 ՈՐՔԲՆԱԿ ԷՅԻՄԲՅՈՎԵՍ ԵՒ ԿԱՐ
 ԴԵՅԲԶԳԻՄՊԵՆՈՎԱԻՆՅ
 ԶԳՈՒԵԻՄԱՐՄԵՆՈՅՆՈՂԱՅԻՐ
 ՈՑԵԻԷՂԲԱՐՑԲՈՂՈՒԹԻՄԵՂ
 ԱՅԻՆԴՐԵՑ ԷՔԻՔԷ ԱՂԱՉԵՄ

Ի :ՈՒՍԵ: (1196) ԹՎԱԿԱՆԻՍ, ԵՍ՝
 ԳՐ/ԻԳ[Ր]ՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՈՐԴԻ /
 ՏՈՒՏԱ, ԵՏՈՒ ԶՄԲ ՆՇԱՆՍ ԼՈ/ԻՍՈ
 ԿՐԿԻՆ ՊԱՅԱՐԱՆՈՎ ԵՐԻՍ / ՄԱՍՆ,
 ԶԳՐԱԲԱԿԱՆ ... ԳՈԳՈ ԻՍՈ / Ի ՄԲ
 ԱԾԱԾԻՆՍ ԳԱՌԻՃԱԻ, ՊԱՐՏ/ԱԿԱՆ
 ԵՆ ԻՆՉ ԶՄԻԱԲԱՆՈՒԹԵ[ԱՆ] /
 :Գ: ՔԱՌԱՍՈՒՆՍ ԵՒ ԶԶԱՏԿԻՆ
 ԵՐ/ԱԳԱԼՈՒՑԻՆ :Ա: ԺԱՄ ԱՐԱՐ, ՈՐ
 Զ/ԱՓ ՈՒՏՍՍ Ի ԳԱՍՏԱՏՈՒԹԵ[ԱՆ] Է, ԵՒ
 ՈՐ ԳԱՆԷ ԶՍԱ Ի ՄԲ ՈՒՏՏԵՍ ԶԻՆՉ
 ԵՒ / ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱՆԱԻՔ ՆԶՈՎԱԾ /
 Է ՅԱՅ ԵՒ ՅԱՍԵՆԱՅՆ Ս[Ր]ԴՈՑ. ԱՄԵՆ: /
 ՏՈՒԱԻ Ի ԶԵՈՆ ԳԱԻՐ ՊԵՏՐՈՍԻ, / ՈՐՔ
 ԲՆԱԿԷ ՄԲ ՏՈՒՐԻՍ ԵՒ ԿԱՐ/ԴԱՅՔ
 ԶԳԻՐՍ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ Գ/ՈԳՈ ԵՒ
 ՄԱՐՄՈ ԾՆՈՂԱՑ ԻԻՐ/ՈՑ ԵՒ
 ԵՂԲԱՐՑ ԹՈՂՈՒԹԻ[ԻՆ] ՄԵՂ/ԱՑ
 ԽՆԴՐԵՑԷՔ Ի ՔԷ ԱՂԱՉԵՄ:

Չրատ. Շահխաթունյանց, 388-389, Ջալալյանց, Ա, 217,
 Մխիթարյանց, Գառնիճ, 82, Ալիշան, Շիրակ, 158-159,
 Գեորգեանց, 158, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 58,
 Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 268-269,
 Գազիկ Գառնիճեցի, 28-29:

Ծանոթ. Գովհ. Շահխաթունյանցը չունի թվականը, իսկ Ս. Ջալալյանցն ու Ղ. Ալիշանը՝ :ՈՒՍ:, Գ. Եղիազարյանն ու Գ. Գառնիճեցին՝ ՈՒԵ, իսկ Ս. Գեորգեանցը և Գ. Քյուրտյանի «վիճաբանական» ՈՒԵ:

45. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատի վերին մասում, արտաքուստ, 6 տող.

ԱՇԱՏԱՂԷԿՄԻԱԲԱՆԵԾ
 ԱՅՄԲՈՒԻՏ ԻՍ ԵՒ ՀԱՅՐՆ
 ԱՄԱԶԱՍՊՍԵԻԱՅԼԵՂԲԱՐ
 ԻՍ ՀԱՍՏՈՒՄ ԵՑԻՆՈՐԻՍԱՆ
 ՈՒԲՍ ԶԻՄՄԻԱԲԱՆՈՒԹԻՆ
 ԱՌՆԵՆԱՂԱՏԱՌՈՎԱԿԻՆ Ի

ԵՍ ՇԱՏԱՂԷԿ, ՄԻԱԲԱՆԵՑ/ԱՅ
 ՄԲ ՈՒՏՏԻՍ ԵՒ ԳԱՅՐ
 Գ/ԱՄԱԶԱՍՊՍ ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐ/ՔՍ
 ԳԱՍՏԱՏԵՑԻՆ, ՈՐ Ի ՄԱՅ/ՈՒ ԻՍ
 ԶԻՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՆՆ /
 ԱՌՆԵՆ ԱՆՊԱՏՃԱՌ ՈՎ ԼԻՆԻ:

Չրատ. Մխիթարյանց, Գառնիճ, 80, Ալիշան, Շիրակ, 159,
 Գեորգեանց, 157, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 58,
 Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 267:
 Գազիկ Գառնիճեցի, 31:

Ծանոթ. Ժամանակը որոշվում է հայր Համագասպի հիշատակումով, որի վերաբերյալ կա 1234 թվի արձանագրություն:

Քյուրտյանի «վիմագրահավաքը» նվիրատուի անունը կարդացել է ՇԱՏ ԱԽԵԿ, Գ. Հառիճեցի՝ ՇԱՏ ԱՂԵԿ:

46. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան պատին, արտաքուստ, 7 տող.

ԵՍՍԱՐ ԳԻՍՏՈՆ ՆՍՇ ԻՆԵՑԻՉ ԵԿ
ԵՂԵՑԻՍ ԵՒ ԻՔՐՄԱՆ ՑԻՄԵՏՈՒ
ԱՅԼԸՆԾԱ ՅԻՄԲ ՈՒԽՍՍ ԵՒ ՀԱՅԻ
ՀԱՄԱԶԱՍՊՍԱԿՄԱՆ ԵԱՑՈՐԻՍԱ
ՐԳՍ ԻԵԻԻԲԱ ԳՈՍԻՄԱԻ ՆԻՆ:Բ:Ա Կ
ՊԱՄԱՐԱԳԵՆՉՔՄ ՅԻՄ ԱՆՈՒՆ

ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ ԾՈՆՍ, ՇԻՆԵՑԻ ԶԵ/ԿԵՂԵՑԻՍ ԵՒ Ի
ՔՐՏԱՆՑ ԻՍ ԵՏՈՒ / ԱՅԼ ԸՆԾԱՅ Ի ՄԲ ՈՒԽՍՍ
ԵՒ ՀԱՅՐ / ՀԱՄԱԶԱՍՊՍ ՍԱՀՄԱՆԵԱՑ, ՈՐ Ի ՍԱ/ՐԳՍԻ
ԵՒ Ի ԲԱԳՈՍԻ ՏԱԲՆԻՆ :Բ: ԱԻՐ / ՊԱՏԱՐԱԳԵՆ
ԶՔՄ ՅԻՄ ԱՆՈՒՆ, / ՈՎ ԽԱՓԱՆԵ ԴԱՏԻ ՏԼԵԱՌՅԵ:

Հրատ. Շահխաթունյանց, 388, Մխիթարյանց, Հառիճ, 79-80,
Գեորգեանց, 157, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 58,
Գագիկ Հառիճեցի, 31:

Ծանոթ. Ժամանակը որոշվում է Համագասպ առաջնորդի հիշատակումով. ԺԳ դարի առաջին կես:

Սարգիս ճոնը շինել է 7-րդ դարի այս արտաքուստ խաչածն եկեղեցու հարավային խաչաթևի արևելյան ու արևմտյան անկյուններում ավելացված խորանները, որոնցից առաջինի արտաքին պատին էլ գրել է իր արձանագրությունը:

Ուշագրավ է Սարգսի մականունը, որը բառարաններում երկիմաստ է մեկնվում. «հաճար», «մուշտակակար», «մորթեգործ», «կաշեգործ», «գդակ կարող» (Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. Գ, էջ 211-212): Այս մականունով առավել հայտնի է մատենագիր Բարսեղ ճոնը: Թվում է թե ինչպես Բարսեղի, այնպես էլ Սարգսի դեպքում մականունը չի առնչվում նրանց հիշված գործին: Ոմն Առյուծի հայր Մխիթար ճոն հիշատակված է նաև Արջոռիճի գավթի նվիրատվական վիմագրերից մեկում (Աշխարհբեկ Քալանթար, Շրջան Տեկորի արշավախմբի, էջ 143):

47*. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան պատին, արտաքուստ, նախորդի ստորին մասում, անկանոն գրչությամբ, 5 տող.


Ե Ս Գ Ր Ե Ց Ի Ս Ե Լ Ի Ք
Ե Տ Մ Բ Ա Ճ Լ Ա Ճ Ի Ն
Ս Բ Ա Ճ Ի Ն
Բ Վ Ի Ն Ի / : Ռ Ճ / Դ : (1605)

ԵՍ ԳՐԵՑԻ. ՄԵԼԻՔ / ԾԱՌԱՅ,
ԵՏ ՄԲ ԱՃԼԱՃԻՆ,
ԹՎԻՆԻ / :ՌՃ/Դ: (1605):

Ծանոթ. Վիմագիրը բովանդակությամբ նվիրատվական է, սակայն հայտնի չէ, թե ստույգ ինչ է նվիրաբերվել վանքի գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցուն: Նվիրատուն Մելիքն է, որն իրեն իբրև ծառա (Աստծո ծառա, եկեղեցու սպասավոր) է բնորոշում: Ըստ էության, Մելիքը նաև արձանագրության գրիչն է:

Թվականի տասնավորը կարելի է կարդալ նաև Ժ, այսինքն՝ ՌՃԴ (1565), սակայն, առավել հակված ենք վերոնշյալին:

48. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արտաքուստ, լուսամուտից վեր, 4 տող.



ԻՆՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴՐԻՆ ՔՈՂԱԽ,
ՄԻԱՔԱՆԻՅԱ Ի ՄՔ ՈՒԽՏՍ,
ՈՒՐ ՄԵՌ/ԱՆԻՍ ԶԻՍ ՉԱԿՆ
ԿԱՏԱՐ/ԵՆ ԱՆՊԱՏՃԱՌ, ՈՎ ԼԻՆԻ:

Չրատ. Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 267,
Ս. Ավագյան, ՎԱԲ, 153:

Ծանոթ. Վերջում պիտի մտքով ավելացնել «առաջնորդ» բառը, որը գրիչը բաց է թողել՝ հասկանալի համարելով:

Վիճագիրը փորագրված է բավական վերևում և որոշ հատվածներ, հատկապես վերջին երկու տողերը, կիսեղծ են: Ս. Բարխուդարյանը երրորդ տողում վերծանել է ԶԻՍ ՉԱՆԿԻՍՏ ԱՐ/ՆԵՆ: Ս. Ավագյանի վերծանությունը բավական տարբերվում է Ս. Բարխուդարյանի ներկայացրածից. «Ես՝ Գրիգոր միաբանեցա ի սբ ուխտս, ուր մեռանեմ, զիմ հակն կատարեն անպատճառ, ով լինի...»: Համանման է նաև Քյուրտյանի վերծանությունը: Ս. Ավագյանն այս վկայագրին անդրադառնում է «հակն» բառերի կապակցությամբ, գտնելով, «այստեղ հակ-ը, տուրք, հարկ չի արտահայտում, այլ՝ մատուցված նվերների դիմաց նվիրատուին խոստացած հատուցում, վարձ, պարտավորություն, որ, հավանաբար, առաջանում է՝ hagg = վարձ, իրավունք իմաստից»:

49*. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արտաքուստ, նախորդի ներքևում, կամարին, փակագիր.



ԳԱԻՐԳ

Ծանոթ. Այս, թերևս, պայմանականորեն վերծանված անունը, կարծում ենք, վերաբերում է շինարար վարպետին կամ ճարտարապետին:

50. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատի կենտրոնական մասում, արտաքուստ, 11 տող.


ՇՆՈՒԿԻՆՆԱՅԻՆՆՈՒՄՆԱՄԻՐԻՆԵՍՁԱԲԱԵՆՆԱՆՆԱՏՈՐԱՆՈՒՅԵՍԱՄԻՆՊԱՍԱՐՎՅՈՅԵՎՆՅՈՒԿՄԵՆՍԱՄԻՆԿԱՆՈՒԿ
ԱՐԱՐՉՈՂԱԿԱՌՍՈՒԲՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ԿԿՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ՈՅԵՎՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ԿՆԵՆՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ՎԱՆՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ԱՐՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ՈՎ: ԳՈՍՅԵՅՉՈՐՈՎ: ԱՐԵԱՐԻՄՈՎ: ՀԻՆՆԱՎ: ԶԱՍ: ԵԵԿԻՍԱՆՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ՅԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԿԵՏԱՆԵՂԱՄՄԵՆ: ՉԱՆՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ
ՈՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄՆԱՆՈՒՄ

ՇՆՈՐՀԻՒՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԼԵԱՄՅԲ ՄԱՐԴԱՍԻՐԻՆ ԱՅՅ, ԵՄ ԶԱՔԱՐԷ ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽՈՒՑԵՍ, ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ, ՈՐԴԻ ՄԵԾԻ ՍԱՐԳՍԻ, ԳԱՆՁԱԳԻՆ / ԱՐԱՐԻ ԶՅՈՉԱԿԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ ՅԱՌԻՃԱ Ի ՅԻՒՐ ԲՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՏԻՐԱՑՆ, ՅԱՂԱԳՍ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՏՆ ԻՄՈՅ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱՄԱՐ ԹԱԳՈՒՅՈՒՆ / ՓՐԿՈՒԹԵԱՆ ԻՆՁ ԵՒ ՀԱՐԱՋԱՑ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ ԻՒԱՆԵԻ ԵՒ ԶԱԲԱԿԱՑ ՄԵՐՈՑ ՇԱՅՆՇԱՅԻ ԵՒ ԱԲԱԳԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ: ՇԻՆԵՑԻ Ի ՍՄԱ ԱՄՐ/ՈՑ ԵՒ ԶԿԱԹՈՂԻԿԵՍ՝ ԲԱԶՈՒՄ ԾԱԽԻԲ ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻ ԱՄԵՆԱՅՆ ՄՊԱՍԻԲ ԵՒ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ: ԵՒ ԶԻՄ ԳԵՂՆ, ՈՐ ԷՐ ՄԵՐՁ Ի ՍԱՆՅՈՒՐԲ ՈՒԽՏՍ՝ ԶՄՈՂՈՐ/ԻՄՆ, ԸՆԾԱԵՑԻ [Ի] ՍՈՒՐԲ ԱԾԱԾՆԻՍ ԲՈԼՈՐ ԻՒՐ ԱՄԵՆ ՀԱՂԱՀԱՏՈՎ, ՍԱՐՈՎՆ ԵՒ ԶՐՈՎՆ ԶՈՐ ԲՆԱԿԱՆ ԼԵԱԼ Է, ԵՒ ԵՏՈՒ ԶԱՂԱՑ ՄԻ Ի ԳԵՏԻԿ, ՈՐ ԴԻՒԱՂԱՑ ԿՈՉԻ, / ԶԱՂԱՑ ՄԻ ՅԱՆԻ՝ ԳԼԻՁՈՐԻՆ ԵՒ ՊԱՐՏԷՁ ՄԻ Ի ԾԱՂԿՈՑԱԶՈՐԻՆ, ԱՅԳԻ ՄԻ ՅԵՐԵԲԱՆ ԵՒ ԱՅԳԻ ՄԻ Ի ԹԱԼԻՆ, ԵՒ ԶԱՌԱՋԻՆ ՍԱՀՄ/ԱՆՔՆ, ՈՐ ԲՈՒՆ ԼԵԱԼ ԷՐ՝ ՀԱՍՏԱՏԵՑԻ, Ի ՍԱՀՄԱՆԱԽԱԶԷ Ի ՀԱՌԻՃՈՅ ԳԵՏՆ, ԿՈՌՄԱՐԳՈՎ, ԳԲԵՐՈՎՆ, ՑԱՄԱՔ ԶՈՐՈՎ, ԾԻՆԱՐԻՆ ՀԱՐ/ՈՎՆ, ԳՈՄՑԵՑ ԶՈՐՈՎՆ, ԱՐԵՆԱՂԲԻՒՐՈՎ, ՀԻՆ ՀԱՌԻՃԱՌՎ, ԵՒ ԵՂԻ ՍԱՀՄԱՆ ԶԱՅՍ, ՈՐ ՅԱԲԱԳ ԽՈՐԱՆՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՍ ՅԻՄ / ՅԱՆՈՒՆ ՀԱՆԱՊԱԶ: ԱՐԴ, ՈՐՔ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՆ ԶՅԻՇԱՏԱԿՍ ՄԵՐ ԱՐԴՆԻ ՅԱՅՅ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ, ԻՍԿ, ՈՐՔ / ՀԱԿԱՌԱԿԻՆ ԵՒ ՀԱՆԵԼ ԶԱՆԱՆ ՓՈՔՐ ԻՆՁ ԿԱՍ ՄԵԾ՝ ԶԱՆԵԾՍ ԿԱՅԵՆԻ ԵՒ ԶՅՈՒՂԱԻ ԺԱՌԱՆԳԵՍՑԵՆ ԵՒ ԿՐԿԻՆ ՆՁՈՎԵՍՑԻ ՅԱՅՅ: / ԹԷ ՈՔ ԲՈՆՈՒԹԼԵԱՄՅԲ ԵՒ ՈՒԺՈՎ ՏԱՆԻ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ԵՂԻՑԻ ՆՁՈՎԵԱԼ. ԱՄԵՆ: ԳՐԵՑԱԲ ԿՏԱԿՍ ՀԱՍՏԱՏ, Ի ԹՈՒԻՍ :ՈԾ: (1201):

Հրատ. Բժշկյանց, 81-82, Շահխաթունյանց, 386,
Մխիթարյանց, Հառիճ, 62, Ալիշան, Շիրակ, 161,
Գեորգեանց, 150, Եղիազարյան, «Էջմիածին»,
1957, Ա, 58, Գագիկ Հառիճեցի, 32-33:

Ծանոթ. Հառիճավանքի ամենից ուշագրավ շինարարանվիրատվական արձանագրությունն է, որտեղ փաստված է Ջաքարե ամիրսպասալարի կողմից նախկին տերերից վանքը գնելու, ամրոց և կաթողիկե եկեղեցի (Ս. Աստվածածին) կառուցելու, եկեղեցական սպասք և սրբություններ, ինչպես նաև անշարժ գույք՝ իր հայրենատիրաց Մողորիս գյուղը, մեկական ջրաղաց Գետիկ գյուղից և Անիի Գլիծոր թաղամասից, մեկ պարտեզ Անիի Ծաղկոցածոր թաղամասից և մեկական այգի Երևանից ու Թալիսից նվիրելու իրողությունը:

51. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի (գավթի միջից) կամար-շրջանակի վրա, 1 տող.



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅՅ, ԵՄ ԶԱՔԱՐԷ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ, ՇԻՆԵՑԻ ԶԿԱԹՈՂԻԿԵՍ:

Հրատ. Շահխաթունյանց, 385, Ջալալյանց, Ա, 213,
Մխիթարյանց, Հառիճ, 51, Ալիշան, Շիրակ, 159,
Գեորգեանց, 148, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 59,
Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 269:

Ծանոթ. Գրված է շինարարության ժամանակ՝ 1201 թվին:

52. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային և արևելյան պատերի վերին անկյունում, քիվի տակ, ծաղկագիր և ուռուցիկ տառերով, արտաքուստ, 1 տող.



ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԱՇԽԱՏԱԻՈՐԱՑ ԱՄԵՆ / ԼԵԿԵՂԵՑՅՈՅՍ:

Հրատ. Մխիթարյանց, Հառիճ, 61, Ալիշան, Շիրակ, 160:
Գեորգեանց, 149, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 60,
Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 269,
Գագիկ Հառիճեցի, 33:

Ծանոթ. Վերջին բառը արևելյան մասում, ըստ երևույթին, հետո են ավելացրել: Գրված է եկեղեցին կառուցող վարպետների կողմից, իրենց հիշատակին, շինարարության ընթացքում:

Ս. Գևորգյանցն արձանագրության սկիզբը կարդացել է ԿԵՂՈՅՍ (կամ տեղոյս) ԱՍՏՈՒԱԾ: Հ. Եղիազարյանը ՈՂՈՐՄԵԱ բառից հետո կարդացել է ՇԻՆՈՂԱՑ, իսկ Գ. Հառիճեցին չի կարդացել վերջին ԵԿԵՂԵՑՅՈՅՍ բառը:


Քյուրտյանի «վիճագրահավաքը» նշում է, որ այս վկայագիրը Ալիշանը չի հրատարակել:

53*. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արևի ժամացույցի շառավիղների տակ, ուռուցիկ տառերով.



Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Բ

54. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի (գավթի մեջ) կիսաշրջան բարավորի վրա, 10 տող.




Ի ԹՈՒԻՆՆ :ՈԿԳ: (1214) / ԿԱՄԱԻՆ ԱՅ, ՄԵՔ ԶԱՌԻՃ/ԵՑԻՔ,
 ԶԱՅՐ ՊԵՏՐՈՍ ԵՒ ԱՅԼ ՄԻ/ԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ, ԶԱՍՏԱՏԵՑԱՔ
 ՅԱԻՏԵՆ/ԻՑ ԿՏԱԿ ԱՆՋՆՁԵԼԻ ՄԻՆՉ Ի ԳԱԼՈՒՄՏՆ ՔԻ ԵՒ /
 ԵՂԱՔ ՍԱՅՄԱՆ ԱՆԽԱՓԱՆ, ԷԹԵ ԶԱՅՐ ՈՔ ՓՈ/ԽԻ ԱՌ ՔՍ.
 ԳԻՇԵՐԼԱՅՊԱՇՏԱԻՆ ԵՒ :Գ: ՔԱՌԱՍՈՒՆՔ ԵՒ / ԹԵ ԵՐԵՑ ԿԱՍ
 ԿՈՒՍԱԿՐԱԻՆ ԱԲԵՂԱ :Գ: ՔԱՌԱՍՈՒՆՔ / ԱՊԱՇԽԱՐՈՂԻ :Բ:
 Ի / ՄԱՐԴՆ, :Ա: ԱԻՐ ԺԱՍ ԶԱԻՐ ԵՒ ԱՄԵՆ ԵՂԲԱՐՑ, / ՈՐՔ
 ԶԱՍՏԱՑ ՊԱՅԵՆ ԱԻՐՅՆԻՆ Ի ՔԷ, ՈՐՔ ԶԱԿԱՌԱԿԻՆ ԴԱՏԻՆ Ի ՅԱՅ:

Չրատ. Շահխաթունյանց, 385, Ջալալյանց, Ա, 213,
 Մխիթարյանց, Զառիճ, 81, Ալիշան, Շիրակ, 160,
 Գեորգեանց, 151, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 57,
 Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 269, Գագիկ Զառիճեցի, 34:

Ծանոթ. Քյուրտյանը, վիճաբարը համեմատելով Ալիշանի հրապարակման հետ, գրում է. «Տարբերություն չկայ բացի միայն վերը յառաջ բերուած մասեն, որով աւելորդ նկատեցի ամբողջ արծանագրութիւնը տալ հոս»: Կարծում ենք, միանգամայն տարակուսելի է Քյուրտյանի «որոշումը»:

55. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսարևելյան ավանդատան մուտքի գլխին, 8 տող.



ԵՍ՝ ԱՐՏԵԻԱՆ ԾԱՌԱՅ ՔԻ ԵՒ ԱՍ/ՈՒՄԻՆ
 ԻՄ ՆՈՒՐՍԹԻ, ՄԵԾ ՅՈՒՄՈ/Կ ՍՏԱՑԱՔ
 ԶԿԱՐԱԳՈՅՐՍ ԸՆԾԱ ՄԲ Ե/ԿԵՂԵՑՈՅՍ
 ԵՒ ՍՊԱՍԱԻՈՐՔ ՄԲ ՈՒԽ/ՏԻՍ
 ՍԱՅՄԱՆԵՑԻՆ ՄԵՁ ՅԱՄԵՆԱՅՆ / ԱՄԻ
 :Դ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, :Բ: ԱԻՐ ԻՆՉ ԵՒ :Բ: /
 ՆՈՒՐՍԹԻ Ի ՏԱԻՆԻ ԶԱՄԲԱՐՉՄԱՆՆ
 ԱՆԽ/ԱՓԱՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՅՆԵԱԼ
 ԵՂԻՑԻՆ. ԱՄԵՆ:

Չրատ. Ջալալյանց, Ա, 216, Մխիթարյանց, Զառիճ, 65, Ալիշան, Շիրակ, 162,
 Գեորգեանց, 150-151, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 60,
 Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 271, Գագիկ Զառիճեցի, 36-37:

Ծանոթ. Զամարում ենք 13-րդ դարի, թերևս հենց եկեղեցու օծման ժամանակ է նվիրվել վարագույրը՝ 1201 թվին:

56*. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատին, կտիտորական քանդակի կենտրոնում ագուցված Տիրամոր պատկերով մարմարին, 2 տող.



ՄԱՅՐ ՔՍԻ / 1858:

57*. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, արտաքուստ, 1 տող.

ԵՍՉՑԻՍԱՔԻՍ ԵՄ ԵԳԵՑԻ ՍԱՐՔԻՍ:

Ծանոթ. Երրորդ կցագիր տառը պայմանական է վերծանված, կարելի է կարդալ նաև ԳԵԵՑԻ:

58*. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արտաքուստ, հիմնաշարին, 1 տող.

ԱՅԼ ԻԱՅՆ...

59*. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արտաքուստ, 2 տող.

ՀՅԻ ...Շ ՅԻ... / ...ԲԻՆ...

60. ԳԱՎԻԹ. արևելյան պատին, արտաքուստ, եկեղեցու մուտքից հարավ, վերին մասում, 9 տող.

ԱՅՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԴԻՆԱԲՈՐ ՊԱՏՐՈՆՆ ԿԱՐՅԱՄՆ ԵՄ
ԱՅՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԴԻՆԱԲՈՐ ՊԱՏՐՈՆՆ ԿԱՐՅԱՄՆ
ՇԻՆԵԱՑ ԶՎԱՅԵԼՈՒՐԶ ԺԱՄԱՏՈՒՆՍ ԵՒ ԷԲԵՐ Զ/ՄԻԻՍ ԶՈՒՐՍ
ՅԻՇԱՏԱԿ ՉՈԳՈ ԻԻՐՈ ԵՒ ԶԱԲԱԿԱՑ ԻԻՐՈՑ / ԻԵՒ ԱՄՈՒՄՆՈ
ԻԻՐՈ ԹԱՄԱՐԻՆ, ԵՒ ՏՐ ՉԱՄԱԶԱՄՊ ԵՒ Չ/ԱՅՐ ՅՈՐՅԱՆԵՍ
ՄԻԱԲԱՆԱԲԵՍ Ի ԽՆԴՐՈ ԴՍԵՐՆ ԻԻՐՈ / ԽԱԹՈՒՆԻՆ
ՉԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱԲՆԻ ԹԵՈՂՈՍ ԹԱԳԱԲ/ՈՐԻՆ ԶԱՄԵՆԱՅՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ ՅԱՆՈՒՆ ԹԱՄԱՐԻՆ ՊԱՏ/ԱՐԱԳԵԼ ԶՔՍ ԱՆԽԱՓԱՆ,
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՅՆԻՆ ԱՅ : ԹՎ / ԽԱՓԱՆԵ ԴԱՐՏԻՂ


Չրատ. Շահխաթունյանց, 389, Մխիթարյանց, Չառիճ, 73,
Ալիշան, Շիրակ, 162, Գեորգեանց, 153-154,
Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 60,
Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 270,
Գագիկ Չառիճեցի, 35:

Ծանոթ. Առաջին տողը կրկնված է մեծ մասամբ, հինգերորդ տողի սկզբի մի քանի տառերը քերված են, Ա տառը գրված է երկու գրչությամբ, խառն կարգով: Ցավոք, թվականը չի գրված, բայց Անիի մեծատունը Վահրամ Չեջուբը Շիրակի արձանագրությունների մեջ հիշատակված է 1229-1235 թվականներին:

1219թ. Հառիճավանքում Հովհաննես գրչի ընդօրինակած «ժողովածոյ» ձեռագրի հիշատակարանում գրված է. «Եւ զմեծ իշխանն մեր /// (մեկ բառ անընթեռնելի) Վահրամ, որ զժամատունս շինեաց ի դրան Կաթողիկէս եւ զորդիս իւր՝ զԻշխանն եւ զՍարգիս, պահեսցէ խաղաղութեամբ...»³⁰: Այսինքն՝ 1219թ. գավիթն արդեն կառուցված էր, ուստի մեր վկայագիրը կարելի է թվագրել առնվազն այդ թվականով:

Հ. Եղիազարյանը վիճաբանի «սաստիկ մաշված ու ջարդոտված լինելու հետևանքով» վերծանությունը վերցրել է Ղ. Ալիշանից, այն դեպքում, երբ այն առկա է Ալիշանին նախորդած հեղինակների մոտ: Նախորդ հրատարակիչները չեն անդրադարձել առաջին «ավելորդ» տողին: Վերջին երկու բառերը, մանր տառերով, հավանաբար, ավելացված են հետագայում: Նման իրավիճակ էր նաև Սարգիս ճոնի վկայագրում:

61. **ԳԱՎԻԹ.** հյուսիսային պատին, ներքուստ, 8 տող.



[ԹՎԻՆ] ՈՂ (1221) / ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ՀԱՅՐ ՊԵՏՐՈՍ ԵՒ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԱՄԵՆ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՈՐ ԱՄԵՆԱՅՆ / ՈՐ Ի ՎԱՆՔՍ ՄԻԱԲԱՆԵ ՈՉԻՆՉ ԱՆԱՍՈՒՆ ՉՍՏԱՆԱՆ ԵՒ Ո՛Չ... / ՏԵՂ ԵՒ Ո՛Չ ՍԵՐՍԱՅԱՆ ԵՒ Ո՛Չ ՓԵԹԱԿ, Ո՛Չ ՈՉԽԱՐ, Ո՛Չ ԶԻՒ՛, ԵԹԵ ՈՔ ՅԱՄԵՆ / ...ԻՆ ԵՒ ԶՈՒԳԵՍ Զ...ՎՐԱՆՑՆ ԳՐԵԱԼՍՆ ԵՒ Զ...ԵՑՍ ԽԱՓԱՆԵԼ / ԶԱՆԱ ԿԱՍ ԶԳԻՐՍ ԶՆԶԵԼ՝ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎՍ ԱՌՑԵ / ԵՒ ՈՐ ԿԱՇԱՌԱԲ ՀԱՅՐ ԼԻՆԻ՝ ԶՆՈՅՆ ՆԶՈՎՍ ԱՌՑԵ:

Հրատ. Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 60 (ավելի պակասավոր), Գագիկ Հառիճեցի, 39:

Ծանոթ. Գրված է գեղեցիկ գրչությամբ, բայց հետագայում դիտավորյալ ջարդոտվել է կացնի հարվածներից և խիստ դժվարությամբ են որոշվում տառերը: Ժամանակը որոշվում է Պետրոսի առաջնորդությամբ, որը հիշատակված է 1196-1214 թվականների սահմանում:

Արձանագրության թվագրման հարցում առկա են մի շարք խնդիրներ: Դատելով հայր Պետրոսի առաջնորդության տարիներից, հարկ է նշել, որ վաղագույն թվականը 1192 է՝ վկայված թիվ 42 վիճաբանում, իսկ վերջին թվականը 1219-ը՝ այդ թվին Հառիճում ընդօրինակված ձեռագիր ժողովածուի հիշատակարանում. «Գրեցաւ ի ՈԿԸ (1219) թին Հայոց ի հրեշտակաբնակ ուխտիս Հառիճ՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Գրիգորոյ ..., յառաջնորդութեան հաւր ... եւ Քրիստափորի եւ Սոսթենիսին ... յիշեսցիք եւ զվերայգրեալսս՝ զհայր Պետրոս եւ զՔրիստափոր եւ Սոսթենէս...»³¹: Հառիճավանքի միջնադարյան առաջնորդների անվանացանկը կազմող առաջին հեղինակները՝ Ա. Մխիթարյան, Ղ. Ալիշան, նշում են մեկ հայր Պետրոս՝ աթոռակալած 1185-1220 թթ. (մեր կարծիքով երկու թվականներն էլ

30 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 7, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօշկերեան, Երևան, 2008, էջ 1125:


31 Նույն տեղում, էջ 1126:

հիմնավորված չեն), իսկ վերջին տարիներին վանքի պատմությանն ուշագրավ աշխատանքներ նվիրած Կ. Մաթևոսյանը առանձնացնում է երկու հայր Պետրոս, առաջինը՝ առաջնորդած 1188-ից, երկրորդը՝ 1214-1219թթ.³²: Վերջինիս համար նման մոտեցման հիմք է հանդիսացել Մատենադարանի ՀՊՊ 1886 պատառիկը՝ ընդօրինակված 1209թ. Հառիճավանքում, որտեղ ի թիվս վանքի մի շարք միաբանների՝ հիշված է «գհայր Վարդան Հառիճայոյ»³³: Այսինքն, ըստ Կ. Մաթևոսյանի՝ այդ թվականին վանքի առաջնորդն է եղել հայր Վարդանը:

Վիճագրից քիչ վեր ընթեռնելի է ՈՅ (1221) թվագիրը, որն, ըստ էության, վերաբերում է սույն վիճագրին: Սրանով իսկ կարելի է փաստել, որ հայր Պետրոսը աթոռակալել է առնվազն մինչև 1221թ., քանի որ այդ նույն թվականին որպես առաջնորդ հիշատակված է Գրիգոր վարդապետը:

Ս. Բարխուդարյանի վերծանության մեջ առկա են մի շարք տարրընթերցումներ. երրորդ տողի սկզբում, ՈՐ-ից հետո կարդացվել է ՇՆՈՐՀԻԻՆ, հինգերորդ տողում ՍԵՐՍԼԱՅԱՆ-ի փոխարեն՝ ՍԵՐԱՑԱՆ, նույն տողի վերջում ՅԱՄԵՆ-ի փոխարեն՝ ԽԱՓԱՆԷ:

62. ԳԱՎԻԹ. արևելյան պատի (եկեղեցու արևմտյան պատ) հյուսիսային մասում, 8 տող.



† ԵՍ՝ ՎԱԶԷ, ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԱՄՍՈՒՄԻՆՆԻ ԻՍ ՄԱՍ/ԱԽԱԹՈՒՆ,
ՏՈՒԱՔ :Բ: ԱՅԳԻ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆՍ Ի Փ/ԱՐՊԻ ԵՒ Ի
ՏԱՃԱՏԱԳԵՂ ՄԵԾ ՅՈՒՄՈՎ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐ/ԴՈՒԹԵԼԱՆՆ
ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՅԻ ԵՒ ՄԲ ԵՂԲԱՐՑ ՀԱՍՆԱՏ Է: /
ԿԱՄԱԻՆ ԱՅ ԸՆԿԱԼԱՔ ԵՒ ԶԱՅԼ ԱՐԴԻՆՍՆ ԵՒ ՍԱՐՄԱՆԵՑԱՔ
ԶԾԱՌՋԱՐԴԱՐՆ՝ ՎԱԶԷԻ ԵՒ ՂԱԶ/ԱՐՈՒ ՏԱԻՆՆ՝ ՄԱՍԱԽԱԹՈՒՆԻՆ՝
ԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ / ԱՆԽԱՓԱՆ, ԵԹԷ ՈՔ ԽԱՓԱՆԷ՝
ՊԱՐՏԱԿԱՆ Է [ՄԵՐ] ՄԵՂԱՑՆ:

Հրատ. Շահխաթունյանց, 386, Մխիթարյանց, Հառիճ, 68,
Ալիշան, Շիրակ, 161, Գեորգեանց, 152:

Ծանոթ. Առաջին չորս տողերում աջակողմյան քարի մակերեսը մասամբ կոտորված է: Վերականգնման փակագծերը կազմողը չի դրել, չնայած ձեռագրում բերված լուսանկարում այդ պատկերն առկա է:

Հ. Զյուրտյանը այս վիճագիրը նույնպես հարկ չի համարել ներկայացնել, քանի որ «հրատարակուած է Շիրակ-ի մեջ..., առանց կարելուր տարբերութեան»:

32 Կարեն Մաթևոսյան, Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին, «Էջմիածին», 1998, Ա, էջ 123:

33 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 65:

63. **ԳԱՎԻԹ.** արևելյան պատի հյուսիսային մասում, 8 տող.

ԿԱՄԱԻՆԱՅԵՍՏՈՒՏԻԿԱՍՆԵՆՅՈՒՍՈՒՆ
 ԱՄԱԲԱՆԵՆՆԱԿՈՒՄՈՒՄՆԵՄԵՄՆԱՄՆԱՄ
 ՈՐՈՒԿԱՆՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ԱՄԱՅԻՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ՅԻԱՄԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ԿԱՄԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ՈՐՈՒՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ՏՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ՏՈՒՏԻԿՍ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ / ՄԻԱԲԱՆԵՑԱ
 Ի ՄՔ ՈՒՆՏՍ ԵՒ ԸՍՏ ԻՄ ԿԱՐՈՂՈՒԹԵԼԱՅՍ ԷՏՈՒ
 ԸՆԾԱՅՔ ՍՐԲՈ ԱՍՏՈՒԱՅՈՒԾՆԻ/Ս: ԳԱՅՐ ՅՈՂԱՆՆԵՍ
 ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԳԱՍՏԱՏԵ/ՑԻՆ ՎԿԱՌԹԵԱՄՅԻ ՏՐ
 ԳԱՄԱԶԱՍՊԱ, Ի ՏԱԲՆԻ ՎԱՐ/ԴԱՎԱՌԻՆ ԶԱՄԵՆԱՅՆ
 ԷԿԵՂԵՑԻՔՍ ՅԻՄ ՅԱՆ/ՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՍ.
 ՈՎ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵՂԱՑՆ / ՏԵՐ Է ԵՒ ԿԱՏԱՐԻՉՔՆ
 ԱԻՐԳՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ. ԱՄԵՆ:

Գրատ. Շահխաթունյանց, 385, (նվիրատուի անունը՝ ՊՈՒՏԻԿ),
 Զալալյանց, Ա, 213, Մխիթարյանց, Գառիճ, 66, Ալիշան, Շիրակ, 161,
 Գեորգեանց, 151, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 61,
 Գազիկ Գառիճեցի, 34-35:

Ծանոթ. Ժամանակը որոշվում է Յովհաննես առաջնորդի հիշատակումով, որի անունով կա 1225 թվի արձանագրություն:

64. **ԳԱՎԻԹ.** հյուսիսային պատին, ներքուստ, պատուհանից արևմուտք, 8 տող.

+ ԿԱՄԱԻՆԱՅԵՍՏՈՒՏԻԿԱՍՆԵՆՅՈՒՍՈՒՆ
 ՈՒՍՔՆՈՐԴՈՒՈՒՆԵԱԿԱՄՔԱՄՆԱՄՆԱՄ
 ՏՍՈՂԵՐ ԿԱՅՐԵՆԻՊԱՍԱԳԻՄԱՄ
 ԿԱԿԱՌԱԿՎԱԿԱՄՍԸՄԻՍԵՐՈՒՄ
 ԷՒՐԻՅՈՒՆԵՒԿԱՅՐՍԵՒՄՄԱՄԱՄ
 ԼԻՆ: ՅԱՄՊԱՍԱՄՍԳԻՒՄՆԱՄՆԱՄ
 ԳԻՄԱՆԱՄԱԼԻՆՈՎՉՅԻՇԵԼԼԻՆ
 ԿԱՄՍԱՆԵՑԱԿԱՍՍԿԱՍԿԱՄՍԱՅ
 ԶԵՆՏԻՐԱՍՈՒՄԵՂՈՒՅԵԱԼԵՆՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ԻՉՈՒՄՆԱՄԱՆԷՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ՏՈՒՆԷՒԿԱՅԿԱՄՍԱՄՊԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ԱՈՒՄՈՒՄՈՒՅՆ: ԴԵՄՎՊԱՍԱՄՍԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ԵՒ ՍԻՄՈՒՆԱՅԻՄՎԵՔԵՏԻՄՎԱՅՈՒՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ԱՄՍԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ
 ՈՒՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄՆԱՄ

† ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՄ ՍԱՆԱՍԱՐՍ ԵՒ ԲԻՆՈՂՏԱՍԱՐՍ, ՈՐԴԻՔ ԽՈՒՊԱՍԱՐԻՆ, [Ի] ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱԻՐ ՀԱՄԱՂՋԱՍՊԱՅ ԸՆԾԱԵՑԱՔ Ի ՍԲ ՈՒԽ/SU ՋՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԴՐԱՄԱԳԻՆ ԱՅԳԻՆ, ՈՐ Ի ՆՆՈՐԱՇԻՆԻԿ, ԱՐԴ ՈՎ / ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԿԱՄ ԽՍԸՄԻ ՄԵՐՈՒ ԿԱՄ ՅԱԻՏՆԱՐԱՑ՝ ՆՁՈՎՍ ԱՌՑ/Է Ի ՏԷ ՅՍ Է ԵՒ ՀԱՅՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔԻՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ, ՈՐ ՅԵՏ ԱՂՍՏՈՒԱՅՈՒԹՆԻՆ :Ժ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, :Բ: ԽՈՒՊԱՍՄԱՐԻՆ, :Բ: ԿԻՄԱՅԹԻՆ, :Բ: ՅՈՎԱՆԻՍԻ, / :Դ: ՍԱՆԱՍԱՐԻՆ: ՈՎ ՋՅԻՇԱՏՐԱԿՍՂ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի ՔԷ. ԱՄԷՆ: / ՀԱՍՏԱՏԵՑԱԲ ԿՏԱԿՍ Ի ԿԱՄՍ ԱՅ, [Ի ԹՎԻՍ :ՈՁԴ: (1235):

Հրատ. Շահխաթունյանց, Բ, 265, Ջալալյանց, Ա, 215, Մխիթարյանց, Հառիճ, 75, Ալիշան, Շիրակ, 163, Գեորգեանց, 154-155, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 61 Բյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 271, Գազիկ Հառիճեցի, 37:

Ծանոթ. Ներկայումս կենտրոնում ունի ջարդված մաս: Չեռքի տակ ենք ունեցել 1936 թվին կատարած վերծանումն ու լուսանկարը, երբ այդ վնասվածքը չկար:

Ջարդված հատվածի վերականգնումները համապատասխանում են նաև Հ. Բյուրտյանի «վիճագրահավաքի» վերծանությանը, սակայն վերջինում առկա են այլ տարրերը, որոնցում առաջին տողում ԽՈՒՊԱՍԱՐԻՆ-ի փոխարեն՝ ԽՈՒՊԱՍԱՐ (Հ. Եղիազարյանի և Գ. Հառիճեցու մոտ՝ ՆՈՒՊԱՍԱՐ), չորրորդ տողում ԽՍԸՄԻ-ի փոխարեն՝ ԽՍՄԻ (Հ. Եղիազարյանի մոտ՝ ՍԱՄԽՍԸՍ), վերջին տողում, ԿՏԱԿՍ բառից հետո՝ Ի ԿԱՄՍԱՅ (Հ. Եղիազարյանի և Գ. Հառիճեցու մոտ՝ ԿԻՐԱԿՈՍԻ ԿԱՄՍԱՅ: Հ. Բյուրտյանի վկայմամբ՝ տեսարկում նշված թվականը վերագրված է հաջորդ՝ Տիրատուրի վկայագրին:

65. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատին, ներքուստ, նախորդից ներքև, 4 տող.

† ԵՄ՝ ՏԻՐԱՏՈՒՐ, ՄԵՂՈՒՑԵԱԼ ԾԱՌԱ ՔԻ, Ի ՔՐՏԱՆՑ ԻՄՈՑ ԳՆԵՑ/Ի ՋԽՈՒՊԱՍԱՐԷԱՆՑ ԱՅԳՈՅՆ ՉՈՐԻՑՆ ՄԻՆՆ ԵՒ ԵՏՈՒ Ի ՍԲ ՈՒԽ/SU, ԵՒ ՀԱՅՐ ՀԱՄԱՂՋԱՍՊ ԵՒ ՍԱՀՄԱՆԵԱՑ, ՈՐ ՏԱԻՆԻ ԱՆԴԻԷԻ / ԱՌԱՔԵԼՈՅՆ :Գ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՅԱՆՈՒՆ ԻՄ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի ՏԷ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 215 (Տիրատուրի փոխարեն Տրիտուր, որը կրկնել է Ալիշանը), Մխիթարյանց, Հառիճ, 76, Ալիշան, Շիրակ, 163, Գեորգեանց, 155, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 61, Գազիկ Հառիճեցի, 38:

Ծանոթ. Ժամանակակից է նախորդին:
Գրչագիրը վերևում:

66. ԳԱՎԻԹ, հյուսիսային պատին, ներքուստ, նախորդից ներքև, 3 տող.

ԵՄՍՂ ՄԻՄԵՈՆ, ԱՅԼ ԱՐԴԻԻՆՔ ԵՏ Ի ՍԲ ԱԾ ԱԾԻՆՍ ԵՒ ՀԱՅՐ ՅՈՂԱՆՆԵՍ ԵՒ / ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԱՔ :Բ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՍԲ ԱՆՏՈՆԻ, :Ա: ՄԻՄԵ/ՈՆԻ, :Ա: ԳՐԻԳՈՐՈ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ. ԱՄԷՆ:

Հրատ. Մխիթարյանց, Հառիճ, 76, Ալիշան, Շիրակ, 161, Գեորգեանց, 155, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 61 Բյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 271, Գազիկ Հառիճեցի, 38:

Ծանոթ. Հովհաննեսը առաջնորդ է եղել 1224 թվերից:

67. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատին, ներքուստ, 6 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅԵՍՄԻԻՆԱՐ ԳՆԵՑԻ ՅԵՐԵԻԱՆ ԶԵԿԱԳՐԻՆ ՈՐԴՈՅՆ
 ԱՅԳԻՆ ՅԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ ԵՒ ԵՏՈՒ Ի ԴԱՌԻՃԱՅ ԵՒ / ՏՐ ՅՈՐՁԱՆՆԵՍ
 ՏՐՑՈՆ ՀԱՆՆԵՍԵՒ ՄԻԱԲԱՆՔՍՍԱՎԱՆԵՑԻ ԽՍԱՐԻՆ Գ՝ ԱԻՐ ՊԱՏԱ
 ՐԱԳ՝ Ա՝ ՅՈՐՈՅԱՆՈՒՆ ԵՒ Բ՝ ԱԻՐՆԻ ԻՆՁ ԱՌՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԻՉՔՆ
 Ի ԴՅԱՆԱՐԿՆԻՆ ՅԱՅՈՐՔԻՆ ԱՓԱՆԵՆ ԴԱՏԻՆ Ի ՔԷ. ԽԱԶԳՈՅՏԻՆ ՇԱԲԱԹԻ /
 ԱԻՐՆ ԱՌՆԵՆ ԶԺԱՄՆ Ի ԹՈՒԻՆ՝ :ՈՂԳ. : (1224) :

ԵՍ ԳՐԻԳՈՐ, ՍՆՈՒՑԱԾ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ ԴՍԵՐՆ ՆՐՁԻՅՍԻՆ, / ՏՈՒԻ
 ԱԲԵՏԱՐԱՆ ԶՈՒԳԱԲ Ի ՄԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՈՂՈՐՍՈՒԹԵԱՄԲ ՊՐԱՐԻՆՈՆԻՆ
 ԻՄՈ ԵՒ ԴԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Գ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, :Բ: ԱԻՐԻ / ԻՆՁ ԵՒ
 :Ա: ԲԱՆՈՒՇԱՐԻՆ: Ի ԹՎԻՍ :ՈՂԳ: (1235):

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՄԽԻԹԱՐ, ԳՆԵՑԻ ՅԵՐԵԻԱՆ ԶԵԿԱԳՐԻՆ ՈՐԴՈՅՆ
 ԱՅԳԻՆ ՅԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ ԵՒ ԵՏՈՒ Ի ԴԱՌԻՃԱՅ ԵՒ / ՏՐ ՅՈՐՁԱՆՆԵՍ
 ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՐՄԱՆԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Գ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, :Ա:
 ՅՈՐՈՅ ԱՆՈՒՆ ԵՒ :Բ: ԱԻՐՆ՝ ԻՆՁ ԱՌՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ
 ԱԻՐՁՆԻՆ ՅԱՅ, ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ ԴԱՏԻՆ Ի ՔԷ. ԽԱԶԳՈՅՏԻՆ ՇԱԲԱԹԻ /
 ԱԻՐՆ ԱՌՆԵՆ ԶԺԱՄՆ: Ի ԹՈՒԻՆ՝ :ՈՂԳ: (1224):

Չրատ. Շահխաթունյանց, 386, Ջալալյանց, Ա, 214,
 Մխիթարյանց, Դառիճ, 74, Ալիշան, Շիրակ, 162,
 Գեորգեանց, 154, Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 61
 Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 270,
 Գագիկ Դառիճեցի, 39:

Ծանոթ. Գ. Քյուրտյանի «Վիմագրահավաք»-ի վերծանությունը հրատարակիչը մասամբ է ներկայացրել,
 միայն Դ. Ալիշանի մոտ պակասող հատվածները: Ըստ վերջինի՝ թվականը վերաբերում է այս արձանա-
 գրությանը, իսկ «Վիմագրահավաքը» այն «կցում է» հաջորդ՝ Գրիգորի վկայագրին:

68. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատին, ներքուստ, նախորդից ներքև, 4 տող.

ԵՍ ԳՐԻԳՈՐ, ՍՆՈՒՑԱԾ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ ԴՍԵՐՆ ՆՐՁԻՅՍԻՆ, / ՏՈՒԻ
 ԱԲԵՏԱՐԱՆ ԶՈՒԳԱԲ Ի ՄԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՈՂՈՐՍՈՒԹԵԱՄԲ ՊՐԱՐԻՆՈՆԻՆ
 ԻՄՈ ԵՒ ԴԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Գ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, :Բ: ԱԻՐԻ / ԻՆՁ ԵՒ
 :Ա: ԲԱՆՈՒՇԱՐԻՆ: Ի ԹՎԻՍ :ՈՂԳ: (1235):

Չրատ. Ջալալյանց, Ա, 214, Մխիթարյանց, Դառիճ, 74,
 Ալիշան, Շիրակ, 162, Գեորգեանց, 154,
 Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 63,
 Քյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 270,
 Ս. Ավագյան, ՎԱԲ, 83-84 (ոչ ամբողջական),
 Գագիկ Դառիճեցի, 40:

Ծանոթ. Ս. Գևորգյանը թվականը կարդացել է ՈՁԳ (1234): Գ. Եղիազարյանի մոտ բացակայում է ԴՍՏԵՐՆ ՆՐՋԻՍԻՆ բառակապակցությունը: Այս արձանագրությունը «տետրում» կա, բայց Գ. Բյուրտյանի «հաճությամբ» տեղ չի գտել հրապարակման մեջ, մատնանշված է միայն Դ. Ալիշանի «վերծանած» ԲԱՆՈՒՅԱՇ-ը և :ՈՁԳ: թվականի վերագրումը հաջորդ «Արսեն»-ի վկայագրին:

Ս. Ավագյանը հատուկ քննության է ենթարկել ՋՈՒԳԱԻՔ արտահայտությունը: Նախ՝ ներկայացրել է նախորդ ուսումնասիրողների կողմից ԱԻԵՏԱՐԱՆ ՋՈՒԳԱԻՔ բառակապակցության մեկնաբանությունները՝ «աւետարան գարդերով, գարդարված գիրք», այսինքն՝ «զուգել, գարդարել» իմաստներով: Բանասեր-վիճագրագետը կարծում է, որ «այս բացատրությունը այնքան էլ ստույգ չէ» և տալիս է իր մեկնաբանությունը. «Ձոյգ, զոյգք-ը տվյալ իրադրության մեջ պետք է հասկանալ ձեռագիր ավետարանի կազմերը իրար մոտեցնելու և ծածկելու հարմարանք կամ ճարմանդներ, որ պատրաստվում էին տարբեր մետաղներից՝ մշակման տարբեր արվեստով, և հանդիսանում ձեռագիր գրքերի կազմերի անհրաժեշտ մասերը» (Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 84):

Գրչագիրը վերևում:

69. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատին, ներքուստ, շարունակված նախորդի վերջին տողից, 4 տող.

ԵՍ՝ ԱՐՍԵՆ, / ՍՆՈՒՑԱԾ ՊԱՐՈՆ ՆՐՋԻՍԻՆ ԸՆԾԱԵԱՑ ԱՐԴԻԻՆՔ
Ի ՍԲ ՈՒԽՏՍ :Բ: ԱԻՐՂ / ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ ՈՒ :Ա: ԽՈՒՇՈՒՇԻՆ
ԿԱՏԱՐԵՆ ՁՅԻՇԱՏԱԿՍ ՍԵՐ ԼԻՅ ՏՐԱԻՆԻ / Ի ՍԲ ՍԱՐԳԼՍԻՆ:

Պատ. Ջալալյանց, Ա, 214-215, Մխիթարյանց, Գառիճ, 75,
Ալիշան, Շիրակ, 162, Գեորգեանց, 154, Եղիազարյան,
«Էջմիածին», 1957, Ա, 62, Բյուրտյան, «Բազմավեպ»,
1957, 11-12, 271, Գագիկ Գառիճեցի, 40:

Ծանոթ. Չորրորդ տողն անհամեմատ մանրատառ փորագրված է երրորդ տողի վերջավորության ներքևում: Կազմողի ձեռագրում այն գրված չէ: Նրջիսը Ջաքարյան հանրահայտ եղբայրների քույրն է, որի պահած, դաստիարակած (սնուցած) անձանց վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան: Գ. Գառիճեցու մոտ վիճագիրը սկզբից և վերջից պակասավոր է: Գրչագիրը վերևում:

70. ԳԱՎԻԹ. արևելյան պատին (եկեղեցու արևմտյան պատ), ներքուստ, եկեղեցու մուտքից հյուսիս, 9 տող.

ԿԱՄԱԻՆԱՅԵԻՅԱՇԽԱՆՆԱԿԱԼՈՒԹԵ
ԵՂԱՆԱՅՆԱՆ ՂԱՆ ՂԱԶԱԿԻՆԵՍԵԼԻՈՒԹՈՒՄ
ԴՉԱՂԱԿԻՆԵԻՒՄՈՂՍՄԱՆՆԱԿԱԼՈՒԹՈՒՄ
ԻՑ ԼՈՒՄԻԱԲԱՆԵՑԱՔԻՍԲԱԾԱԾԻՆՍԵԻՉՍԵՐԲ
ԱՅ ԻԳԱՆՁՈՎՇԻՆԱԾ ՁԻԹ ԱՆԱՔՆԿԱԿԵ
ԿԵՑՈՒՍԼՈՅՍԼՐԳԼԼԻՆԻՈՂԻՄՈՂՈՒ ՈՂԻՄԱՆԲ
ԱԻՈՂԻՄԱԶ ԳԻՄԱՂՈՅԻՄԻՉ ԿԱՅՈՒՄԻՎ
ՄԵՅԱՅԵԻՒՓԵՂԱՄԲԱՍՆ ԿԱՄԱԻՉՔԱՆՆԱՅԵ
ՆԱԱՐԵ
ԻԹՎՉՉԳ

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՒ ՅԱՇԽԱՐՅԱԿԱԼՈՒԹԵԼԱՆ / ԵԼՂԱՆԱՑ
 ՂԱՆ ՂԱԶԱՆԻՆ, ԵՄ ԷԼԽՈՒԹԼՈՒ, ՈՐ/ԴԻ ՉԱՂԱՆԻՆ
 ԵՒ ԻՍ ՈՐԴԻՍ ԲԱՇԷՍ ԵՒ ԻՍ ԽԱԹՈՒՆՍ ԷԼԽՈՒԹԼՈՒ,
 ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ի ՄԲ ԱԾ ԱԾԻՆՍ ԵՒ ՋՄԵՐ Բ/ԱԺԻՆ
 ԳԱՆՁՈՎ ՇԻՆԱԾ ՁԻԹԱՅԱՆՔՆ ՏՎԱՔ Ե/ԿԵՂԵՑՈՒՍ
 ԼՈՅՍ [ԼՈՒՍ] ԸԼՆԻ Ո՛Չ ԻՍ ՈՐԴՈՒ, Ո՛Չ ԻՍ ԱՂԲ/ԱԻՐ,
 Ո՛Չ ԻՍ ԱԶԳԻ ՄԱՐԴՈՅ ԴԱԻ ԶԿԱՅ: ՈՎ ԴԱՎԻ ԱՐՆԷ
 ՅԱՅ ԵՒ Ի ՓԵՂԱՄԲԱՐԱՑՆ (ՆԱԼԱԹ Է): ԿԱՏԱՐԻՉՔՆ
 ԱԼԻՂՐՅԱՆԻՆ ՅԱՅ / Ի ԹՎԻՆ] : 229: (1334):

Հրատ. Շահխաթունյանց, 385-386, Մխիթարյանց, Հառիճ, 67,
 Ալիշան, Շիրակ, 162, Գեորգեանց, 152, Եղիազարյան, «Էջմիածին»
 1957, Ա, 62, Զյուրտյան, «Բազմավեպ», 1957, 11-12, 269-270,
 Գագիկ Հառիճեցի, 35-36:

Ծանոթ. Հրատարակիչների մոտ անուններն աղավաղված են, թվականը՝ 209:

ՆԱԼԱԹ Է ԲԱՌՂ ՓՈՐԱԳՐՎԵԼ Է ՎԵՐՋՈՒՄ, ՅԱՅ-ից հետո: Կազմողն այն տեղադրել է ՓԵՂԱՄԲԱՐԱՑՆ-ից հե-
 տո: «Փեղամբար»-ը ծագում է պարսկերենից և նշանակում է «պատգամաւոր, մարգարէ» (ՀԲԲ, հ. 4, էջ
 494):

71. ԳԱՎԻԹ. արևելյան պատին, ներքուստ, եկեղեցու մուտքից հյուսիս, 4 տող.

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՄ ԱՍԼԱՆՍ ՄԻԱՅԲ
 ՄԻԱՅԲ/ԱՆԵՑԱՅ ՄԲ ԱԾ ԱԾԻՆՍ
 ԵՒ ՇԻՆԵՑԻ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ
 ԵՒ ԾՆ/ՈՂԱՑ ԻՄՈՑ ՋՄԱՐԱԳՆ:

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԵՄ ԱՍԼԱՆՍ,
 ՄԻԱՅԲ/ԱՆԵՑԱՅ ՄԲ ԱԾ ԱԾԻՆՍ
 ԵՒ ՇԻՆԵՑԻ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ
 ԵՒ ԾՆ/ՈՂԱՑ ԻՄՈՑ ՋՄԱՐԱԳՆ:

Հրատ. Գեորգեանց, 152:


Ծանոթ. Հավանաբար 13-րդ դարի:

72. ԳԱՎԻԹ. արևելյան պատի վերնամասում, ներքուստ, եկեղեցու մուտքից վեր, որմնանկարի
 ծեփի վրա, 1 տող.

† : ՈՂ[Դ] : (1235) Ս...Ջ... [ԽԱՂՉՍ...[ԱՐԼԵՑԻՆ...[ԱՄԼԵՆԱՅՆ ՄԵՐՉԱԿԱՅՍ ՍՈՑԱ ...:

Ծանոթ. Որմնանկարագրի թվականը Ս. Բարխուդարյանը կարդացել է ՈՂԹ, այսինքն՝ միավոր տառը թ
 կարդալու համար շփոթմունք են առաջացրել երկու կողմից առկա զույգ կետերը: Մանուկ Հիսուսի ձեռքի
 գալարի վերնամասում ընթեռնելի է ԵԿԱՅ ՈՐԴԻ գրությունը, որի շարունակությունը չի պահպանվել:

73. **ԳԱՎԻԹ.** արևելյան պատին, ներքուստ, 4 տող.




ՈՒՍՁԵ-ԻՆ (1836) ՀԱՅՅԻՆՅ / ՄԵՔՔՔ
 ԿԱՐՆԵՑԻ ՄԻԱԲԱՆ/ՔՍ,
 :Գ: ՎԱՐԴԱՊԵՏ, :Գ: ՏԻՅՐԱՅԻՆ /
 ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ԱՍՏ:

Հրատ. Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 62,
 Գագիկ Հառիճեցի, 36:

Ծանոթ. Եղիազարյանը թվականից առաջ փորագրված պատկերը վերծանել է ԱՄԻ, իսկ երրորդ տողի վերջում :Գ: ՏԵՐՔ (քահանայք), որին հետևել է նաև Գ. Հառիճեցին:

74. **ԳԱՎԻԹ.** հարավային պատին, արտաքուստ, 5 տող.




ԵՍ՝ ՊԵՏՐՈՍ ՀԱՅԿԱԶԵԱՆՍ,
 ՆՈ/ՐՈԳ ԸՆԿԱԼԱՅ
 ՋԼՈՒՍԱԻՐՉԱԿԸ/ՐՕՆՆ 186.:

Հրատ. Գագիկ Հառիճեցի, 31:

Ծանոթ. Պետրոս Հայկազյանը կամ Հայկազունին (1839-1927 թթ.) XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբների բավական հայտնի հասարակական, մշակութային գործիչներից է, եղել է Ալեքսանդրապոլի Բարենպատակ ընկերության հիմնադիր անդամ: Երկու անգամ ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, աշխատակցել «Մեղու Հայաստանի», «Արարատ» պարբերականներին, համագործակցել Ղազարոս Աղայանի հետ³⁴: Դժվարանում ենք մեկնաբանել այս վկայագրի առկայությունը Հառիճավանքում, նաև ՆՈՐՈԳ ԸՆԿԱԼԱՅ ՋԼՈՒՍԱԻՐՉԱԿԸ/ՐՕՆՆ արտահայտությունը. այն, ըստ ամենայնի, վկայում է, որ Պետրոս Հայկազունին պատկանելիս է եղել հայ ֆրանկների կամ կաթոլիկների համայնքին և հետո միայն ընդունել հայ առաքելական եկեղեցու դավանանքը: Պետրոսն, անշուշտ, առնչություն ունեցել է վանքի հետ, երբ հարց է բարձրացվել վանքի դպրոցը «ժառանգավորաց» դարձնելուն և այդ նպատակով գյուղացիներից գումար հավաքելուն՝ նա դեմ է եղել³⁵:

Նախորդ հրատարակիչը Պետրոսի ազգանունը կարդացել է ԱՅՎԱԶԵԱՆ, իսկ թվականը՝ 1880:

75*. **ԳԱՎԻԹ.** հարավային պատին, արտաքուստ, 2 տող.




ՅԱՐԻԹԻՆ / ՅԱՐԵԱԼ:

Ծանոթ. Երկրորդ բառը կարելի է կարդալ նաև ՏԱՐԵԱԼ:

34 Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 263-264:
 35 Նույն տեղում, էջ 136:


76. **ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ.** արևմտյան ճակատին ագուցված ուղղանկյունաձև մարմարե սալին, մանրատառ, 6 տող.



Յամի Տեառն 1892 կանգնեցաւ զանկակատունս ընդ ձեռն ընկերութեան Հառիճոյ վանից / ի յաւերժական յիշատակ Յովսէփ աւագ քահանայի Կոստանեանց Հիմնադրի եւ նախագահի ընկերութեան եւ նախադասեալի վերջին նորոգութեան Սրբոյ մենաստանիս եւ բացման ժառանգաւորաց դպրոցիս սորին Ուղեւորեալ յերեւան քաղաք պաշտպան կալ իրաւանց վանիցս հանգեալ Տէր ի Վաղարշապատ յամսեանն Փետրվարի ի մետասաներորդ աւուր յամի Տեառն 1890 եւ ամփոփեցաւ ի վանս Ս. Գայիանեայ: Որոյ յիշատակ եղաւ սոյն արձանի գիտորինս արարալից:

Գրատ. Գագիկ Հառիճեցի, 28:

77. **ՔԱՐԵ ԳՈՒՌ.** ճակատային մասում, 3 տող.



...[Բ]ԱՐԵԽԱՒԻՍՈՒԹԵՂԱՆ...ՏԵՑ ՔԱՅ/ԱՆԱ
ԵՒ ԱՅԼ [Ի]ԻՐ ԸՆՏԱՆԵԼԱՅՑ ՄԻՆԱՍԻՆ, ԳՆԴՈՂ/ԻՆ,
ՊՈԱՒՇԻՆ, ՏՆԿԻՆ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ ՅԻՇԵՑԵՔ:

Ծանոթ. Հուշարձանը գտնվել է վանքի բակում. չի պահպանվել: Երկրորդ տողի վերջում կազմողը Դ տառից հետո կոտրված մասում (երևում է միայն վերին կիսակլորը) կարդացել է Ը, որը, մեծ հավանականությամբ, կարող էր կարդացվել նաև Ո ու անունը վերծանվել, օրինակ՝ ԳՆԴՈՒՏ: ՊՈԱՒՇԻՆ-ից հետո Ս. Բարխուդարյանը կարդացել է ՏԿԻՆ:

78*. **ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՈՒՂՂԱԶԻՔ ՈՐՄԱԽՈՐՇԻ ՊՍԱԿԻ ՔԱՐ,** վանքի բակում, 2 տող.



...ԹՔ ԵՒ ՅՈՒ...
...ԱՆ Պ...

79. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԻՆԱՔԱՐ. գտնվել է վանքի թանգարանում, 2 տող.

ԱԿՑՈՒԹ
ՉԱԿԳԻՄԱ

...ԱԿՑՈՒԹ... / ...ՉԱԿԳ ԽՈՐԱՆ...

Ծանոթ. Ս. Բարխուդարյանն իր դաշտային օրագրում գրում է. որ այս քարը ագուցված է եղել «գավթի հարավային պատին, արտաքուստ»: Նա սրանից վերև նկատել է ագուցված ևս մեկ բեկոր. ...ՈՅ..., տառերը նմանեցնելով նախորդին: Նա գտնում է, որ այս բեկորները «հավանաբար, նորոգության ժամանակ բերված են գերեզմանատան մատուռի քարերից, որոնց վրա մնացած գրերին են նման»:

80. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԻՆԱՔԱՐ, գտնվել է վանքի թանգարանում, 2 տող.


ԵՅՈՒԵՈՒԵԼ
ՈՂԱՑԼԷ

...ԵՅՈՒԵՈՒԵԼ... / ...ՐՇՆՈՂԱՑ ԱԿ...

Ծանոթ. Կարծում ենք, որ վերջին երկուսը նույն արձանագրության հատվածներ են: Ս. Բարխուդարյանը սրանք թվագրում է XIII դարով:

Վիճաբերը մեզ չհաջողվեց տեղում տեսնել, քանի որ թանգարանն այլևս չի գործում, իսկ քարերն ի թիվս այլ ցուցանմուշների՝ տեղափոխել են Հայաստանի պատմության թանգարան:

81*. ԽԱՉՔԱՐ. ագուցված վանատան հարավային պատին, գլխիվայր, հիմնախաչի ներքևում, 1 տող.



[ԹՎԻՆ] ՌՅԺԱ (1862):

Ծանոթ. Կարծում ենք սա պատի մեջ խաչքարի ագուցման տարեթիվն է:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

82. ՏԱՊԱՆԱՔԱՐ. երկլանջ, հարավային նիստին, 5 տող.


✠ ԱՅՍՏՆԱՆ ԱՅԵՐԶԱՆԻ ԿԾԵՐՈՒՆ ԻՄԲՆԱԿ ԳՐԻԳՈՐԻ ԱՅՍՏՆԱՆ
 ԻՆԱՌԱՋՆՈՐ ԴԻԵՐԿՐՈՐ ԳՇԻՆՈՒ ԹԵՍԲՈՒԿԻ ՍՈՐԵՄՈՒՍՈՒՑ
 ԵԻԱԻՐԻՆՍԿՐԱՐԵԱՑԱՄ ԵՆԵՑՈՒՆԱՂ ԱՉԵՄՔՈՐՔԵՐԿՐ ՊԼԳԷԲ
 ՍԱՉԻՍԱՊԱՑԷՔ ԱԾՅԻՇԵՍՑԻ Չ ԸՆԴՅՈՒՄ ԴՈՅՅՈՂՈՐ ԳՐԻԳ
 ՐՈՒՄԵԻՉ ԳՐԻՉՍԵԻ ԴՈՒՔՑԻՇԵԱԼԿԻԿԻ ԻՔՍԷԱՍԵՆՆԻ ԹՅՈՒՄԵՐՈՒ

† ԱՅՍ ՅԱՆԳԻՍՏԻ Է ԵՐՁԱՆԻԿ ԾԵՐՈՒՆԻ ՄԲ ՅԱԻՐ ԳՐԻԳՈՐԻ, ԱՌԱՋ/ԻՆ
 ԱՌԱՋՆՈՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՇԻՆՈՒԹԵԼԱՆՆ ՄԲ ՈՒՏՏԻՍ, ՈՐ ԷՐ ՈՒՍՈՒՑԻՉԻ /
 ԵՒ ԱԻՐԻՆԱԿ ԲԱՐԵԱՑ ԱՄԵՆԵՑՈՒՆ, ԱՂԱՉԵՄՔ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՄԲ / ԽԱՉԻՍ
 ԱՄՍՆԱՑԷՔ ԱԾ ՅԻՇԵՍՑԷ ՁՅԱՅՐՈՂ ԳՐԻԳՈՐ ՅՈՂՈՐՍՈՒԹԵԼԱՆՆ ԻԻՐՈՒՄ ԵՒ
 ՁԳՐԻՉՍ ԵՒ ԴՈՒՔ ՅԻՇԵԱԼ ԼԻՋԻՔ Ի ՔՍԷ. ԱՄԵՆ: Ի ԹՎԻՆՆ ՅԼԱՅՈՑ ՈԼԸ (1189) ԷՐ:

Չրատ. Ալիշան, Շիրակ, 163, Գեորգեանց, 156 (մասնակի, թվականը՝ ՈԼԸ-1185),
 Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 63, Գագիկ Չառիճեցի, 42:

Ծանոթ. Այս տապանագրի, հատկապես թվականի եղիազարյանական վերծանությանն անդրադարձել է Երվանդ Տեր Մինասյանը³⁶: Խնդիրն այն է, որ տապանագրի, բավական պարզ գրված ՈԼԸ թվականը Չ.Եղիազարյանը (նաև Գ. Չառիճեցին) կարդացել է ՈՄԻԲ (1773) և եկել այն եզրահանգման, որ XVIII դ. երկրորդ կեսին Չառիճավանքում առաջնորդ է եղել ևս մեկ ժերունի Գրիգոր վարդապետ, որը վանքում վերականգնման աշխատանքներ է կատարել: Մենք չենք անդրադառնում Տեր-Մինասյանի մեկնաբանություններին, քանի որ թվականի ճշգրտմամբ բոլոր հարցերը լուծվում են:

83. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Երկլանջ, հարավային նիստին, 3 տող.




ՔՍ ԱԾ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԱՇԽԱՐՅԻ ԼՈՒՍԱԻՈՐ/ԵԱՅ
 ՁՅՈԳԻ ՍՈՐԱ ԸՆԴ ՍՈՒՐԲՄՈՂ ԲՈ ԲԱՐԵՒԱԽՍՈՒԹԵԼԱՆՆ /
 ՄԱԻՐ ԹՈՂ ԵՒ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻ: Ի ԹՈՒԻՆՆ ՈԿԳ (1214):

Չրատ. Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 62,
 Գագիկ Չառիճեցի, 41:

Ծանոթ. Ս. Բարխուդարյանը գրում է, որ արձանագրությունը տեղում չի գտել:

84. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ, արևմտյան նիստին, 6 տող.




† ԱՅՍ Է ՇԻՐԻՍ ՅԱՆ/ԳԻՍՍ
 ԵՒ ԲԻՆԱԿԱՐԱՆ / ԷՐԵՄԻԱԻ
 ԵՐԱԺԸՇՏԻ, / ՈՐՔ ԸՆԹԵՈՆՈՅ[Ր]Ք
 ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:
 Ի ԹՎԻՆՆ / :ՉԷ: (1258):

Չրատ. Ալիշան, Շիրակ, 163,
 Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 63
 Տեր-Մինասյան, «Էջմիածին» 1958, Ա, 44,
 Գագիկ Չառիճեցի, 41:

36 Ե. Տեր-Մինասյան, Չառիճա վանքի արձանագրությունների առթիվ, «Էջմիածին», 1958, Ա, 41-45:

Ծանոթ. Ե. Տեր-Մինասյանը իր հիշյալ հոդվածում մատնանշում է նաև այս արձանագրության Դ. Եղիազարյանի սխալաշատ վերծանությունը: Բանն այն է, որ վերջինս երրորդ տողը կարդացել է ԷՐԵՍԱԻԵՐ ԱՍՏՈՒԱՊԱՇՏԻ, որով հիմնավորապես խեղաթյուրվել է այս եզակի և խիստ ուշագրավ վկայագրի իմաստը: Ե. Տեր-Մինասյանին հայտնի է եղել երաժշտի ևս մեկ գերեզման, որը նա 1922թ. սեպտեմբերին տեսել է Բյուրականի հին գերեզմանատանը՝ Աղջքի և Բյուրականի միջնամասում: Սալատապանին նրան և Գարեգին Դովսեփյանին մեծ դժվարությամբ հաջողվել է կարդալ կիսեղծ վիմագրի որոշ հատվածներ. «Աստանաւ անկեալ ղնի ողորմելի... (անունն անընթեռնելի, մնացել են միայն ...ր...իս տառերը) լռեալ ծայնութեամբ քնարս քաղցրաբարբառ»³⁷:

85. ԽԱՉՔԱՐ. ագուցված պատվանդանին, հիմնախաչի շուրջը, 2 տող.




ԹՈՒԻՍ
ԿԱՆԿԵՑԱԻ ԽԱՉՍ ԿԱՍՆ ԾԳՆԱԻՈՐԻ ՄԻԱԿԵՑԻ,
ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

Չրատ. Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 63,
Գազիկ Դառիճեցի, 41:


Ծանոթ. Այս ևս մենք տեղում չգտանք, թվում է, որ ՄԻՍԱԿԱ-ի տառաշարքը ՄԻԱԿԵՑԻ պիտի վերծանել: Դ. Եղիազարյանն ու Գ. Դառիճեցին իրենց վերծանություններում ճԳՆԱԻՈՐԻ բառից հետո կարդացել են ՄԻՍԱԿԱՅ և նշել թվականը՝ ՈՁԳ (1234):

86*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. երկլանջ, հարավային նիստին, 2 տող.



ԱՄԵՆ ԱԳՈՎԵԼԻ ՊԵՏՐՈՍ, ՅԱՂԱԻԹՍ
ՅԻՇԵՑԷՔ / ԱՂԱՉԵՍՔ:

87*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. երկլանջ, հարավային նիստին, 3 տող.



Ա ՉԱՆԳԻՍՏ Ե ՏԱՄՊԱՐՏՆԱՅ ԵՒ ԱԻԹԱԽԻՆ, ՈՐ ՊԱՏԵՐ/ԱՂՄԱՒ
ՎԱԽՃԱՆԵՑԱՆ: ՈՎ ԿԱՐԴՄԱՂ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԱՂԱ: /
Ի ԹՎԻՆՂ :ՈԼԵ: (1186):

37 Նույն տեղում, էջ 43:

Ծանոթ. Ըստ տապանագրի հանգուցյալներն են Տամպատն ու Աւթախը, որոնք վախճանվել են պատերազմի ժամանակ: Երկրորդ ննջեցյալի նույնատիպ տապանաքարը կից է նախորդին, պարզապես երկուսի անուններն արձանագրել են միայն մեկի վրա: Հր. Աճառյանը վկայակոչում է Աւթա անվանաձևը, որը մեզանում հանդիպում է ԺԴ-ԺԵ դդ. (Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. Ա, էջ 342–343): Ներկա տապանագիրն, ըստ էության, փաստում է այս անձնանվան վաղագույն հիշատակությունը: Վանստանի XIII դ. վիմագրերից մեկում վկայված է աւթախ հոմանունը³⁸: Այս համատեքստում աւթախ բառը Ս. Ավագյանը մեկնում է ընկեր, ընկերակից, պաշտոնակից, վաճառական իմաստներով (Ս. Ավագյան, ՎԱԲ, էջ 340-342):

Տապանագրի սկզբի Ա-ն, հավանաբար, պետք է կարդալ ՍԱ կամ ԱՅՍ, այսինքն՝ ՍԱ կամ ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ե...: Երկրորդ տողի վերջին ԱՉԱ տառախումբը, թերևս կարելի է վերծանել ԱՂԱՉԵՄ կամ ԱՂԱՉԱՆՍ:

88*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. երկլանջ, հարավային նիստին, չափածո, 5 տող.

Կ Ի Տ Ս Պ Ա Ն Ի Ս Ն Ն Ջ Է Խ Ո Ր Ի Ն Ա Ս Լ Ի Ա Ն Ո Ի Ն
 Ե Ր Ի Ց Ա Կ Ի Ն Ա Մ Ա Կ Ռ Զ Ե Ա Ն Տ Ե Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ի Ն
 Յ Ա Մ Ի Թ Ի Թ Ի Կ Փ Ր Կ Չ Ի Ն Պ Ը Ն Դ Ե Ր Ե Ս Ն Ի Ն . Կ Ո Յ Ս Ն
 Թ Ո Ւ Ի Կ Ջ Ո Յ Գ Ը Ն Դ Ե Մ Ի Ն Ի Լ Ո Ի Ս Ա Ր Ա Ր Ի
 Ո Ր Բ Ը Ն Թ Ե Ռ Ն Ո Յ Ք Տ Ո Ի Ք Ջ Ո Ղ Ո Ր Մ Ի :

Ի ՏԱՊԱՆԻՍ ՆՆՋԷ ԽՈՐԻՆ, ԱՍԼԻ ԱՆՈՒՆ / ԵՐԻՑԱԿԻՆ
 ԺԱՄԱԿՈՉԵԱՆ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՆ, / ՅԱՄԻ Ռ. Ի ԹԻՒ ՓՐԿՉԻՆ Պ.
 ԸՆԴ ԵՐԵՍՆԻՆ (1830), ԿՈՅՍՆ / ԹՈՒԻԿ ՋՈՅԳ ԸՆԴ ՆՄԻՆ
 Ի ԺԷ. (17) ՀՈԿՏԵՄԲԵՂԻ, / ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՅՔ ՏՈՒՔ ՋՈՂՈՐՄԻ:

89. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցածն, հարավային նիստին, 5 տող.

Ա Ս Տ Ե Ղ Ա Ի Մ Ա Ր Մ Ի Ն Ծ Ե Ր Ո Ւ Ն Ի Ա Ր
 Վ Ա Ր Դ Ղ Ա Պ Ե Տ Ի Ա Շ Խ Ա Տ Ա Ի Ո Ր Մ Ի
 Ա Բ Ա Ն Ի Մ Բ Ո Ւ Խ Տ Ի Ս Ե Ի Լ Ո Ի Ս Ա Ր Ա Ր Ի
 Ո Ր Ի Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ա Յ Կ Ա Ր Ն Ո Յ Ո Ր Ք Ը Ն
 Թ Ե Ռ Ն Ո Յ Ք Յ Ի Շ Է Ք : Ի Թ Է Ռ Մ Դ Ջ


ԱՍՏ ԵՂԱԻ ՄԱՐՄԻՆ ԾԵՐՈՒՆԻ ԱՐ/ՐԱՅԱՍ
 ՎԱՐԴՂԱՊԵՏԻ՝ ԱՇԽԱՏԱԻՈՐ ՄԻ/ԱԲԱՆԻ
 ՄԲ ՈՒԽՏԻՍ ԵԻ ԼՈՒՍԱՐԱՐԻ, / ՈՐ Ի
 ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ԿԱՐՆՈՅ, ՈՐՔ ԸՆ/ԹԵՌՆՈՅՔ
 ՅԻՇԷՔ: Ի Թ[ՈՒԻՍ] Հ[ԱՅՈՅ] :ՌՄՂԶ: (1847):

Հրատ. Եղիազարյան, «Էջմիածին», 1957, Ա, 63,
 Գագիկ Հառիճեցի, 42:

Ծանոթ. Գ. Հառիճեցին թվականը կարդացել է ՌՄԽՉ (1797):

38 Աշխարհիբեկ Քալանթար, Վանստան, հրատ. պատրաստեցին Հ. Մելքոնյանը և Գ. Սարգսյանը, «Հայաստան. քարե դարից միջնադար», Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 66, արձ. 14:

90. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. օրորոցածև, հարավային նիստին, չափածո, 5 տող.




Ի 13 ՄԱՐՏԻ 1876 ԱՄԻ,
 ՄԻՆԱՍ ՔԱՆԴԱԿԱՆՍԻՆՍԻ ՏՈՂՈՒՄԻ ՎԱՐՄԱՆԵԱՆՑ,
 ՄՏՕՔ ԲԱՆԻԲՈՒՆ, ՄՐՏԻԻ ԲԱՐԵՁԳԵԱՑ,
 ՄԻՆՉ ՀԱՍ Ի ՀԱՍԱԿՆ ՎԱԹՍՆԻՑ ԱՄԱՑ,
 ԱՍՏ ՓՈՒԹԱՑ ՄԱՐՄՆՈՎ, ՀՈԳՈՎ ԿԵԱՆՍ ԱՆԱՆՑ:

Հրատ. Տեր-Մինասյան, «Էջմիածին» 1958, ժԲ, 54,
 Գագիկ Հառիճեցի, 42:


Ծանոթ. Ե. Տեր-Մինասյանը իր նշյալ հոդվածում մանրամասն անդրադառնում է հանգուցյալի կյանքին ու գործունեությանը, հիմք ընդունելով 1910թ. Ալեքսանդրապոլում հրատարակված «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը 1850-1882» գիրքը:

91*. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. ուղղանկյուն օրորոցածև, հարավային նիստին, 5 տող.




† ԱՍՏ ԵՂԱԲ ԵՐՁԱՆԻԿ ՄԱՐ/ՄԻՆ
 ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՅԱԳՕ/ԲԻՆ ԵՒ ՈՐՂԻ
 Ն[ՈՂՈՒ]ԱՅ ԳԵՐԱՊ[ԵՏ]ՆԻՆ, 11 / ՈՒՆԻՍԻ
 ՀԱՆԳԵԱԲ ԱՌ ԱԾ / ԱՄԻ ՏՆ 1876:

92. **ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԻՆԱՔԱՐԵՐ**. գերեզմանոցի եկեղեցու ավերակներում, 4 տող.




...[ԵՂՈՑ ՍՈՐ...
 ...ԱՆԱՍՏԱՌՆ...
 ... ԱՐՆ ԵՒ ՈՐ ԽԱՓԱՆ[Ե]...
 ...[Պ]ԱՏԱՐԱԳԻՍ ՅԻՇԵ[ՏԵՔ]...




...Ց ՊԱՐՏԱԿԱՆ...
 ...ԱԿՍ ԱՅՍ ՄԻ...
 ...ԱՍՏԱՆ...
 ...ՈՂՈՐ[ՄԻ]...



...ՈԿԵ (1216)



...ԱՒՈՒԹԻ ՍՍԱ...
...ՈՑ ԵՒ ՀԱՍՏԻԱՏԵՑԻՆ...



...ԵՒ ՎԱՐԴԻՆ...


Ծանոթ. Ըստ երևույթին, նվիրատվական մի մեծ արձանագրության մասեր են, վերջին բեկորի վրա մնացել է նվիրատուներից մեկի անունը՝ ՎԱՐԴ և երրորդի վրա թիվը՝ :ՈԿԵ: (1216): Բեկորներից փոքրերը տեղում չգտանք:

93. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԻՆԱՔԱՐ. գերեզմանոցի եկեղեցու ավերակներում, 4 տող.



...ԵՆՔ ՊԱՏԱՐԱԳ...
...ԸՂԻՔԱՌԻ ՔԱՆՈՒՍԻՆ ԲԻ...
...ԻՆ:
...ՄԵԱՅ. ԱՄԵՆ...:

94*. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԻՆԱՔԱՐ. գերեզմանոցի եկեղեցու ավերակներում, 2 տող.



Ի ԹՈՒԻՍՄ / ՉԻԸ (1279):


ԱՐԹԻԿ

Արթիկ քաղաքը և նրա շրջակայքը միջնադարյան Հայաստանի հատկապես վաղ շրջափուլի հուշարձաններով հարուստ բնակավայրերից է, որտեղ պահպանվել են քաղաքամիջի Ս. Մարիամ Աստվածածին միախորան-եռախորան խաչածև (V-VI դդ.) և Ս. Գևորգ «մաստարայատիպ» (VII դ.) եկեղեցիները (երկուսն էլ կիսավեր), իսկ քաղաքից քիչ հարավ՝ բլրի վրա, վեր է խոյանում Լմբատավանքի Ս. Ստեփանոս գմբեթավոր եկեղեցին (VII դ.): Խոսելով Արթիկի պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրի ու թվագրման շուրջ՝ Թ. Թորամանյանը գրում է. «Այս գյուղին մեջ կան երկու նշանավոր շենքեր, մեկը 6-րդ դարու առաջին քառորդին շինված, իսկ մյուսը, որ մեծ է, 7-րդ դարու հոյակապ շենքերից մեկն է. ունի իր վրա Թալինի մեծ կաթուղիկեի հատկանիշները...»³⁹:

Հատկապես հայկական ճարտարապետության ուսումնասիրության տեսանկյունից տեղի հուշարձանները մեծ արժեք են ներկայացնում: Ս. Աստվածածին եկեղեցին մեր միանավ բազիլիկներից գմբեթավոր կառույցին անցման լավագույն օրինակներից է, իսկ Ս. Գևորգ եկեղեցու արտաքուստ շեշտված խորանները հիացնում են VII դարին հատուկ քանդակային հարդարանքի մանրամասներով, ինչպիսիք կարելի է տեսնել Թալինի Կաթողիկե տաճարի ճարտարապետական հորինվածքում: Ս. Գևորգ եկեղեցու ճարտարապետական ու քանդակային լուծումների վերաբերյալ դիտարկումներ է արել նաև ակադ. Վ. Հարությունյանը, որի կարծիքով. «կիսավեր, առանց գմբեթի, մեծ մասամբ մինչև ճակատների քիվերը պահպանված տաճարը բացարձակ ամենամեծն է իր խմբի մեջ»⁴⁰: Նա փաստում է, որ կառույցը միանգամայն համապատասխանում է 7-րդ դարի երկրորդ կեսում տիրապետող դարձած գեղարվեստական ըմբռնումներին և հավելում, որ «եթե Բագարանի և Մաստարայի տաճարներում ավագ խորանին կից ավանդատները հետագա հավելման արդյունք են, ապա Արթիկի տաճարում դրանք նախնական են, արևելյան ճակատում առաջացնելով ոչ խոր զույգ որմնախորշեր»⁴¹:

Ս. Գևորգ եկեղեցու ավագ խորանի կիսակլոր պատի աջակողմում պահպանվել են որմնանկարի մնացորդներ: Դատելով առկա հատվածից՝ այստեղ մի շարքով և ողջ հասակով պատկերված են եղել Քրիստոսի տասներկու առաքյալները: Որմնանկարի ծեփի վրա պահպանվել է նաև միատող փորագիր արձանագրություն:

95. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի բարավորին և կամարին, ընթերցվող 13 տող.



39 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, էջ 366-367:

40 Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 146:


41 Նույն տեղում:

ԵՍ ՄԻԿՐՏԻՉ ՔԱՅԱՆԱ, ԱՄՈՒՄՆՈ ԻՄՈ ԴԵՂՈՒՆԻՆ ՓՈԽԵԼԱՅԼՆ Ի ՔՍ ՏՂԱ ՏԻԻ / ...Ի ՍԲ ԱԾ
 ԱԾԻՆՍ ԵԻ Ի ՍԲ ԳՐԻԳՈՂԻ ԶԻՄ ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒ/ՆՆՆՆ ԵԻ ԶԿԱԼՆ ԵԻ ԶՄԱՐԱԳՆ, ԶԱՂԱՑ ԶԱՂԲՈ/
 ԻՆՔՆ ԶՁՈՐԻՆ ՀԱՐՆ Ի ՀՈՂՈՎՆ / ԱԶԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ ՀԱՐԿԷ: / ՅԻՇԱՏԱԿ ՄԵՁ ԵԻ ԾՆՈՂԱՑ
 ՄԵՐՈՑ, ԱՐԴ ՍՊԱՍԱՈՐՔ / ՍԲ ԱԾԱԾՆԻՍ ԿԱՏԱՐԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ :Բ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ
 ԶՅԱՅՏՆՈՒԹԵԼԱՆՆ ՄԵՌԵԼՈՑՆ ԱԻՐՆ ԻՆՁ ԱՐՆԵՆ ԵԻ ԶԱՏ/ԿԻՆ ՄԵՌԵԼՈՑՆ՝ ԻՄ ԴԵՂՈՒՆԻՆ
 ԱՌՆԵՆ. ԱՐԴ ԵԹԷ ՈՔ Ի ՄԵԾԱՐՑՆ / ԿԱՍ Ի ՓՈՔՐԱՑ ԿԱՍ Ո՛... / ...Ն ԴԱՏԻՆ... / ...ԱՐԴԻՆ...:

Հրատ. Գ. Նալբանդյան, «Հուշարձան», Գ, 188:

Ծանոթ. Գ. Նալբանդյանի հաղորդմամբ՝ արձանագրությունն իր խնդրանքով վերծանել է նշանավոր հա-
 յագետ Պարույր Մուրադյանը: Հավանաբար, վերջինիս տրամադրված լուսանկարը կամ գրչագիրը
 որակյալ չի եղել, ըստ այդմ էլ վերծանության մեջ առկա են մի շարք տարընթերցումներ. առաջին տողում,
 Մկրտիչ անունից հետո վերծանված է ՄԱՀԱՆ, չորրորդ տողում, ԶՁՈՐ-ից հետո կարդացվել է Ե ԵԻ Ց
 ՏԱՆԻՔ ՀՈՂՈՒԹՎՆ, վեցերորդ տողում բացակայում է ԱՐԴ բառը, յոթերորդում՝ ՊԱՏԱՐԱԳ-ից առաջ վեր-
 ծանվել է ՍԲ և այլն: Չնայած ՍԲ ԳՐ հապավումը ըստ կարգի վերականգնել ենք ԳՐԻԳՈՐ, այդուհանդերձ
 հնարավոր ենք համարում այն կարդալ ՍԲ ԳԵՈՐԳ, ինչպես անվանվել է հարևան եկեղեցին:


96. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային խաչաթևի արանքում մնացած խորանի վրա, 7 տող.



Ի 2Ժ (1261) / ԺԱՍ...ՈՅ /
 ՍՏ...Ա...ՄԵՑ... / ԱՆ ՍԱՐՄԱՆԵՑԻ... /
 ԼԻՏՐ Կ...ՄԵ...[ԽԱՓԱՆԵԼ] / ԶԱՆԱՅ
 ՄԵՐ [ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ] /
 ...ՑԵ ԵՐ [Ժ]Ը (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ /
 [Ն]ՁՈՎԵԼԱՅԵԼ ԵՂԻՑԻ:

Ծանոթ. Անարվեստ տառերի հաջորդ քարը չկա:
 Վերականգնումները՝ խմբ.:

97. Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան պատին, լուսամուտից վեր, միջի մեջ ագուցված խաչքարի
 պատվանդանի քիվին՝ 1 տող և դրանից ներքև՝ քարի վրա, 4 տող.




ԽԱԶԼԱՅՏՈՒՐՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԱՍԼԷՆՅ:

Ի ԹՎԻՍ :ՉԽԲ: (1293), ԵՍ ԹՐՏԱՇ ՎԼԱՆԷՍ ԵՒ ԱՍՈՒ/ՍԻՆ ԻՍ
ԽՈՒԹԼԵՐՍ, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱԶՍ Ի Բ/ԱՐԷԽԱԲՍՈՒԹԻԼԻՆՅ ՄԵԶ ԵՒ
ՃՆՈՂԱՑ ՄԵՐ/ՈՑ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԱՍԼԷՆՅ:

Ծանոթ. Վկայագիրը մեծ հետաքրքրություն է ներկայացնում մի շարք առումներով. հայտնի է դառնում XIII դարի ևս մի խաչքարագործ վարպետի անուն՝ խաչատուր կամ խաչտուր: Վատ պահպանվածության պատճառով տարընթերցման տեղիք է տալիս խաչքար կանգնեցնողի անունը: Դաշտային օրագրում Ս. Բարխուդարյանը ԵՍ-ի ու ԵԻ-ի միջնամասում կարդացել է ԱՐՏԱՇԵՎԱՆԷՍ: Առաջին երեք տառերի կիսեղծ հատվածում ուրվագծվում են ԹՐՏ տառերը, իսկ Շ-ից հետո հազիվ նկատելի է ՎԼԱՆԷՍ տառա-կապակցությունը, այսինքն՝ անունը պայմանականորեն հնարավոր է կարդալ ԹՐՏԱՇՎԱՆԷՍ կամ, որ ավելի հավանական է՝ ԹՐՏԱՇ ՎԼԱՆԷՍ: Այս դեպքում առաջին բառը կարող է լինել խաչքար կանգնեցնող վլանէտի արհեստագործական կամ այլ բնույթի մականունը: Արձանագրության վերջում ՔՍ-ն փորագրված է տառերի փոխատեղմամբ:

98. Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան խաչաթևի հարավ-արևմուտք նայող կամարի վերին մասում արտաքուստ, 11 տող.



Ի ԹՎԻՆՅ :ՈՐԱ: (1222) / Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԱԼՍՏՈՒԱՅԾ/ԱԲԾԵԱԼ ԹԱԳԱԲՈՐԻՆ
ԵՒ ԹԱԳՈՐԻՈՑ ԹԱԳՈՐՈՅՆ ԹԱՄԱՐԻՆ: ԵՍ՝ ՀԱԲ/ԱՄՏԱՐԻՍ ԾԱՌԱՅ ՆՈՐԻՆ
ՈՐԴԻՍ ԻՇԽԱՆԱՄՅ / ԻՇԽԱՆԻՆ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՄԽԱՐԳՐԾԵԼԻՆ ԶԱՔԱ-
ՐԻ / ՄԱՆԴԱՏՈՐԹՈՒԽՈՒՅԵՍ ԱՄԻՐԱ ԹԱԳԱԲՈՐԻՆՅ ՇԱՐՆՇԱՐ / ՍԱԼԻՆ ԻՍ
ՅԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱԲԱԿԱՑ ԻՄՈՑ / ԵՒ ԵՂԲԱԲՐՆ ԻՄՈՑ ԱԲԱԳԻՆ՝
ՍԱՐՄԱՆԵՑԻ ԶԱՐԴՈՒՑ ՇԱՐԻ/ԱՏՆ Ի Ժ-ՆԻՆ ԶԱՄԼԷՆՆ: ԷԹԷ ՈՔ ՀԱՆԵԼ
ԶԱՆԱՅ ԿԱՍ ...ԱՆԹ...Բ / ԿԱՍ ՆԱԽԱՆՁՈՒ, ՆՁՈՎԵԱԼ ԼԻՑԻ ՅԱՅ ԵՒ
ԱՄԵՆԱՅՆ / ՍՐԲՈՑ. ԱՄԷՆ:
ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՄԱՆԿԱՆՆ ԽՆԴՐ[Ե]ԵՑ ԶՇԱՍԻԱՏՍ:

Ծանոթ. Այս և Արթիկի նախորդ արձանագրություններն առկա են միայն Ս. Բարխուդարյանի դաշտային օրագրում: Առաջին հայացքից ընթեռնելի թվացող վիճակում մի շարք հատվածներ կիսեղծ են և խիստ դժվար վերծանելի, ըստ այդմ, հատկապես գրչագրի և վերծանության վերջին երեք տողերում առկա են պայմանական ու թեական բառեր և տառակապակցություններ: Դատելով վկայագրի հավաստի վերծանվող

հատվածներից այն Ձաքարյան իշխանատոհմի և նրանց գործունեության ուսումնասիրության համար բացառիկ աղբյուրագիտական արժեք ունի ու պահանջում է խորը և համակողմանի քննություն:

99. Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատին, արտաքուստ, անավարտ, 2 տող.

ՅԻՇԽԱՆՈՒԹԻՇԱՅՆ ՇԱ
ՏԻԵՍ

ՅԻՇԽԱՆՈՒԹԻՇԻԼԻՆ ՇԱՐՆՇԱՐԻ, ԵՍ...:

Հրատ. Թորամանյան, Բ, 209:

100*. Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, արևելյան պատուհանի կամարին, 2 տող.



ՏՐ ԱԾ ----- ԹՐԿԻՉ
ԱԻԱԸ -----

101*. Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ. ավագ խորանի մասամբ պահպանված որմնանկարի վրա, 1 տող.

ԲԱԶՄԱՍԵՂ ԲԱՅԱՆԱ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՄԵՆ...:

ԲԱԶՄԱՍԵՂ ԲԱՅԱՆԱ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՄԵՆ...:

ԼՄԲԱՏԱՎԱՆՔ

Գտնվում է Արթիկ քաղաքից 1 կմ արևմուտք՝ բլրի հարթության վրա: Վանքի անունը, հավանաբար, հնում նրա մոտ գտնվող գյուղի անունից է առաջացել, իսկ եկեղեցին կոչվում է Ս.Ստեփանոս: Ներկայումս Լմբատ է կոչվում Արթիկի՝ նշված բլրին կից թաղամասը: Հուշարձանը, որը Թ. Թորամանյանը հաստատապես VII դարով է թվագրում⁴², հարուստ է հիմնականում շինարարական ու նվիրատվական արձանագրություններով: 1955 թ. մաքրվել ու բարեկարգվել է եկեղեցու շրջակայքը, որի արդյունքում պարզվել է, որ արևմտյան խաչաթևի պատին կից է եղել մեկ այլ կառույց, որի խորանի հիմնապատերն են մնացել: Աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել նաև խաչքարերի պատվանդաններ, ծածկի կղմինդրներ և կավե թրծած ջրատար փողրակներ:

Հետագայում հուշարձանի ճարտարապետական հորինվածքին անդրադարձել են ճարտարապետներ Վ. Հարությունյանն ու Վ. Գրիգորյանը⁴³: Ակադ. Վ. Հարությունյանն այն դասում է խաչածև կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիների շարքը⁴⁴: Ի դեպ, հատակագծում խաչաթևերը և՛ ներքուստ, և՛ արտաքուստ ունեն ուղղանկյուն հորինվածք՝ բացառությամբ արևելյան խորանի ներքին կիսաբոլորակի⁴⁵: Վ. Հարությունյանը հավաստում է, որ չնայած նրան, որ եկեղեցու վաղագույն արձանագրությունները XI դարից են. «...սակայն դրանցից ոչ մեկում չի վկայված հուշարձանի կառուցման առավել հավանական ժամանակը՝ 7-րդ դարը»⁴⁶: Նշված դարով թվագրելու օգտին են եկեղեցու ճակատների մշակման ճարտարապետական բոլոր տարրերը (քիվեր, լուսամուտների քանդակազարդ պսակներ), թմբուկի ութնիստ ծավալածևը և այլն:

Այն, որ Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին VII դարի շինարվեստի ինքնատիպ դրսևորումներից է, վկայում են նաև հիշյալ ժամանակաշրջանին հարազատ որմնանկարները, որոնք զբաղեցնում են եկեղեցու ավագ խորանի գմբեթարդն ու արևելյան պատը: Դրանց անդրադարձել են Լ. Դուրնովոն⁴⁷, Ս. Տեր-Ներսիսյանը⁴⁸, Կ. Մաթևոսյանը⁴⁹ և այլք: Վերջինիս հավաստմամբ՝ Լմբատավանքի՝ գծային գրաֆիկական եղանակով ու վառ գունային հնչեղությամբ արված որմնանկարները ստեղծվել են. «...գլխավորապես եզեկիել մարգարեի տեսիլքի գրական հիմքի վրա և ոչ թե հայտնի պատկերագրական կառուցվածքի ընդօրինակությամբ: Դրանով իսկ այս որմնանկարը հանդիսանում է Աստվածահայտնության տեսարանի պատկերագրական կառուցվածքի հայկական տարբերակ»⁵⁰: Նկատենք, որ գմբեթարդի կենտրոնում գահակալ Քրիստոսի պատկերն է, որի միայն ստորին մասն է պահպանվել, աջ և ձախ կողմում պատկերված են երկու քառակերպ՝ մարդու, եզան, առյուծի և արծվի գլխով, երկու վեցթևանի սերովբե և երկու զույգ հրե անիվներ: Խորանին հարող պատերին պատկերված են

42 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, էջ 310, 367:

43 Վ. Գրիգորյանը եկեղեցու կառուցումը հասցնում է VII դարի առաջին կես կամ VI դար (Վ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 41-43):

44 Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 154-156:

45 Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. Ա, էջ 169, նկ. 82:

46 Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 155-156:

47 Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 139-140.

48 S. Der-Nersessian, L'art arménien des origines au XVII siècle, Paris, 1977, p. 70-71.

49 Կ. Մաթևոսյան, Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարը, «Էջմիածին», 1982, Դ., էջ 53-55:

50 Նույն տեղում, էջ 54: տե՛ս նաև «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 414:

հեծյալներ Ս.Սարգիսն ու Ս.Գևորգը: Լ. Դուրնովայի կարծիքով գմբեթարդից ներքև պատկերված են եղել տասներկու առաքյալներն ու Տիրամայրը⁵¹:

Ներկա հատորում Լմբատավանքից ներկայացված է 23 արձանագրություն, որոնցից 12-ը հրատարակվում են առաջին անգամ: Վիմագրերի առաջին հրատարակիչ Ս.Զալալյանցն այս վանքից նախկինում հրատարակել է 7 արձանագրություն, Ղ.Ալիշանը՝ 8, Ս.Գևորգյանցը՝ 9, Գ.Եղիազարյանը՝ 8, 1 վիմագիր հրատարակել է վիմագրագետ Ալ.Մանուչարյանը, ևս 1 արձանագրություն հիշատակում է Թ.Թորամանյանը: Ինչպես վերը նշեցինք, ՄՄ Դ^մ 6517 ձեռագրում Հառիճավանքի վիմագրերին զուգահեռ Լմբատավանքից մեզ հայտնի ևս 6 արձանագրություն է ընդօրինակված (սույն հատորի Դ^մ 102, 103, 104, 105, 110, 111 վիմագրերը)⁵²:

102. Ս.ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. գմբեթի հիմքի արևմտահայաց կողին, 7 տող.

ԹՈՒ Ը: ԿԱՄԱԻՆԱՅԵՍՄԻՐԲԱՐՍԵՂՈՐ
ԳՆԵՑԻԶՎԱՆՔՍԵԻԱԶԱՏԵՑԻՅԱՆ
ԱԻՐԻՆԱՑԵԻԵՏՈՒԶՑԻՑ ՔՆՎԱՆԻՑ
ՍԵԻԶԶՈՒՐՆՈՐԻՐՍԵՐԻԿՆՈՑԼԵԱԼ
ՅԻՇԱՍԱԿԻՆՁԵԲԱՐԵԽԱԻՍԱՌՔՍԵԹ
՝ ՈՔԶՅԻՇԱՍԱԿՍՄԵՐԻԽԱՓԱՆԵՍՑԵ
ՆԶՈՎԻՅԱՅԵԻՅԱՅՍՍՐԲՈՑՍ

ԹՎԻՆՂ ՈՒՍ (1191): ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՏՐ ԲԱՐՍԵՂ,
ՈՐ / ԳՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ ԵԻ ԱԶԱՏԵՑԻ ՅԱՆ/ԱԻՐԻՆԱՑ
ԵԻ ԵՏՈՒ ԶՑԻՑՔՆ ՎԱՆԻՑ/Ս ԵԻ ԶԶՈՒՐՆ, ՈՐ
ԻՐՍ ԵՐ Ի ՀՆՈՑ ԼԵԱԼ / ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵԻ
ԲԱՐԵԽԱԻՍ ԱՌ ՔՍ, ԵԹ/Է՛Ղ ՈՔ ԶՅԻՇԱՏԱԿՍ
ՍԵՐ ԽԱՓԱՆԵՍՑԵ / ՆԶՈՎԻ ՅԱՅ ԵԻ ՅԱՅՍ ՍՐԲՈՑՍ:

Հրատ. Զալալյանց, Ա, 221, Ալիշան, Շիրակ, 164,
Գեորգեանց, 165, Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 55-56:

Ծանոթ. Պատմաբան Կ.Մաթևոսյանը կարծում է, որ տեր Բարսեղը Անիի և Շիրակի արքեպիսկոպոս «Բարսեղ Ա Անեցու եղբայր Գրիգոր իշխանի որդի Հասան մագիստրոսի որդին է», որ «1191թ. մահմեդականներից գնում է Լմբատավանքը»⁵³: Գ.Եղիազարյանը հիմնվելով հնագիտական հետազոտությունների վրա Ցիցք գյուղը տեղադրում է վանքից «կես կիլոմետրաչափ դեպի հարավ-արևմուտք, սարահարթի վրա, այժմյան Պեմզաշեն գյուղը տանող կարճ ճանապարհի եզրին»:

51 Л. Дурново, Очерки..., с. 140.

52 Ա. Տեր-Ստեփանյան, Վիմագրերը Մատենադարանի ձեռագրերում, էջ 41-42:

53 Կ. Մաթևոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, Երևան, 2010, էջ 53:

ՈԿԵ

ԿԱՍԱԻՔԱՐԵՐԱՐԻՆ ԱՅՍՍԵՐԱՐՁԱՆ ԱՆՁՆՁԵԼԻ Է ԵՒ
 ԱՆԱԿՍՇՆՔԵՆԱԻ ՈՐՏԻՐԻԳՈՐՈՅԱՐԿԵՂԻ ՍԿՈՊՈՍԻՄԱՅՐԱՔԱՆ
 ԱՔԻՍԱՆԻՈՅԵԼԱՏԱՆԳԻՍՇԻՐԱԿԱԶԱՌԱՆԳ ՈՐԴԻՍԵՔՆԱԿԱՍՏԵՐՈ
 ԱԹՈՌՈՅՈՐԵՆՈՒՄԻՆՅԻՍՏՆԱԿԵՂԵՐԱՐՆՅԱՇՍՏԱՊԱՄԻԷՆԻՔ
 ԱՐԿՄԻՏԱԿԱՐԴԵԱՍՔՔԱՆՅԵԱՄԲՈՒՄՍՆԱՐՔԱՆՁՈՐԿԻՆ ԳԱՁ
 ԱԳԻՆՁԳԵՐԱՍԵՏՁԻՅԱՐԴՔՈՐԿՈՂԻԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՑԹԱՂՔԸՆՁ
 ԱԵՑԻՉՍԱՍՈՒՐՔԱՐԵՔԱՆՆՈՍԻՍՅՐԵՆԻՔ ՄԻՁԻԿԱՆԱՐԱՇՅԱԽՑԵՆԻՍ
 ՅԻՄՆԱԳՍՅԻՇԱՐԱԿԻՍԵՐՈՅԵԱՐԵՇԱՐՈՒԹԵՂԵՐԱԻՆՆՅԱՐՔԻՆԵԿ
 ՈԳԵՈՐՏԻՔԱՐՍԴԵՍՆԱՅՈՂԻՍՈՑԱ ԵԻՇՆՈՂԱՅՍԵՐՈՅԵԵԴԻՆՈՐԾԻ
 ՎԵՐԱՊԱՍԱԽՈՐԿՅՍՈՐԱԿՐԱՐԻՆ ԿԵՅՍԻՊՈՒՄԱՐԱՔՈՒԱՐԵՆՍԿ
 ԱՏՈՒՑԱՆԵԼՆԱԲԻՂԱՉԱՊՈՒՅՈՒԿՈՒՄՆՆՐԲԱՐՍԴԵՐԿՈՒՄՆԻՍ
 ՀԱԻՆԱՅՈՐՁԱՄԻՈՒՅԵՐԿՈՒՄՆԻՍՄԱՐՆԱՏՄԱՔԻՆՄԻՍՔԱՆԿԱՏԱՐ
 ԵԼՄԻՆՁԻԳԱՈՒՄԱՐԻՔԻԵՄԻՈՒՔԻՇԻՍՅԵՅԱԿԱՌԱԿԻԼԵՉՅԻՇԱՐԱԿԱՍ
 ՄԵՐԻԱՆԵԼԻՍԿԵՆՈՒՔՅԱՆԳԻՔԻԵՉԱՅՍԳԵՐԱՅԱՅՍՎԱՆԻՑՍԿԱՆԵԿԱ
 ՄԵՆԱՆՅԵՉՆԱՄԻՇԻԿԵՆՅՆԱՆԱԿԱՃԱՆԻՑՆԿՈԳՈՎԵՄԱՐՄԵՆՈՎԻՍԿ
 ՈՐՔԿԱՏՆԱՐՈՒՄԱՐԿԵՆՉԳՐԵԱԼՍՍԵՐԱԻՐՆՈՒԹԻՆԱՅԵՂԵՑԻԿՈԳԵԵ
 ԽՄԱՐՄԻՆՈՑԱԷՂ ՉԵՐՔԱՆԻԿՆՅՐՉԱՌԱՔԵԱՆՉԵՉՏՆԱՆԱՏԵՐԵԵ
 ՉԱՐԻԻՆՉԱՐԱՐՆԱՆՉՈՒՐԵՑՅԻՇԵՑԵՔԻՔՍ ԶԻՐԳԵՍԱՆԱՐ

[ԹՎԻՆ] ՈԿԵ (1216) / ԿԱՍԱԻՔ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ԱՅՍ ՍԵՐ ԱՐՁԱՆ ԱՆՁՆՁԵԼԻ Է ԵՒ
 ՅԻՇ/ԱՏԱԿ ՄՇՏՆՁԵՆԱԻՈՐ ՏՐ ԳՐԻԳՈՐՈՅ ԱՐՅԻԵՂԻՍԿՈՊՈՍԻ, ՄԱՅՐԱՔԱՐ/ԱՔԻՍ
 ԱՆԻՈՅ ԵՒ ՆԱՅԱՆԳԻՍ ՇԻՐԱԿԱ[Յ], ԺԱՌԱՆԳՈՐԴԻ ՍԵՓՅԱԿԱՆ ՄԵՐՈ[Յ] / ԱԹՈՌՈՅՈ,
 ՈՐ ԵՏՈՒ ՆՈՒԵՐ ՅԻՍ ՀԱԻՐԵՂԵՐԱԻՐՆ ՅԱ[ՍՏՈՒԱ]ՇՍՏԱՊԱՄԻԷՆ ՏՆ Բ/ԱՐՍՐԻ ՀԱԼԱԼ
 ԱՐԴԵԱՍՔՔ ՍՏԱՑԵԱԼ ՄԲ ՈՒԽՏՍ ՄՔԱՏ ՁՆՈՐԻՆ ԳԱՆՁ/ԱԳԻՆ ԳԵՐԱ, ՄԵՐՁ Ի
 ՅԱՐԴՔ, ՈՐ ԿՈՂԻ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՑ ԹԱՂՔ, ԸՆՁ/ԱԵՑԻ ՁՍԱ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ
 ՀԱՅՐԵՆԻՔ ՄԻՆՁ Ի ԿԱՏԱՐԱՇ ՅԱԻՏԵՆԻՍ / ՅԱՂԱԳՍ ՅԻՇԱՏԱԿԻ ՄԵՐՈՅ ԵՒ
 ԱՐԵԻՇԱՏՈՒԹԵ[ԱՆ] ԵՂԵՐԱԻ ԻՍՈՅ ԴԱՐՓԻՆ ԵՒ Հ/ՈԳԵԻՈՐ ՏՆ ԲԱՐՍՐԻ՝ ՍՏԱՑՈՂԻ
 ՍՈՑԱ ԵՒ ՇՆՈՂԱՑ ՄԵՐՈՅ ԵՒ ԵԴԻ ԼՈՒՇ Ի / ՎԵՐԱ ՍՊԱՍԱԻՈՐԱՑ, ՍՈՐԱ Ի ՏԱՐԻՆ
 [Վ]ԵՑ ԱԻ ՊԱՏԱՐԱԳ ՓՈԽԱՐԵՆՍ Հ/ԱՏՈՒՑԱՆԵԼ Ի ՏԱԻՆԻ ԴԱՁԱՐՈՒՆ, ՁԵՐԿՈՒՄՆ
 ՏՐ ԲԱՐՍՐԻ, ՁԵՐԿՈՒՄՆ ԻՍ / ՀԱԻՐՆ՝ ԱՊՈՒՂԱՄՐԻ, ՁԵՐԿՈՒՄՆ ԻՍ ՄԱԻՐՆ՝
 ՄԱՅՍԼԸՔԻՆ, ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐ/ԵԼ ՄԻՆՁ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ: ԵՒ ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍՑԵ
 ՀԱԿԱՌԱԿԻԼ ԵՒ ՁՅԻՇԱՏԱԿՍ / ՄԵՐ ԽԱ[ՓԱ]ՆԵԼ, ԻՍԿ ԷԹԵ ՈՔ ՅԱՆԴԳՆԻ ԵՒ ՁԱՅՍ
 ԳԵՐԱ ՅԱՅՍ ՎԱՆԻՑՍ ՀԱՆԵԼ ԿԱ/ՄԵՆԱ՝ ՀԱՆՑԵ ՁՆԱ ՄԻՇ Ի ԿԵՆԱՑՆ ԱՆՎԱԽՃԱՆԻՑՆ,
 ՀՈԳԻՈՎ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ, ԻՍԿ / ՈՐՔ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՅԵՆ ՁԳՐԵԱԼՍ ՄԵՐ՝
 ԱԻՐՅՆՈՒԹԻ[Ի]Ն ԱՅ ԵՂԻՑԻ Ի ՀՈԳԻ ԵՒ / Ի ՄԱՐՄԻՆ ՆՈՑԱ. ԱՄԵՆ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 220, Ալիշան, Շիրակ, 165,
 Գեորգեանց, 165-166, Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 56:

Ծանոթ. Նախկին բոլոր հրատարակիչների մոտ բացակայում է թվականը:

Անիի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը իր հորեղբայր Բարսեղի «հալալ արդեամբք ստացեալ» (նկատի ունի նախորդ վկայագրում փաստված իրողությունը - խմբ.) վանքին է նվիրում դրամագին հայրենյաց Թաղք գյուղը, որի դիմաց սահմանվում է վեց պատարագ Ս. Ղազարի տոնին: Բնագրում նշվում է, որ նվիրված գյուղը գտնվել է ՄԵՐՉ Ի ՅԱՐԴՔ, այսինքն՝ Արդք բնակավայրի մոտ: Նախորդ հրատարակիչները, բացառյալ Ս. Բարխուդարյանի, վերծանել են «Արդիք», և ինչպես նույն նվիրատուի մյուս վկայագրում այն նույնացրել ներկայիս Արթիկ կոչվող քաղաքի հետ: Ցավոք, ո՛չ այստեղ, ո՛չ մյուսում Դ տառից հետո բացակայում է Ի տառը, չնայած, «Արդքը» հետագա դարերում կարող էր դառնալ Արդիք կամ Արթիկ:

104. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան խաչաթևի հյուսիսային պատին, արտաքուստ, նախորդի վերջին կիսատ տողից շարունակված, 2 տող.

ՋԵՐՁԱՆԻԿ ՉԱՅՐ ՋԱՌԱՔԵԱԼՆ ԵՒ ՋՏԱՆԱՏԵՐ ԵՒ / ՋԱՐԴԻՆԱՐԱՐ ՏԱՆՍ
ՋՈՌԲԵՆ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՄ: ՉԻՐԳԵՍԱՆԱՍ (ՄԱՆԱՍԵ ԳՐԻՉ):

Չրատ. Ջալալյանց, Ա, 220, Ալիշան, Շիրակ, 165,
Գեորգեանց, 166, Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 56:

Ծանոթ. Գրված է նույն գրչի ձեռքով, ժամանակակից է նախորդին: Վերջին բառը չենք հասկանում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում, մեր դիտարկմամբ վիմագրերում առաջին անգամ հանդիպող ԱՐԴԻՆԱՐԱՐ բառեզրը, որը մեկնաբանվում է «երկրագործ, մշակ, վաստակաւոր ժիր և փոյթ ի գործ հասարակած. եղև այր արդիւնարար» (ՆԲՉԼ, հ. 1, էջ 350): Ռոբեն-Ռուբենը, ամենայն հավանականությամբ, վանքի տնտեսության, հողամշակության հարցերը տնօրինողն էր: Չ. Եղիազարյանը գտնում է, որ հայր Առաքեալը վանքի առաջնորդն է: Սակայն, ամենակարևոր «հայտնագործությունը» վերաբերում է վերջին բառին, որը հատորիս կազմողը համարում է անհասկանալի: Մեր պրպտումները բերեցին ուշագրավ եզրահանգման, այն է՝ տառակապակցությունը պետք է ընթերցել աջից ձախ, ինչի արդյունքում կարդացվում է ՄԱՆԱՍԵ ԳՐԻՉ: Այս արհեստավարժ քարգործին անդրադարձել է Ս. Բարխուդարյանը (ՄՅԾՔՎ, էջ 200). XIII դարի գրիչներից առաջինը հիշում է նրան, հիմք ընդունելով Բագնայրի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի ձախ կողմում, արտաքուստ, Ավագտիկնոջ նվիրատվական քառատող արձանագրությունը, որը «ստորագրել է» ՄԱՆԱՍԵ ԳՐԻՉ-ը (Կ. Բասմաջյան, ՉԱԱԲՍ, էջ 165):

Գրչագիրը՝ վերևում:

105. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային խաչաթևի արևելյան պատին, արտաքուստ, 8 տող.

ԿԱՄԱԿԻՆԱՅ:	ԵՍԵՐԳՐԻԳՈՐՈՐԻԻԻԱՊՈՐԼ
ԱՄՐԻԱՆՈՅԵՊԻՍԿՈՊՈՍՍ:	ՏՈՒԻՉԱՐԴԻԲԵԻ
ՉՈՐԵՆՈՅ ՉԻՐԻՑՈՒԴԻՆՆԱՊԱՄԱԿԻՆ	ՀԱՅՐԵ
ՆԵՑՆԵԻՆՈՔԱՏԱՐԻՆ:	Ա:ԱԻՊԱՏԱՐԱԳ ԻՆՉ:ՀԱՄ
ՍՏԱՆՈՒՊԱՀ	ՈՂԲՆԱԻՀԱԻՅԱՅԵԻԱԵԻԿ:ԵՈՒԵ
ՈՔՀԱՆԵԿԱՆՍԿԱՄԻՆԱԽԱՂՈՒԿՄ	ԲԻՆՈՒԴԲ
ՉԿԱԵՆԻՆԵԻՉՅՈՒԴԻ	ԱԻԱՌՅԵ:ՅԺԷ:ԻՑՆՆՉՈՎ
ԵԱԼ ԼԻՑԻԵԽԵՐՄԵ	ԼԱՅՆՊԱՐՏ ԱԿԱՆ ԵՆԻՑԻ

ՋԿՆԻ ԿԵՆԱՑ ԻՄՈՑ ԻՆՁ Ի ԴԱՅՐՈՒԹԵԼԱՆՆ ԼՈՒԱՔԵԼԻՒՍ / ԵՒ ՈՐ ՋՅԵՏ ՍՈՐԱ
 ՅԱԶՈՐԴԻՆ ԱՆԽԱԲԱՆ ԿԱՏԱՐԵԼ ՋՅԻՇԱՐՏԱԿ՝ ՄԵՐ ... / Լ ԸՆԴ ԽՂԾԻ ԲԵՌԱՄԲՍ
 ԴՁԱՅՍ, ՈՐ ԸՆՁԱՅԵՑԱԲ ...ՄԵՆՋ ՑԻՒՑԻՔԻ ...ԼԱԶԱՏ՝ / ՅԱՄԵՆԱՅՆ ԴԱՐԿԷ
 ԲՈՆԱԲՈՐԱՑ ԵՒ ՄԻԱՅՆ ԴՈԳԷ... / ԱՐԴ, ԷԹԵ ՈՔ Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ
 ՅԱՓՇՏԱԿԷ՛Լ... Ա...Դ... / ՍԱՐՄԱՆԱՑ ԱՌՑԵ :ՅԺԸ: (318) ԴԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԱԾ
 Է՛Լ, ԵՒ ՈՐ ԴԱՐՍՏԱՆՏՈՒՆ ՊԱՐԵՆ ԼԱԲՐՅՆԻՆ ՅԱՅ, Ի ԹՎԻՍ ՈԾ (1201):

Գրատ. Գեորգեանց, 164-165,
 Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 56-57:

Ծանոթ. Այս կարևոր արձանագրության վերծանությունը, ինչպես Ս. Գևորգյանցի և Գ. Եղիազարյանի, այնպես էլ Ս. Բարխուդարյանի մոտ կիսատ է՝ մինչև յոթերորդ տողը: Ուշագրավ է, որ ծեռագրում առկա են և՛ լուսանկարը, և՛ գրչագիրը: Արձանագրության շատ հատվածներ միտումնավոր եղծված են: Վկայագիրն աչքի է ընկնում ուշագրավ ու հազվադեպ հանդիպող փաստերով ու արտահայտություններով: Ջաքարեն հիշված է իր բոլոր պաշտոնական տիտղոսներով՝ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՐՆՇՆԱՅ ԵՒ ՄԱՆԴԱՏՈՐԹԱՎԻՆՈՒՑԱՅՍ, վիճաբերում խիստ սակավ է հիշատակվում Սարգիս Ջաքարյանի կնոջ, Քուրդ Մահկանաբերդցի իշխանի դուստր Սահակադուխտի անունը, սկզբնաղբյուրներում առաջին անգամ է վկայված «բռնավորաց հարկ» սոցիալ-իրավական բառեզրը, որն առայժմ դժվարանում ենք մեկնաբանել: Թվականի տառերը բավական եղծված են, սակայն պահպանված (երևացող) գծերը առավել հիշեցնում են ՈԾ տառերը, բացի այդ գրեթե միակն են, որ համապատասխանում են Ջաքարեի ժամանակաշրջանին: Միավոր տառը չենք նշել, քանի որ տեղում առկա են, թեկուզ կիսեղծ, սակայն երկու տառ:

107. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան խաչաթևի հարավային պատին, արտաքուստ, 7 տող.

ՇՆՈՐՀԻՆ ԱՅ, ԵՄ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԻՍ ԵՂԲԱՐՔՍ, ԲՇՏԿԱ ԹՈՌՆ/ԵՐՍ, ՏՈՒԱՔ ՋՄԵՐ ԴԱՅՐԵՆԻՔՍ ՋՍԱՌՆԱՂԲԻՐ Ի ՄԲ ՍՏԵՓԱՆՆՈՍՍ / Ի ԴԱՅՐՈՒԹԵԱՆՍ ՄՈՎՍԻՍԻ ԵՒ ԻՐ ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՐՑՍ՝ ԱՌ/ԱՔԵԼԻՍ ԵՒ ՎԱՐԴԱՆԱ Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐ ՃՆՈՂԱՑՆԵՒՄԵՁ ՄԱՐՄԱՆԵՑԻՆ ՋՍՈՒԴՐԲ ԽԱՉԻՆ ՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ :Բ: / ՄԱՏՈՒՌՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋՔՍ, :Ա: ԱԻՐՆ ՄԽԻԹԱՐԱ, :Ա: ԴՈԳ/ՆՎԿԱ: Ն Վ Կ Ա	ՇՆՈՐՀԻՆ ԱՅ ԵՄ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԻՍ ԵՂԲԱՐՔՍ ԲՇՏԿԱ ԹՈՌՆ/ԵՐՍ ՏՈՒԱՔ ՋՄԵՐ ԴԱՅՐԵՆԻՔՍ ՋՍԱՌՆԱՂԲԻՐ Ի ՄԲ ՍՏԵՓԱՆՆՈՍՍ Ի ԴԱՅՐՈՒԹԵԱՆՍ ՄՈՎՍԻՍԻ ԵՒ ԻՐ ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՐՑՍ ԱՌ/ԱՔԵԼԻՍ ԵՒ ՎԱՐԴԱՆԱ Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐ ՃՆՈՂԱՑՆԵՒՄԵՁ ՄԱՐՄԱՆԵՑԻՆ ՋՍՈՒԴՐԲ ԽԱՉԻՆ ՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ :Բ: ՄԱՏՈՒՌՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋՔՍ :Ա: ԱԻՐՆ ՄԽԻԹԱՐԱ :Ա: ԴՈԳ
--	---

ՇՆՈՐՀԻՆ ԱՅ, ԵՄ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԻՍ ԵՂԲԱՐՔՍ, ԲՇՏԿԱ ԹՈՌՆ/ԵՐՍ,
 ՏՈՒԱՔ ՋՄԵՐ ԴԱՅՐԵՆԻՔՍ ՋՍԱՌՆԱՂԲԻՐ Ի ՄԲ ՍՏԵՓԱՆՆՈՍՍ /
 Ի ԴԱՅՐՈՒԹԵԱՆՍ ՄՈՎՍԻՍԻ ԵՒ ԻՐ ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՐՑՍ՝ ԱՌ/ԱՔԵԼԻՍ
 ԵՒ ՎԱՐԴԱՆԱ Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐ ՃՆՈՂԱՑՆ ԵՒ ՄԵՁ / ԵՒ ՍՈՔԱ
 ՍԱՐՄԱՆԵՑԻՆ ՋՍՈՒԴՐԲ ԽԱՉԻՆ ՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ :Բ: / ՄԱՏՈՒՌՆ
 ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋՔՍ, :Ա: ԱԻՐՆ ՄԽԻԹԱՐԱ, :Ա: ԴՈԳ/ՆՎԿԱ:

Գրատ. Ջալալյանց, Ա, 219, Ալիշան, Շիրակ, 165,
 Գեորգեանց, 167, Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 56:

Ծանոթ. Գրված է նախորդից առաջ, 1200թ. մոտերքը, որովհետև Ջաքարեի արձանագրության մեջ հիշատակված վանքի առաջնորդ Առաքելը այստեղ դեռ միաբան է հիշվում:

Սա Բշտիկ անձնանվան, մեզ հայտնի, միակ վկայությունն է: Վանքի առաջնորդ Մովսեսի նույնպես միակ հիշատակումն է: Նա հետնորդել է Բարսեղին և նախորդել Առաքելին: Այստեղ արձանագրված է մի ուշագրավ երևույթ. նվիրատու Գրիգորը և նրա, կարծում ենք, արյունակից եղբայրները, հիշված են ոչ թե, կամ ոչ միայն ծնողների, այլ պապի՝ Բշտիկի անվամբ: Վերջինս կարող էր լինել նաև տոհմանուն՝ Բշտկանց, որով, թերևս, առավել հայտնի են եղել նրանք: Նրանց տոհմական սեփականությունը հան-

դիսացող Սառնաղբյուր գյուղը դժվարանում ենք նույնացնել տարածաշրջանի նույնանուն բնակավայրերի հետ, քանի որ նրանք այդ անունն ստացել են XX դարում (Շիրակի մարզի հայտնի Սառնաղբյուր բնակավայրը և համանուն գյուղատեղի Արթիկի տարածաշրջանում, Հառիճավանքից փոքր-ինչ հարավարևելք, ծորամիջին):

108. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան խաչաթևի վերին ճակատային մասում, արտաքուստ, 14 տող, մասամբ հողմահարված.



... / ... / ՈՐԴԻ ԱԻՍՄԱՆԻ, ՄԻԱԲ/ԱՆԵՑԱ ՄԲ ՈՒՆՏԻՍ
 ԼՍԲԱՏԱ ԵՍ ԵԻ / ԱՄՈՒՄԻՆ ԻՍ ՍԱՐԱԻԹԱ ԵԻ ԶՄԵՐ
 ԳՈԳՈ ԲԱԺ/ԻՆՆ ՇԻՆԵՑԱՔ ԶԳՄԲԵԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ
 ԵԻ ՏՈՒԱՔ / Ի ՎՆԱՆՔՍ ԱՅԳԻ ՅԱՐՈՒԾ, ԶԳՈՍ
 ԴՈՒԱՆ Ի ԶԵ/ՌՆ ՉԱԻՐ ՄԱՄԻԿՈՆԻ ԵԻ ԱՅԼ ԵՂԲԱՐՑՍ,
 ՈՐՔ / ՓՈՒՆԱՐՆԵՆ ՉԱՏՈՒՑԻՆ ՄԵԶ ՊԱՏԱՐԱԳԻՔՍ /
 :Ե: ԱԻՐ, :Գ: ԻՆՁՂՂ ԵԻ :Բ: ՍԱՐԱԻԹԻ Ի ՏԱԻՆ/Ի ՄԲ
 ՍԱՐԳՍԻ, ՉԱՍՏԱՆՏՈՒՆ ՊԱՅՈՂՔԻՆՆՆ ԱԻՐՉՆԻՆ ՅԱՅ,
 ԵԻՆ ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ / ԴԱՏԻՆ ԻՆ ՔՍԵ:

Չրատ. Ալ. Մանուչարյան, «Լրաբեր», 1967, ք. 2, 83:

Ծանոթ. Առաջին եռանկյունաձև քարի երեսն ամբողջովին հողմահարված է, երկու տողի չափով, ուր և պիտի լիներ թվականը: Զախ կողմի մի քարի երեսը ևս հողմահարված է, բայց յուրաքանչյուր տողից մի քանի տառ պակասողները հեշտությամբ լրացվում են: Նույնը և ստորին մեծ քարի վրայի փչացած մասերը, շնորհիվ տառերի և բառերի մնացորդների:


Չամարում են XIII դ. կեսերին գրված, որովհետև դրանից առաջ եղած արձանագրությունների մեջ այլ առաջնորդներ են հիշատակված և վանքի համար կատարվել են նվիրատվություններ Զաքարեի կողմից, հետևաբար, գմբեթն այդ ժամանակ վնասված չի եղել:

Արձանագրության վերին անկյունավոր քարին ուրվագծվում է 2 տառը, որը, կարծում ենք թվականի հարյուրավորը կարող է լինել, ըստ այդմ էլ Ս. Բարխուդարյանի թվագրումը մոտ է իրականությանը: Խնդրա-

հարույց է յոթերորդ տողում ՅԱՐՈՒԾ-ին հաջորդող բառը. Ս. Բարխուդարյանը դաշտային տեսքում գրել է ՋԳՈՄԴՈՒՄՆ, ծեռագիր պրակում ՋԳՈՄԴՈՒՄՆՆ, Ալ. Մանուչարյանը վերծանել է ՋԳՈՄ ԴՈՒՄՆԻ: Ցավոք, նախորդ հեղինակները այս բառին կամ բառակապակցությանը որևէ մեկնաբանություն չեն տվել: Թերևս, պետք է կարդալ ՋԳՈՄ ԴՈՒՄՆԻ:

Ալ. Մանուչարյանի վերծանությունը բավական թերի է. բացակայում է շինարար-նվիրատուի կնոջ՝ Սարաթայի անունը, ԱՅԳԻ բառից հետո կարդացել է ՅԱՐՈՒԾ, ՋԳՈՄ ԴՈՒՄՆԻ և այլն: Նրա կարծիքով եկեղեցին ի սկզբանե եղել է գմբեթավոր և այս վկայագիրը վերաբերում է գավթի նորոգմանը, ինչը կատարվել է XIII դարի սկզբներին:

109. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, ներքուստ, 8 տող.



ԿԱՄԱԻ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ԵՄ՝ ԿԱՐԱՅՊԵՏՍ, ԵԿԻ / Ի
 ՄԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԴՈՒՌՆՍ ԵՒ ՏԵՍԱՅ, ՈՐ ԶՈՒՐ ՈՉ
 ԿԱՅՐ Ի ՍՄԱՅ ԵՒ ԲՆԱԿՉԱՑ ՍՈՐԱՅ ԹԱԽԱՆՁԵԼ ԶԻՍ՝
 ԶԻՆՉ, ՈՐ ՍՄԱՅ ՈՒՆԵԻ՝ ԵՏՈՒԻ ՅԱՅՍ ԵՅԻՐՍՆ ԵՒ
 ԲԱՐԵ/ԽԱԻՍ ԿԱԼԱՅ ԻՆՉ ԶՄԲ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐ ԱԾ,
 ՈՐ ԶԻՍ ՅԻՇԵՆ Ի ՄԲ ԵՊԱՏԱՐԱԳԻՆ ՅԱՅՍ ՄԲ՝
 ԱՌՆԵՆ ԻՆՉ ԺԱՍ ՏԱՐԻՆ ԵՂ: ԱՐ: ԱՐԴ ԵԹԵ ՈՔ
 ՀԱԿԱՌԱԿՂ ԿԱ ԵՂՅՍ Բ/ԱՆԻՍ ԵՒ ԶԻՍ ՄՈՌԱՆԱ, ՄՈՌԱՅԵԱԼ
 ԼԻՑԻ ՅՈՐԴՈՅԻՆ ԱՅ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 218-219, Ալիշան, Շիրակ, 164-165,
 Գեորգեանց, 166 (պակասավոր), Թորամանյան, Բ, էջ 207,
 Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 55:


Ծանոթ. Վեցերորդ տողի մեծ մասը եղծված է: Հրատարակիչների մոտ թերի և աղավաղված է:

Այս, մեր կարծիքով, չափազանց ուշագրավ (և՛ բովանդակությամբ, և՛ արտահայտչաձևով) արձանագրության չորրորդ տողի վերծանությունը, չնայած բավարար պահպանվածության՝ տարընթերցումների տեղիք է տվել: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նախորդ հեղինակների վերծանությունները ԹԱԽԱՆՁԵԼ - ԵՒ ԲԱՐԵՒՄԻՍ միջնամասում.

1. Ս. Ջալալյանց, Ղ. Ալիշան - «զիս ի բերել ջուր... եւ ընկալայ պատարագ»
2. Թորամանյան - «զիս զինչ որ սմա ունէի տուի յայս (?) էրսի»
3. Եղիազարյան - «զիս զինչ թր սմայ ունէի տուի յայսմ»
4. Բարխուդարյան, դաշտ. օրագիր - ԶԻՍ ԶԻՆՉ ՈՐ ՍՄԱՅ ՈՒՆԵԻ (?) ՈՒԻ ՅԱՅՍ ԶՈՒՐՍ» (վերջին բառը սկզբում կարդացել է ԳԻՐՍ, հետո ուղղել)
5. ԶԻՍ՝ ԶԻՆՉ ՈՐ ՍՏԱՅԿՂ ՈՒՆԵԻ՝ ԵՏՈՒ Ի ՅԱՅՍ ԵՅԻՐՍՆ:

Վերծանության մեջ խնդիր է ստեղծում S և U տառերի որոշ նմանությունը՝ USU3[4], USU3 և [3]իՐՍՆ բառի առաջին տառի կիսեղծ լինելը ու վերջին Ն տառի կցագրությունը, ինչը, չնայած U տառի աջ ստեղծի վերևում Ն-ի վերին կիսակլորի թույլ արտահայտվածությանը, կասկած է հարուցում, քանի որ վիճագրում բացակայում է որևէ կցագրություն կամ փակագրություն:

110. U. USԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան խաչաթևի հարավային պատին, արտաքուստ, 7 տող.




† ՇՆՈՐՀԻԻՆ ԱՅ, ԵՍՍԻՄԵԻՆ, ԾՈՒՊՈՒԼԻՍ ՈՐ/ԴԻՍ, ՈՐ ԵՏՈՒ ԶԻՄ ԱՅԳԻՆ, ՈՐ ՄԱԻՏ ՅԱԿԵՏԵՑ/Ն Է ԶԻՄ ԲԱԺԻՆՆ ԼՄՊԱՏԱՅ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ / ԵԻ ԲԱՐԵԽԱԿ ԻՆՉ ԱՌ ՔՍ: ԱՐԴ: ԵԹԵ ՈՔ ՅԱԿԱՌԱԿ ԿԱՅ / ԱՅՍ ԲԱՆԻՍՔՍ ԱՃ ՆՉՈԿԷ ԶԻՐ ՄԱՅՆ ԵԻ ԶԻՐ ԿԵԱ/ՆՔՆ, ԵԹԵ ՈՔ ՅԱԿԱՌԱԿԱՅԲԱՐ ՉՆՉԵԼ ՉԱՆԱՅ ՉՍ/Վ, ՉՆՉԵՍՑԻ ԱՃՐ ՉՆԱ ... ՅԱԿԻՏԵՆԻՑ ԿԵՆՎԱՑԻ:

Չրատ. Ջալալյանց, Ա, 219, Ալիշան, Շիրակ, 164, Գեորգեանց, 166-167, Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 57:

Ծանոթ. Այս նույն Սիմեոնը նվերներ է արել նաև Չոգեվանքին՝ 1205 թվակիր խմբական արձանագրության մեջ (արձ. 16 - Խմբ.):

111. U. USԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. թմբուկի հարավարևմտյան նիստին, արտաքուստ, 5 տող.




ԿԱՄԱԿՆ ԱՅ, ԵՍՐԱՐՍԵՂՍ, Ե/ՏՈՒ ԶԻՄ ԱՅԳԻՆ ԶՄԱՆՆՈՒՐՆ / ԵԻ ԶՆԾԱՆՆ Ի ՄԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ/Ս ԵԻ ՍՊԱՍԱԿՈՐՔ ՍՈՐԱ ՊԱՏ/ԱՐԱԳ Ի ՔՍ, ՅԱՆՈՒՆ ԻՍ Գ:

Չրատ. Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 57:

Ծանոթ. Չրատարակչի մոտ բոլորովին աղավաղված է:

Երկրորդ տողի նախավերջին տառը կարելի է կարդալ նաև S: Վերջին Գ տառը, թերևս, ցուցում է հատկացված պատարագների թիվը:


112*. U. USԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. նախորդի վերին ձախ քարին, 1 տող.



[ԹՎԻՆ] ՈԼ (1181):


Ծանոթ. Գրեթե համոզված ենք, որ սա թվական է, սակայն վստահ չենք, որ այն վերաբերում է նախորդ վկայագրին:

113*. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. քմբուկի հարավարևմտյան նիստին, քիվի տակ, 4 տող.



ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՀԱՐԱՅ/ՊԵՏ ՔԱՂԱՅԱՆԱՅԻՆ, ՈՐ ՇԱՏ ԱՇԽԱՏԵՑԱԻՒ Ս/ՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍՍ, Ի ՅԻՅԵԱՅԱՅԱՅ ՄԻԵՆ/ՐՈՑՍ:

114. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. քմբուկի հյուսիսարևմտյան նիստին, արտաքուստ, 9 տող.



Չ † (1251) / ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՄ ԻՇԽԱՆՍ, ՈՐ ԻՄ ԿԱՄԱԻ ԵՒ ԻՄ ՍՐՏԻ / ՅՈՒԺԱՐՈՒԹԵԱՍՅԲ ԶԻՄ ԸՆԾԱՆՆ ԾԱՂԻՏԵՑԻ ԼԼՄԵԱՏԱՅ ՍԲ / ՍՏԵՓԱՆՈՍԻ ՈՒ ԶՈՒՐ, ԽԱՂԱՅՐՈՅ :Ծ: ՍՊԻՏԱԿՅ ԱՅՍ ԱԻՐ, / ՈՐ ԾԱԽԵՑԻ ԶԿԵԱՐ ԱՌԻ Ո՛Չ ՈՒՄ ԱՂՍ ԶԿԱՅ ՀԵՏ / ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ, Ո՛Չ ԻՄՈՑ ԵՒ Ո՛Չ Ի ՈՒՏԱՐԱՅ, ՈՒ ԵՄ՝ ՍԻՅԱՅԲԱՆԵՑԱՅ, ԵՄ՝ ՎԱՆԵՐԷՑ ՈՐԴԻՅՍ, ԳՐԵՑԻ ՀՐԱՄԱՆԱԻ ԻՇ/ԽԱՆԻՍ ՎԻԿԱՅԷ ՇԱՀԱՊՍ :ՅԺԸ: (318) ՆԶՈՎԱՅ Է, ՈՎ ԽԱԲ/ԱՆԷ:

Հրատ. Զալայանց, Ա, 221, Ալիշան, Շիրակ, 164, Գեորգեանց, 165 (վերջնամասը՝ աղավաղված), Եղիազարյան, «Էջմիածին», 1960, Բ, 57:

Ծանոթ. Այս արձանագրությունը ձեռագիր պահպանում բացակայում է, սակայն դաշտային օրագրում «Լմբատում ստուգելիք» վերտառության տակ Ս. Բարխուդարյանը նշելով՝ «ես չունեմ, ըստ Եղիազարյանի» ներկայացնում է վերջինիս վերծանությունը: Չնայած բավարար պահպանվածության, վերծանության հարցում առկա են որոշ խնդիրներ, որոնք տարընթերցումների տեղիք են տալիս:

Կարծում ենք, որ նվիրատուն Հառիճավանքի ժամատան կառուցման մեկնմաս հեջուր կամ «մեծ իշխան» Վահրամի Իշխան որդին է (արձ. 60): Վկայագրում ուշադրություն է գրավում ԸՆԾԱՆՆ ԾԱՂԻՏԵՑԻ արտահայտությունը: Որպես անձնանուն առաջին անգամ է վկայված իշխան Իշխանի հրամանը «վկայագրող» Շահապը:

115. Ս.ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան խաչաթևի հյուսիսային պատին, արտաքուստ, 3 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅԵՍՍՈՒ	ՅՆԻ ԿՍՄԻ ԱԲԱՆԵՑԱԾԲ
ՍՏԵՓԱՆ ՈՍԻԵԻԷ	ՏՈՒԻ ՎԱՆՔՍՏԱԻ ԿԻ
ԳՈՒԹԱՆԻ ՍԱՐԻԱԾ	ԾԵՉԷԵԿՈՎԵՐԻ:

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՍՈՅՆԻԿՍ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ / ՍՏԵՓԱՆՈՍԻ
ԵՒ ԷՏՈՒ Ի ՎԱՆՔՍ ՏԱԻՆԻՑԻ ... / ԳՈՒԹԱՆԻ ՍԱՐԻԱԾ ԵԶԻ ԵՒ ԿՈՎԵՐ :Ի:....:

Ծանոթ. Արձանագրության աղբյուրագիտական գլխավոր արժեքը նվիրաբերված առարկայի ԳՈՒԹԱՆԻ ՍԱՐԻԱԾ-ի վկայությունն է, հատկապես երկրորդ բառի, որը, մեզ հայտնի միակ հիշատակությունն է: Բառեզրիս ուղիղ ձևը «սարուածք» է, որ բառարաններում մեկնվում է «կազմվածք, կառուցվածք» նշանակությամբ (ՅԲԲ, հ. 4, էջ 194, Ամատունի, էջ 585), որը տվյալ համատեքստում, թերևս, պետք է նկատի առնել գութանի ամբողջական համակարգը:

116. Ս.ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. թմբուկի քառակուսի պատվանդանի հարավարևելյան անկյան հարավային որմին, արտաքուստ, անավարտ, 4 տող.

ԱՆՈՒԱՍԷ
ԱՅ ԵՄՍԱԹԵԼ
ՍԳՐԳՈՐՈՅ ԴՈՒՍ
ՏՐՍ

ԱՆՈՒԱՍԷՅՆ / ԱՅ,
ԵՍ՝ ՆԱԹԵԼՍ,
ԳՐԻԳՈՐՈՅ ԴՈՒՍՐՍ...

117*. Ս.ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. ավագ խորանի որմնանկարի ձախ կողմում, սևաներկ, բավականաչափ թափված և տեղ-տեղ անընթեռնելի, մոտ 22-23 տող.

ՍԱԼՆԱ ՁԻՄՁ
ՍԲԱԲԱՍԻՄԲԱՄ
ՈՒԱՌՈՍ ԵՌՐԱՅ
ԿԿԱԽՐԵՐՈՐԴՈՒ
ԽՆԱՐՄԱՐՄԱՍՆՈՐԻ
ՎԱՅԱՆ ՍԵՉՍ ԷՈՐ
ԳԱԿ ՍԱՅՍ ՈՐԴԻ ԻՅԷԲ
ԱԿՎՄՆՍ Ս ՈՂՍ ՈՐԱԿԱՆԻ
ՅԱԿՈՎՐՈՍՈՐԷՍՈՅԱՅՆ ԻՅՍՂԻ
ԱՉ
ՈՐԱԿ
ԳԻՍԻՍԱՍ ՈՒ
ԵՎԵՐԱԿԱՅՈՒԿԻՆԻԱՅՍԷԿԵՅՈՅՍԵԻԵԹԵՐ
ՄՍՐՍՍՍ ԱՄՅ ՐԱԶԳ

...ՑԱԼՆԱ ՁԻՄ Ձ... / ...ՍԲ ԼՍԲԱՍ Ի
ՍԲ ՍՏԵՓԱՆ/ՈՍ՝ ԲՈՍ ԵՒ ՈՐ ԱՅԻՍ՝...
...Կ ԿԱ Ի ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ՝ / ...Ի
ՄԱՐՄԱՐՍ ՄԱՍ ՆՈՐ... / ...ՇԱՀԱՆՇԱՀՂ ...ՄԵՂՍ...
Է ՈՐ... / ...ԳԱԿ...Ս ԱՅՍ ՈՐԴԻ ԻՅԷԻՆ /
...ԱԼ ՎԱՅՍՆ Ս...Ս ՈՂԱ (1242) ԹՈՒՎԱՆԻ /
ԻԵՍ ՀԱՅՐՂ ՅԱԿՈՎՐՈՍ, ՈՐ ԷՏՈՒ ՅԱՅՍ ՅԱԳԻ... /
...ԱՉ... / ...ՈՐԱ Ա... / ԳԻՍԻՍ ԱՍ ՈՒ... / ...ԵՒ
ՎԵՐԱԿԱՅՈՒ ԼԻՆԻ ԱՅՍ ԵԿԵԼՂԵՅՈՅՍ
ԵՒ ԷԹԵ ՈՔ / ...ՄՍՐ ՍԱ... ԱՄՑ...ԵՆ... ՐԱԶԳ...

Ծանոթ. Արձանագրության վերջնամասը՝ մոտ 7 տող անընթեռնելի է: Հնարավոր վերծանությունը պարզում է, որ արձանագրությունը VII դարով թվագրվող որմնանկարի հետ կապ չունի, այն XIII դ. գիր է,

բնույթով նվիրատվական, իսկ մանրամասները, ցավոք, անհայտ են: Դատելով բովանդակությունից՝ արձանագրությունը պիտի ավարտվեր նվիրագրերին հատուկ նզովքի բանաձևով, որից մի փոքր հատված պահպանվել է: Վերծանությանը մասնակցել է նաև պատմաբան Կ. Մաթևոսյանը, ըստ որի գրության վրա կարծես կան նախորդ նորոգողների միջամտության հետքերը, որի արդյունքում սխալմամբ ամբողջացվել ու աղավաղվել են վնասված տառերը, ինչպես օրինակ թվականի Ո հարյուրավորը, որը թյուրիմացաբար Ս են դարձրել: Շահանշահի անունը թեական է վերծանված, սակայն եթե այն ճիշտ է, ապա հավանորեն Անիում իշխող Ջաքարյան Շահնշահ Ա-ն է (†1261):

118*. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ. հարավային խաչաթևի հարավային նիստին, արտաքուստ, 2 տող.

ՏՊՐԱՊԵՏԻՍՈՒ ԳՐ
 ԿՏՐՈՒ ԿՏՐՈՒ

ՀԱՅՐԱՊԵՏԻՍ ՈՒ ՏԻՐԱՏՐՈՒ ԱԾ
 ՈՂՈՐՄԻ:

119*. ԽԱՉՔԱՐ. ագուցված է եկեղեցու մուտքի առջևի հենապատի շարվածքում, պահպանված է ստորին մասը, հիմնախաչի աստիճանաձև պատվանդանին թվականն է, որի տակ՝ բուն արձանագրությունը՝ 2 տող.

ՈՒՆԴ
 ԶՄԱՐԳԱՐԵՍԿԱ ՁՄՈՂ
 ՅԻՇԵՑԷ Ի ՔՍ ՄԱՐԳ...

ՈՒՆԴ (1195) /
 ԶՄԱՐԳԱՐԵՍ ԿԱԶՄՈՂ /
 ՅԻՇԵՑԷ Ի ՔՍ ՄԱՐԳ...

Ծանոթ. Խաչքարը Մարգարե քարգործի ձեռակերտն է, ինչի մասին է վկայում վերջինիս բնորոշող «կազմող» բառը:

120*. ԽԱՉՔԱՐ. սև տուֆից, կանգնեցված եկեղեցու արևելյան կողմում, գիրը՝ խաչաթևերի արանքում՝ 5 տող.

ՄԽ
 ԻԹԱ
 Ր
 ԻԿ
 ԻՑՆ,

ՄԽ
 ԻԹԱ
 Ր
 ԻԿ
 ԻՑՆ,
 ՈՐԳ (1224):
 ԱՐ
 Տ

Ծանոթ. Մխիթար-ին հաջորդող տառերը կարելի է կարդալ ԱՐՏԻԿԻՑՆ: Միգուցե սա Արդիկ, Արթիկ բնակավայրի անունն է, որտեղից, թերևս, սերել է, մեր համոզմամբ, խաչքարագործ վարպետը:

ՍԱՐԱԼԱՆՁ

Գտնվում է Հառիճ գյուղից փոքր-ինչ հյուսիս-արևելք: Գյուղը հարուստ է հնագիտական հուշարձաններով, դամբարանադաշտերով ու գյուղատեղիներով:

Գյուղամիջյան եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին վաղմիջնադարյան շինության հիմքերի վրա կառուցվել է XIX դ.: Մեր վերջին այցելության ժամանակ այն նորոգվում էր: Պատերի մեջ ագուցել են խաչքարեր ու քանդակազարդ քարերի բեկորներ: Եկեղեցուց հարավ միջնադարյան գերեզմանոցն է, որտեղ օրորոցածն և հարթ ուղղանկյունածն տապանաքարերից բացի, պահպանվել են նաև խաչքարեր ու քառանիստ կոթողի պատվանդան: Տապանագրերը հիմնականում XIX-XX դարերից են, բացառությամբ մեկի, որը վկայակոչում ենք ստորև.

125*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցածն, գյուղի հարավային գերեզմանոցում, հարավային նիստին, 2 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԼԷՔՍԱՆԻՆ ԵՒ ՈՐ/ԴԻ
ՅԱԿՈԲԻՆ: ԹՎԻՆ ԴԻՃԻԲ (1673):

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԼԷՔՍԱՆԻՆ ԵՒ ՈՐ/ԴԻ
ՅԱԿՈԲԻՆ: ԹՎԻՆ ԴԻՃԻԲ (1673):

Ծանոթ. Դատելով տապանագրից՝ ննջեցյալները երկուսն են՝ հայր և որդի Ալեքսանն ու Հակոբը, ովքեր, թերևս, համաճարակից կամ դժբախտ պատահարից են մահացել: Միևնույն տապանաքարի վրա երկու ննջեցյալի անվան առկայությունը բնավ չի ենթադրում, թե նրանք թաղվել են մեկտեղ: Հարևանությամբ առկա տապանաքարը, ամենայն հավանականությամբ, նրանցից մեկինն է, պարզապես տապանագիրը կազմվել է շիրմաքարերից մեկին:

ՆՈՐ ԿՅԱՆՔ

Գյուղի հարավային եզրին բարձրանում է VII դարի մի եկեղեցի, որը վերանորոգումների ու կարկատանների է ենթարկվել XIX դարում, սակայն հիմնականում պահպանել է իր հին ձևը: Ժամանակին նա այլ եկեղեցիների նման ամրացվել և վեր է ածվել բերդի: Այժմ շրջապատի այդ հավելումները վերացված են: Եկեղեցին կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով:

Հուշարձանի վրա եղած բոլոր արձանագրությունները գտնվում են հյուսիսային պատի վրա, մուտքի շուրջը: Ինչպես երևում է հենց այդ մուտքն էլ հնում եղել է հիմնականը:

Եղած արձանագրությունները սաստիկ հողմահարված-քայքայված են: Շինանյութ քարը ինքնին վատ որակի է և հենց սկզբից եղել է չեչոտ ու ծակոտկեն, որի հետևանքով էլ տեղ-տեղ գրիչը շրջանցելով դրանք՝ գրերը տեղավորել է իրարից հեռու, բայց և մեկից բացի, մնացած չորս արձանագրությունների գրիչը ևս ցածր որակի արհեստավոր է եղել: Ջարմանալի է, թե ինչպես կաթողիկոսի և թագավորի անունից գրված այդ արձանագրությունները փորագրվել են նման վարպետի կողմից, որի և՛ գրերն են անարվեստ, և՛ տողերն անհամաչափ, իսկ տեղադրությունը բոլորովին անճաշակ ու խառն է:

Արձանագրությունները հողմահարված լինելու պատճառով հին տեղագիրները չեն վերծանել: Միայն Ալիշանը դրանցից չորսի թվական պարունակող առաջին տողերն է հաղորդել (Շիրակ, 174):

Մեր ժողովածուի մեջ տեղադրել ենք դրանցից 5-ը, ոմանք լրիվ, ոմանք որոշ բացերով, բայց բոլորի հիմնական բովանդակությունը պարզված է, միայն մեկ արձանագրություն բաղկացած երկու կարճ տողերից և ուռուցիկ գրերով այնպիսի վիճակում է; որ ոչինչ չի հասկացվում, ուստի և բաց ենք թողել: Այդ խաթարված վիճակում էլ արձանագրությունները կարևոր նորություններ են հաղորդում. պարզվում է, որ՝

Ա. Գյուղի հին հայկական անունը եղել է Շոթա: Այդ անունը երկու անգամ հիշատակված է արձանագրությունների մեջ և անկասկած է:

Բ. Շոթա գյուղը XI դարի առաջին տարիներից պատկանել է Հայոց կաթողիկոսարանին և Սարգիս Սևանցի կաթողիկոսը 1001 թվականին թողել է գյուղից գանձվող Շարիատ կոչվող հարկը և 1010 թվականին էլ ջրանցք է կառուցել, ապա նաև հողային վեճեր կարգավորել: Իսկ Գագիկ Ա Բագրատունի թագավորն էլ 1011 թվականին եկեղեցուն է նվիրել Ծըմբաքար կոչվող գյուղը, իսկ այդ անունով գյուղի հիշատակության սա միակ դեպքն է:


Գ. Ջարմանալի է, որ XI դարի առաջին երկու տասնամյակների այդ ծաղկուն վիճակից հետո գյուղը և եկեղեցին կորցրել են իրենց նշանակությունը, ոչ միայն ավելի ուշ արձանագրություններ չկան, այլև գյուղի անունն էլ մոռացվել է: Ծիշտ է Հռոռոմոսի արձանագրությունների մեջ XIII դարում երկու անգամ հիշատակված է համանուն գյուղ, բայց հնարավոր է, որ վերջինս Հռոռոմայրի վանքի մոտակայքում է եղել: Նույնանուն գյուղեր տարբեր վայրերում սովորական երևույթ էր և՛ հնում, և՛ ներկայումս:

Արձանագրություններն այդպիսի քայքայված տեսք են ունեցել վաղուց ի վեր: Մեր ձեռքի տակ է մեծ երախտավոր Թ.Թորամանյանի կատարած 1913 թ. լուսանկարը, որի վրա նույն վիճակն է արտահայտված:

Այժմ Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին ներառնված է գյուղի մեջ, շրջապատված բնակելի տներով: Ծարտարապետական հորինվածքով խաչաձև հատակագծով կենտրոնազմբեթ եկեղեցի է: Ուսումնասիրողների կողմից թվագրվում է VI դարի երկրորդ կեսով: Վիճագրերի առաջին գիտական հրատարակությունն իրականացրել է հնագետ-վիճագրագետ Հուսիկ Մելքոնյանը⁵⁴:

⁵⁴ Հուսիկ Մելքոնյան, XI դարի վիճագրեր Նոր Կյանք գյուղից, Լրաբեր (հաս. գիտ.), 1983, թ. 5, էջ 57-67:

126. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, արևմտյան մասի վերևում, ուռուցիկ տառերով, 5 տող.



[Ի] ՆԾ (1001) ԹԻՎԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ / [Ի] ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
 ԳԱԳԱ, ԵՄ / ՏՐ ՍԱՐԳԻՍ, ՈՐ ԹՈՂԻ ՇՈԹԱԻ ՇԱՐՅԱՍ /
 ՅԵ...Ն...ԿԱԹ... :Ա:, ԵԹ[Է] ՈՔ ՀԱԿԱՌԱԿ] ԿԱՆ/ՁՈՎԱԾ Է
 ՅԱՅ , :ՅԺԸ:-ԻՑՆ (318). ԱՄԵՆ:

Հրատ. Ալիշան, Շիրակ, 176 (մինչև ՈՐ ԹՈՂԻ, առանց թվականի),
 Գեորգեանց, 147 (պակասավոր), Գ. Մելքոնյան, «Լրաբեր», 1983, 5, 58:


Ծանոթ. Գրված է ուռուցիկ գրերով և անարվեստ. հայտնի է, որ ուռուցիկ գրերը ավելի ենթակա են քայքայման: Ներկա դեպքում քայքայված են չորրորդ տողի սկզբի մասերը:

Երրորդ տողի վերջի ՇՈԹԱԻ ՇԱՐՅԱՍ բառերից վերջինը հայտնի տուրքի անուն է. դրան նախորդող ՇՈԹԱԻ բառը համարում ենք տեղանուն և հենց այս Նոր Կյանք գյուղի հնագույն անունը:

Այս անունով գյուղ հիշատակված է երկու անգամ Հռոմոսի արձանագրությունների մեջ, XIII դարի սկզբում. մեկ անգամ Շալթա գրությամբ, որը վանքին է նվիրել Խուրլուխաթունը և մյուս անգամ՝ Շավթա (սեռ. Շավթաի), որը նույն վանքին է նվիրել Անիի արքեպիսկոպոս տեր Գրիգորը (Ալիշան, Շիրակ, էջ 21, 23): Ներկա դեպքում դրանց ոչ թե տեղադրությունն է կարևոր, այլ այդ անունով գյուղեր լինելը:

Չորրորդ տողի սկզբում վնասված է 2-3 բառերը. ըստ բովանդակության՝ պետք է լինեին շարիատ կոչվող հարկով տրվող մթերքի անունները, հնարավոր է, որ առաջին բառը լիներ ՅԵԶԻՆ, որի առաջին երկու գրերը պահպանվել են, և երկրորդ, կաթնամթերքի անուն:

127. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային մուտքի գլխի խորշի կիսակամար պսակի վրա, 3 տող.



† :ՆԾԹ: (1010). Ի ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՅԱՅՈՑ, ԵՄ ՏՐ ՍԱՐԳԻՍ ԴԱՐՁՈՒՑԻՑ /
 ԶԳՈՒՐԳԷՆԱ ՈՐԴԵՑՆ ՅԱՅՐԷՆԻՔՆ ՅԻՐԵՆՑ ԴԱՏԱՍԱՆՈՐՈՎ ԵՒ ԱԺԱՆԻ Ո... / ...ԻՍ...
 ՈՒ... ՅԱԿԱՌԱԿ ԿԱ ՆՁՆՈՎԻՅԱՅ ՄԵՒ ՅԱՄԵՆ ՍՐԲՈՑ՝:


Գրատ. Գ. Մելքոնյան, «Լրաբեր», 1983, 5, 63:

Ծանոթ. Գ. Մելքոնյանը երկրորդ տողի վերջում ԱԺԱՆԻ-ն վերծանել է ԱԾԱՆԻ, իսկ երրորդ տողի վերջի վերծանվող բառը՝ ՍՐԲԷ:

Նախորդ հրատարակիչը վիճաբանության մեջ առաջադրում է, մեր կարծիքով, հնարավոր վարկած. «Հայտնի է, որ Աշոտ Գ Ողորմածի (953-977) որդիներից՝ Գուրգեն Ա Բագրատունին, ստանալով Տաշիրը և Ձորագետը, 972 թ. հիմք դրեց Լոռվա Կյուրիկյան թագավորությանը: Նրան հաջորդած Դավիթ Անհողինը (մոտ 996-1048/49) իր եղբայր Սմբատի հետ ոչ միայն ընդարձակեց թագավորության սահմանները, այլև փորձեց ազատվել Գագիկ Բագրատունու գերիշխանությունից: Վերջինս 1001 թ. ծնունդ մեծ ուժերով մտավ Լոռի, պաշարեց Շամշուղեն և սկսեց ավերել թագավորության ամրությունները: Դավիթը չհամարձակվեց մարտի բռնվել հորեղբոր հետ. «...յաղագս սակաւ լինելոյ զաւրաց նորա (Դավթի - իմբ.) առ բազմութեամբ զաւրացն Գագկայ. այլ միջնորդութեամբ հայրապետին Տեառն Սարգսի եկն ի հնազանդութիւն Գագկայ արքայի, և հանդիպեցաւ նմա յաւանն Շիրակայ: Եւ ուխտ խաղաղութեան հաստատեալ Տեառն Սարգսի՝ կալ ի հնազանդութեան Դաւթի, իբրեւ որդի առ հայր, եւ Գագկայ՝ հայրենի խնամով սիրել զնա» (Ասողիկ, 2011, էջ 825-826): Արդյո՞ք այս դեպքերի հեռավոր արձագանքը չէ քննվող արտոնագիրը: Այս դեպքում կարելի է ենթադրել, որ Կյուրիկյաններից բռնագրաված հողերից բաժին է հանվել կաթողիկոսությանը, որը և հետագայում իբրև հայրենի տիրույթ վերադարձվել է Գուրգենի որդիներին»⁵⁵:

Հուշարձանի ճարտարապետությունն ուսումնասիրող Վ. Գրիգորյանը թվականը նշել է ՆԾԲ (1003)⁵⁶:

128. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատի կենտրոնում, մուտքից արևելք, 13 տող.



:ՆԾԹ: (1010) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՅԱՅՈՑ, ԱՅՍ ԻՍ / ԳԼԻՂԻ Ե
 ՏՆ ՍԱՐԳՍԻ, ՈՐ ԾԱԽԵՑԻ ԶՋԱՂԱՑՍ ԻՍ / ...ԱՐ...Ս ԵՒ ԻԻՐՈՂ
 ՈՐԴԵԱՑՆ ԻԲԱՆԻԿԱՆ Ի ԺԱՌԱՆ/ԳՈՒԹԵԱՆ Ի ԳԻՆ

55 Գ. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 63-65:

56 Վահագն Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, էջ 35:

ԳԱՆՁԻ ՉԿԱՐԷ ՈՔ ԽԱՓԱՆ ԼԻՆԵԼ, / ՈՐ ՆԻՍՏ Ի ՅԱԹՈՌ
 ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ. ԵԹԷ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ / ԿԱ ՆՁՈՎԱԾ Է
 Ի ՄԵՁԱՆԻ ԵՒ :ՅԺԸ:-ԻՑՆ (318) / ԵՒ Ի ՄԵՐ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ
 ՀԱՍՏԱՏՈՒՆ Է ԳԻՐՍ ԱՅԼ ՎԱՍՆ / ՄԱՐՄՆԱՎԱԳՍ, ՈՐ
 ԱՎԱԳԱՑՍ ՅԱՂԱԳՍ ԵՆՆԱՅ/ԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԻԼԻՆԻ ԵԹԷ ՈՔ
 ՀԱԿԱՌԱԿ / ԿԱ ՆՁՈՎԱԾ Է Ի ՅԵՐԿՆԱՎՈՐԱՑ ԵՒ Ի
 Յ/ԷՐԴՐԱՎՈՐԱՑՍ. ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄ/ԱՆՄԱՑՍ ԱԲՐԻՆԻՑ/ԻՆ:

Հրատ. Հ. Մելքոնյան, «Լրաբեր», 1983, 5, 65:

Ծանոթ. Արձանագրությունը վատ է պահպանվել, ըստ այդմ էլ բավական տարընթերցումներ կան սույն և նախորդ վերձանություններում: Երկրորդ տողի սկզբում, ոչ շատ պարզորոշ, բայց կարդացվում են ԳՐԷՏՆ տառերը (վերջին երկուսի վրա ուրվագծվում է պատիվ նշան): Կարծում ենք՝ գրիչը «մոռացել է» Ի տառը. Հ. Մելքոնյանի մոտ՝ ԳՐԷԱՆ ՍԱՐԳՍԻ: Երրորդ տողի սկզբում որոշակիորեն ուրվագծվում են ԱՐ և Ս տառերը (դրանք երևում են և՛ գրչագրում, և՛ լուսանկարում), ուստի այդ տառերը ներառում ենք Ս. Բարխուդարյանի վերձանության մեջ:


Չորրորդ տողի վերջում Ս. Բարխուդարյանը կարդացել և գրել է ԽԱՓԱՆԵԼ, այն դեպքում, երբ գրչագրում կարդում ենք ԽԱՓԱՆԱՆԵԼ կամ ԽԱՓԱՆ ԵՒ: Հ. Մելքոնյանը վերձանել է ԽԱՓԱՆԵԻՆ ԵՒ, ինչպես իր գրչագրում: Ուշադիր զննելով այս հատվածը մենք հակված ենք կարդալու մեզ առաջին անգամ հանդիպող, սակայն բովանդակային առումով, կարծում ենք, հարիր՝ ԽԱՓԱՆ ԼԻՆԵԼ արտահայտությունը:

Հինգերորդ տողի սկզբում Հ. Մելքոնյանը կարդացել է ՈՐՆ Ի ՄՍԻ ՅԱԹՈՌ: Պահպանվածության վիճակն այնպիսին է, որ տուրք պետք է տանք տրամաբանությանը, որը Ս. Բարխուդարյանի վերձանության օգտին է, մի տարակարծությամբ՝ ՆԻՍՏԻ խիստ բարբառային արտահայտության փոխարեն՝ ՆԻՍՏ Ի ՅԱԹՈՌ, չնայած Ի և Յ տառերի «հակամարտությանը»:

Յոթերորդ տողի սկզբնահատվածը, մինչև ՀԱՍՏԱՏՈՒՆ բառը, պրակիս կազմողը չի վերձանել, չնայած գրչագրում առկա են տառերը, որոնք, հիմնականում, համապատասխանում են Հ. Մելքոնյանի վերձանությանը՝ ԵՒ Ի ՄԵՐ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԵՍ: Տողի վերջում ՎԱՍՆ բառից առաջ պարզ փորագրված է ԱՅԼ, թերևս ճիշտ կլիներ ԱՅՍ, ինչպես նշել է կազմողը, սակայն գրչագրում նույնպես գրելով ԱՅՍ:

Ութերորդ տողը Ս. Բարխուդարյանը չի վերձանել, չնայած որոշ բառակապակցություններ առկա են գրչագրում: Այս տողը ներառում ենք Հ. Մելքոնյանի, հիմնականում համոզիչ վերձանությունից՝ երկու ճշտումով. տողի առաջին Ս տառը նա կարդացել է Տ, իսկ վերջում ՇԱՀ տառակապակցությունը՝ ՋԱՀ:

129. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. Իյուսիսային պատին, մուտքից արևելք, նախորդներից ներքև, անարվեստ գրերով և խառն տողերով, 6-7 տող.




:ն]ժ[Ը: (1009) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ / ԵՄ ՄՐ ՍԱՐԳԻՍ
 ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Հ/ԱՆԵՑԻ ՇՈԹԱԻ ԶՈՒՐՍ ՄԻ
 ...ՇԱՀՆՇԱՀ ԳԱԳԿԱ ԱՐԵԻՇ/ԱՏՈՒԹԵԱՆ] ...[ՈՐ ՈՔ
 ՀԱ/ԿԱՌԱԿ] ԿԱ ՆԻՋՈՎԵՒԱԼ / ԵՂԻՑ[Ի] ՅԱՅ :ՅԺԸ:-[ԻՑՆ] (318) ...:

Ծանոթ. Տողերի վերջին մասերում բավականաչափ քարեր հնում թափված են եղել և նոր, ավելի մանր քարերով վերաշարվել է պատը: Մոտավորապես կես մասում մեկ քար նույնպես ընկել է, և այդտեղ մի նոր քար են տեղադրել:

Առաջին տողում, թվականությունից մնացել է Ն տառի ստորին մասը, Ծ-ն՝ ամբողջովին, իսկ վերջին տառից՝ անորոշ գծեր, հավանաբար, Ը տառի մնացորդ, որով կստացվի 1009 թվականը:

Հուշարձանի առավել վատ պահպանված արձանագրությունն է:

130. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատի կենտրոնում և մուտքի բարավորի վրա, արտաքուստ, 9 տող.



† :նԿ: (1011) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ/ՈՑ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ /
 ՏՆ ՍԱՐԳՍԻ ՀԱՅՈՒՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՍ ԵՂԵԻ ԻՆՁ ԳԱԳԿԱ ՇԱՀ/ՆՇՈՒՐԻ,
 ՈՐ ԵՏՈՒ ԶԾԸՄԲԱՔԱՐԻՆ Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ԱԹՈՌՆ Ի ՏՐ ՍԱ /
 ԵՄ ՏՐ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՏՈՒ ԻՇԱՐՏԱԿԻ ԵՒ ԵՂԻ
 ՎԵՒՌ ՅԵՏ ՓՈԽՄԱՆ / ԳԱԳԿԱ ՅՐԱՆՇԽԱՐՀԵՍ :Ե: ԱՐ ԱՐՆԵԼ Ա[Մ]ՄԵՆ ԱՄԻ
 ԱՆԽԱՓԱՆ [ՄԻՆՉ Ի] ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ, ՈՐ ՈՔ ԽԱՓԱՆԵ :ՅԺԸ:-ԻՑՆ (318) /
 ԵՒ ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԱՆԵՆ ԱՅ ՆՁՈՎԱԾ / Է:

Հրատ. Հ. Մելքոնյան, «Լրաբեր», 1983, 5, 61:

Ծանոթ. Հինգերորդ տողի աջ կողմում մի քանի անորոշ տառեր չեն կապվում բովանդակության հետ, հավանաբար, հետագա հավելում է:

7-րդ տողում ՅԱՇԽԱՐՀԵՍ բառից հետո 5-6 տառ եղծված է:

Այս արձանագրությունը միակն է, ուր առկա են կցագրեր: Նախորդ հրատարակչի վերծանության մեջ կան մի շարք տարրնթերցումներ, որոնցից մի քանիսի հետ մենք համաձայն ենք. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ բառից հետո «Հինգերորդ տողի անորոշ տառերը» Հ. Մելքոնյանը կարդացել է ԱԹՈՌՆ Ի ՏՐ ՍԱՐԳԻՍ, հաջորդ տողում ԵՏՈՒ-ից հետո ԻՇԱՐՏԱԿԻ-ը՝ Ի ՇԱԹ: Յոթերորդ տողում ԱՇԽԱՐՀԵՍ բառից հետո նա կարդացել է :Ե: ԱՐ ԱՐՆԵԼ ԱՄ[Մ]ԵՆ, իսկ ԱՆԽԱՓԱՆ-ից հետո կիսեղծ Ց Ի:

131*. Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. արևելյան պատին, արտաքուստ, 1 տող.

ԵՍԱԻ

ԵՍԱԻ:

Ծանոթ. Այս անունը նկատել ենք վիմագրական զննման ժամանակ: Բացառված չէ, որ շինարար վարպետի կամ ճարտարապետի անուն լինի:


Եկեղեցու հյուսիսային որմի արևելյան մասում առկա են եղծված ու անկապակից արձանագրություններ ու դրանց առանձին մասեր (նկ. 131ա): Գ.Մելքոնյանն իր հոդվածում հիշատակում է հյուսիսային որմի բարավորի կամարակապ քարին պահպանված «Թ. ՅԾԸ (909)» թվագիրը (Գ.Մելքոնյան, էջ 58), իսկ նույն որմի արևելյան մասում ելնդատառ, բայց եղծված հետևյալ երկտող վիմագիրը. «ՅՈ...Ս ԾԱՌԱՅ ՍՐ/ԲՈՅՍ ԳՐԻԳՈՐՈՅՍ» (Գ.Մելքոնյան, էջ 65): Վերջինս մենք ևս նկատեցինք, սակայն, վերծանությունը չարունակում է մնալ պայմանական (նկ. 131բ):

ՀՈՌՈՍ

Բնակավայրի պատմամշակութային անցյալը հիմնականում ներկայացված է վաղագույն դարաշրջանների հուշարձաններով: 1990-ական թթ. գյուղի հյուսիսարևելյան սահմանը եզերող բլրաշարքին կատարված հնագիտական պեղումները մեծարժեք հայտնագործություններ ընձեռեցին: Հատկապես մատնանշելի է այն երևույթը, որ պեղումներով բացահայտվեցին տարածաշրջանի պատմության զարգացման «մ.թ.ա. IV հազարամյակի կեսերից մինչև մ.թ. I հազարամյակի կեսերը գոյատևած բոլոր փուլերը, ի դեմս պալեոլիթյան կայանի, վաղ բրոնզի դարաշրջանի բնակավայրի ու դամբարանադաշտի, միջին բրոնզի դարաշրջանի բնակավայրի, ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանների ամրոց, բնակավայր և դամբարանադաշտ, ուրարտական և վաղ միջնադարյան դարաշրջանների ամրոցներ»⁵⁷:

Միջնադարյան հուշարձաններ գյուղում գրեթե չկան. կենտրոնում է գտնվում 1861 թ. կառուցված Ս. Հռիփսիմե եռանավ բազիլիկ եկեղեցին: Կառույցի որմերին պահպանվել են XIX դ. վիմագրեր, որոնցից մեկն ունի պատմական որոշակի հետաքրքրություն. հարկ համարեցինք դրանք զետեղել պրակում:

132*. Ս. ՀՐԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ. հարավային պատին, ներքուստ, մուտքից արևելք, 7 տող.



ՄԲ ՆՈՐԱՅԵՆ ԵԿԵՂԵՑԻՍ Է ՅԻՆՇԱՍԱՅԱԿ... / ՍՈՐՆ Ի ՔՍԻ ՎԱՐՅԱԴԻՆ, ՈՐՔ
 ՅԻՇԱՍԱՅԱԿ ՏԱՑԵ ՍՍԱՅ, ՅԻՆՇԱՍԱՅԱԿ Վ... / ԵՓՐԵՅԻՆ ԵՅԻ ՍՐՓԱԿԵՅԱՅ
 ՀԱՅԻՐԱՅԵՏԻՆ, ԻՆՔՆԱԿԱԿԱԼ ՄԵԾՆ ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈԼԱ Բ/ԱՐԵԲԱՂՏԻՍ,
 ՇՆՈՐՀԻԻ ՏՆ ԱՁԱՏԵՑԱԿԻՔ Ի ՄԵԾԱՅՄԵԾ ՊԱՏԵՐԱՁՍՅԱՅ, / ՔԱՆՁԻ
 ՅԱՆՏԻԱՅ ՊԱՐՍԻՅ ԱՐՔԱՆ ԵՅԻ ՕՍՄԱՆՅՈՅ ՀԱՄԻԹ / ՍՈՒԼԹԱՆ ԵՅԻ ԿԱՐԻՆՈՒ
 ՄԻՆՅԻ Ի ԹԱՎՐԵՁ ԱՐՆՅԱՍԱՐԱԿ ՏԻՐՅԱՊԵՏԱՅ / ԳԸՑԱԳԸՐՕՂ Ի ԱՐՑԱՆԸՍ ...
 ՕՎ ՀԱՆՏԻԲՕՂՅԵ ՏՐՈՒՔ ՈՂՈՐՄԻ...:

Ծանոթ. Արձանագրությունը փորագրված է կարմրավուն ուղղանկյունաձև քարին՝ XIX դարին հատուկ անվարժ գրչությամբ: Այնպիսի տպավորություն է, որ այն օգտագործվել է եկեղեցու պատի շարվածքում՝ իբրև շինաքար: Մեր այս տեսակետը հիմնավորվում է վիմագրում հիշատակված անձանց և իրադարձությունների ժամանակագրության մոտավոր ճշգրտմամբ: Ինչպես վկայում է Ս. Հռիփսիմե եկեղեցու շինարարական արձանագրությունը, այն է՝ եկեղեցին կառուցվել է գյուղի բնակիչների օժանդակությամբ, 1861 թ. (արձ. 134), իսկ խնդրո առարկա վիմագիրը առավելագույնը 1830 թ. ուշ չէ, հետևաբար, թերևս


⁵⁷ Ա. Քալանթարյան, Գ. Մելքոնյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ. (հիմնական արդյունքները), Երևան, 2005, էջ 54:

մեկ այլ շինության (նորաշեն եկեղեցու) պատկանած արձանագիր քարը կրկնակի օգտագործման է ենթարկվել:

Դառնալով վիմագրում վկայակոչված պատմական իրադարձության քննությանը՝ պետք է նշել, որ թե-պետ արձանագրության առաջին և երկրորդ տողերի վերջնամասը եղծված է, սակայն սա գրեթե չի խան-գարում բնագրի բովանդային ամբողջացմանը: Վիմագիրը փաստում է, որ Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսի (1809–1830) օրոք Ռուսաց Նիկոլայ I կայսրը (1825–1855) հաղթական պատերազմներ է մղել ինչպես պարսից, այնպես էլ օսմանյան բանակների դեմ՝ իր տիրապետությունն ընդարձակելով «Կարինու մինչ ի Թավրեզ»: Պատմությունից հայտնի է, որ Նիկոլայ I-ի օրոք է տեղի ունեցել ռուս-պարս-կական պատերազմը, որն ավարտվել է Թուրքմենչայի 1828 թ. երկկողմանի հաշտության պայմանագրով, ըստ որի՝ Պարսկաստանը պաշտոնապես ճանաչեց Երևանի ու Նախիջևանի խանությունների և Օրդու-բադի գավառի միացումը Ռուսաստանին⁵⁸: Ապրիլին բռնկվում է նաև ռուս-թուրքական պատերազմը՝ բալկանյան և կովկասյան ռազմաճակատներով: Ռուսների տևական հաջողություններից հետո, օսման-յան Մահմուդ II սուլթանի (1808–1839) խնդրանքով այն ավարտվում է 1829 թ. Ադրիանապոլսի հաշտու-թյան պայմանագրով, ըստ որի՝ Թուրքիան ճանաչեց Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրով հաստատված Անդրկովկասի միացումը Ռուսաստանին⁵⁹: Ահա հենց այս դեպքերի փաստացի վավերագիրը կարելի է համարել հիշյալ արձանագրությունը, որի թվագրումը պետք է սահմանել 1829-1830 թթ. միջև, քանի դեռ Եփրեմ կաթողիկոսը չէր հրաժարվել գահից:


